ՄԻՋԻՆ  ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

0302 «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ»   ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՐԵՎԱՆ    2009

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

______________________________
(ազգանուն, անուն)

«___»_________20    թ.

______________________________
Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Հայոց լեզվի ուսուցիչ» **ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝** «Հայոց լեզվի դասավանդում»

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝** միջին մասնագիտական
**ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝** հայոց լեզվի ուսուցիչ
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝** միջնակարգ (լրիվ) ընդհանուր
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 3 տարի
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝** առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | ՍԵՊՏԵՄԲԵՐ | | | | 29/9-5/10 | ՀՈԿՏԵՄԲԵՐ | | | 27/10-2/11 | ՆՈՅԵՄԲԵՐ | | | | ԴԵԿՏԵՄԲԵՐ | | | | 29/12-4/1 | ՀՈՒՆՎԱՐ | | | 26/1-1/2 | ՓԵՏՐՎԱՐ | | | 23/2-1/3 | ՄԱՐՏ | | | | 30/3-5/4 | ԱՊՐԻԼ | | | 27/4-3/5 | ՄԱՅԻՍ | | | | ՀՈՒՆԻՍ | | | | 29/6 - 5/7 | ՀՈՒԼԻՍ | | | 27/7-2/8 | ՕԳՈՍՏՈՍ | | | | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 12 6 | 13 19 | 20 26 | | 3 9 | 10 16 | 17 23 | 24 30 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 5 11 | 12 18 | 19 25 | | 2 8 | 9 15 | 16 22 | | 2 8 | 9 15 | 16 22 | 23 29 | | 6 12 | 13 19 | 20 26 | | 4 10 | 11 17 | 18 24 | 25 31 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 6 12 | 13 19 | 20 26 | | 3 9 | 10 16 | 17 23 | 24 31 | | | | | | | |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | : : | : : | = | = | | | | | | | ◇ | ◇ | | | | | | | | | | | | | : : | : : | = | = | = | = | = | = | = | = | = | 35 | 4 | 2 | | | 11 | 52 |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | : : | : : | = | = | | | | | | | | | | ◇ | ◇ | | | | | | | | | | : : | : : | = | = | = | = | = | = | = | = | = | 35 | 4 | 2 | | | 11 | 52 |
| 4 | | | | | | | ◇ | ◇ | ◇ | ◇ | ◇ | ◇ | | | | | | | : : | = | = | ◇ | ◇ | ◇ | ◇ | ◇ | ◇ | X | X | X | X | | | | | | | | | | : : | : : | III | III | III | III | = | = | = | = | = | = | 21 | 3 | 16 | | 4 | 8 | 52 |
| 5 | Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 91 | 11 | 20 | | 4 | 30 | 156 |

| | 0 | ◇ | X | : : | ▲ | III | = |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տեսական ուսուցում | Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | Նախաավարտական, արտադրական պրակտիկա | Մոդուլների ամփոփում | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման | Ամփոփիչ պետական ատեստավո-րում | Արձակուրդ |

## III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 2- րդ կուրս | | 3-րդ կուրս | | 4-րդ կուրս | |
| | | | | | | Այդ թվում | | | | | | | | |
| | | Քնն. | Ստու-գարք | Կուրս. աշխ. | Ընդա-մենը | Տեսակ. ուսուցում | Լաբոր. և գործն. աշխ | Սեմին. պարապ -մունք | 3-րդ կիս. 17 շաբ | 4-րդ կիս. 18 շաբ. | 5-րդ կիս. 17 շաբ. | 6-րդ կիս. 18 շաբ. | 7-րդ կիս. 12 շաբ. | 8-րդ կիս 9 շաբ. |
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 1.1 | Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ | | 3, 4տ | | 72 | | 72 | | 36 | 36 | | | | |
| 1.2 | Տնտեսագիտության հիմունքներ | | 4տ | | 54 | 40 | | 14 | 28 | 26 | | | | |
| 1.3 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 4տ | | 54 | 40 | | 14 | 26 | 28 | | | | |
| 1.4 | Իրավունքի հիմունքներ | | 5տ | | 36 | 28 | | 8 | | | 36 | | | |
| 1.5 | Պատմություն | | 4տ | | 51 | 41 | | 10 | 26 | 25 | | | | |
| 1.6 | Ռուսաց լեզու | | 3, 4տ | | 70 | | 70 | | 34 | 36 | | | | |
| 1.7 | Օտար լեզու | | 3, 4տ | | 70 | | 70 | | 34 | 36 | | | | |
| 1.8 | Ֆիզիկական կուլտուրա | | 3-8 | | 182 | | 182 | | 30 | 30 | 30 | 32 | 36 | 24 |
| 1.9 | | | | | | | | | | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **589** | **149** | **394** | **46** | **214** | **217** | **66** | **32** | **36** | **24** |
| 2. | ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 2.1 | Էկոլոգիայի հիմունքներ | | 4տ | | 36 | 28 | | 8 | | 36 | | | | |
| 2.2 | Քաղաքացիական Պաշտ. և Արտակարգ Իրավիճակ. Հիմունքներ | | 3տ | | 18 | 10 | 8 | | 18 | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **54** | **38** | **8** | **8** | **18** | **36** | | | | |
| 3. | ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | | | | | | |
| 3.1 | Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ | | 4տ | | 54 | 24 | 30 | | 28 | 26 | | | | |
| 3.2 | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 3, 4տ | | 54 | 10 | 44 | | 28 | 26 | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **108** | **34** | **74** | | **56** | **52** | | | | |
| 4. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 4.1 | Մանկական գրականություն | 8 | | | 74 | 50 | 24 | | | | | | 48 | 26 |
| 4.2 | Անտիկ և վերածննդի շրջանի գրականություն | | 6 | | 74 | 56 | 18 | | | | 36 | 38 | | |
| 4.3 | Արտասահմանյան գրականություն | 6 | | | 74 | 54 | 20 | | | | 36 | 38 | | |
| 4.4 | Ռուս գրականություն | | | | 36 | 26 | 10 | | | | | 36 | | |
| 4.5 | Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով | | 4տ | | 108 | 64 | 44 | | 54 | 54 | | | | |
| 4.6 | Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ | | 8 | | 36 | 18 | 18 | | | | | | | 36 |
| 4.7 | Հոգեբանություն | | 7, 8տ | | 108 | 88 | 20 | | | | | | 72 | 36 |
| 4.8 | Մանկավարժությունը՝ իբրև գիտություն և նրա հիմն. հատկությունները | | 8տ | | 36 | 24 | 12 | | | | | | | 36 |
| 4.9 | Երկրագիտություն | | 8տ | | 54 | 42 | 12 | | | | | | 36 | 18 |
| 4.10 | Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում | | 8տ | 7 | 76 | 22 | 54 | | | | | | 46 | 30 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **676** | **444** | **232** | | **54** | **54** | **72** | **112** | **202** | **182** |
| 5. | ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 5.1 | Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն | | 3,4տ | | 94 | 8 | 6 | 80 | 50 | 44 | | | | |
| 5.2 | Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ | 4 | | | 94 | 22 | 12 | 60 | 48 | 46 | | | | |
| 5.3 | Հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն | 4 | | | 72 | 12 | 12 | 48 | 36 | 36 | | | | |
| 5.4 | Բառագիտություն | 4 | | | 108 | 22 | 16 | 70 | 54 | 54 | | | | |
| 5.5 | Բառակազմության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն | | 3,4տ | | 76 | 12 | 10 | 54 | 40 | 36 | | | | |
| 5.6 | Ձևաբանության անուն խոսքի մասեր | | 6տ | | 108 | 32 | 16 | 60 | | | 54 | 54 | | |
| 5.7 | Բայ. նրա քերականական հատկանիշները | 6 | | | 108 | 28 | 12 | 68 | | | 54 | 54 | | |
| 5.8 | Քերականական իմաստ ունեցող կամ սպասարկու խոսքի մասեր | | 5,6տ | | 72 | 16 | 8 | 48 | | | 36 | 36 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5.9 | Նախադասություն. նրա տեսակները | 6 | | | 108 | 32 | 14 | 62 | | | 54 | 54 | | |
| 5.10 | Նախադասության անդամները | 6 | | | 108 | 32 | 14 | 62 | | | 54 | 54 | | |
| 5.11 | Հայոց լեզվի դասավանդման մեթոդական հմտություններ | 8 | | 8 | 62 | 18 | 44 | | | | | | 36 | 26 |
| 5.12 | Հայ հին գրականություն | | 4 | | 36 | 24 | 12 | | | 36 | | | | |
| 5.13 | Հայ գրականությունը 10-12դդ. | | 3 | | 36 | 24 | 12 | | 36 | | | | | |
| 5.14 | Հայ գրականությունը 13-16դդ. | | 4 | | 36 | 18 | 18 | | | 36 | | | | |
| 5.15 | Հայ գրականությունը 17-18դդ. | | 5,6տ | | 54 | 28 | 26 | | | | 24 | 30 | | |
| 5.16 | Հայ գրականությունը 19-րդ դարի առաջին կեսին. | | 5,6տ | | 54 | 34 | 20 | | | | 24 | 30 | | |
| 5.17 | Հայ գրականությունը 19-րդ դարի 50-60-ական թթ. | | 5,6տ | | 54 | 32 | 22 | | | | 24 | 30 | | |
| 5.18 | Հայ գրականությունը 19-րդ դարի 80-90-ական թթ. | | 5,6տ | | 54 | 34 | 20 | | | | 24 | 30 | | |
| 5.19 | Հայ գրականությունը 20-րդ դարի 20-30-ական թթ. | 5 | 6 | | 108 | 72 | 36 | | | | 54 | 54 | | |
| 5.20 | Հայ գրականությունը 1940-80թթ. | 6 | | | 72 | 48 | 24 | | | | 36 | 36 | | |
| 5.21 | Հայ գրականության դասավանդման մեթոդիկա | 8 | 7 | 8 | 62 | 20 | 42 | | | | | | 36 | 26 |
| 5.22 | Գրականության տեսություն | | 6 | | 62 | 16 | 22 | 24 | | | 30 | 32 | | |
| 5.23 | Հայ ժողովրդական բանահյուսություն | | 7,8տ | | 108 | 32 | 10 | 66 | | | | | 72 | 36 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 1746 | 616 | 428 | 702 | 264 | 288 | 468 | 494 | 144 | 88 |
| 6. | ԸՆՏՐՈՎԻ (գրականությունից) | 7 | 8 | | 72 | 20 | 30 | 22 | | | | | 42 | 30 |
| | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ | | | | 31 | | | | 6 | 1 | 6 | 10 | 8 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 91 | | | 3276 | 1301 | 1166 | 778 | 612 | 648 | 642 | 648 | 432 | 324 |
| | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | 300 | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | 36 | 36 | 36 | 36 | 36 | 36 |

| | IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տարիքային հոգեբանություն | | | | ԿԱԲԻՆԵՏՆԵՐ |
| 2 | Վարվելակերպը գործարար հարաբերություններում | | | 1 | ա. հումանիտար առարկաների, |
| 3 | Ընտանեկան հարաբերությունների հիմունքներ | | | 2 | բ. սոցիալ-տնտեսագիտական առարկաների |
| 4 | Միջանձնային հարաբերություններ | | | 3 | գ. հայոց լեզվի և խոսքի մշակույթի, օտար լեզուների |
| | V. ՊՐԱԿՏԻԿԱ | Կիսամյակ | Շաբաթ | 4 | դ.քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների, էկոլոգիայի և կենսագործունեության ապահովության |
| 1. | Ուսումնական առանց տեսական ուսուցման | 4 | 2 | 5 | ե. մաթեմատիկայի |
| 2. | Ուսումնական առանց տեսական ուսուցման | 6 | 2 | 6 | զ. տնտեսագիտության |
| 3. | Առանց տեսական ուսուցման | 7 | 6 | 7 | է. ծրագրավորման |
| 4. | Ուսումնական առանց տեսական ուսուցման | 8 | 6 | 8 | ը. հաշվողական տեխնիկայի |
| 5. | Մասնագիտական | | | 9 | թ. տեղեկատվական տեխնոլոգիաների |
| 6. | Նախաավարտական | 8 | 4 | 10 | ժ. ավարտական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 20 | 11 | ի. մեթոդական |
| | | | | | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ |
| | VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ | | | 1 | ա. համակարգչային |
| | Երկու համալիր քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից | | | 2 | բ. ուսուցման տեխնիկական միջոցների |
| | /հունիսի 22-ից հուլիսի 5-ը շրջանում/ | | | 3 | գ. ցանցային տեխնոլոգիաների |
| | | | | | ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ |
| | | | | 1 | |
| | | | | | ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ |
| | | | | 1 | Մարզադահլիճ |
| | | | | 2 | Մարզահրապարակ |

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում` տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի` յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող` ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում` տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված
նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով` մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել` պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:

8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

**Մոդուլի դասիչը՝** ԸԱԳՀ 4 -09-001

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ՝

Տեսական ուսուցում՝ 24 ժամ
Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

**Գնահատման կարգ.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների ավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.** Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

**Կատարման չափանիշներ՝**

ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

**Կատարման չափանիշներ.**

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.
դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 60 %-ին:

**Մեթոբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

**Կատարման չափանիշներ՝**

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.
գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է գործընկերների նկատմամբ.
զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողն ըստ առաջադրված իրավիճակի ճիշտ է կառուցում միջանձնային հարաբերությունները, կարողանում է հանդես գալ թիմի անդամ՝ համագործակցելով մյուսների հետ, ճիշտ է կողմնորոշվում վիճահարույց հարցերում և դրանց տալիս է համապատասխան լուծումներ կամ պատասխաններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

**Կատարման չափանիշներ՝**

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.
բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի՝ հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Դրսևորել քննադատական մտածողություն:

**Կատարման չափանիշներ՝**

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի՝ հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ

**Ուսումնառության արդյունք 6.** Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

**Կատարման չափանիշներ՝**

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.
բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.
դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.
ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.

զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** ՀՕՀ 4 - 09 - 001

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ
Տեսական ուսուցում՝ 10 ժամ
Գործնական աշխատանք՝ 44 ժամ

**Մուտքային պահանջներ՝** Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

**Ուսումնառության արդյունքները՝** Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. WORD ԾՐԱԳԻՐ (հիմնական տեղեկություններ):
2. Տեքստերի տարրական ֆորմատավորում:
3. Փաստաթղթի պահպանում:
4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում:
5. Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում:
6. Փաստաթղթի տպագրում:
7. Ինտերնետում աշխատելու իմացություն:

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.** WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

**Կատարման չափանիշներ**

ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,
բ. բացել նոր փաստաթուղթ,

գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել՝ տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ,
դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,
ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,
զ. փակել փաստաթուղթը,
է. բացել առկա փաստաթուղթը,
ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:

**Գնահատման միջոց**

Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը: Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում: Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները: Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլատրվում են որոշ անճշտություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**Ուսումնառության արդյունք 2 .** Տեքստերի տարրական ֆորմատավորում:

**Կատարման չափանիշներ**

ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
բ. նշել բառերը և տեքստային հատվածները,
գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝,
դ. կատարել տողերի հավասարեցում,
ե. փոխել միջտողային տարածությունները,
զ.փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,
է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,
ը.փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,
թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,
ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,
ի. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,
լ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ,
խ. փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ,
ծ.ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը,
կ. ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,
հ. պատճենել տեքստը,
ձ. տեղափոխել տեքստը,
ղ. տողադարձել տեքստը,
ճ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:

**Գնահատման միջոց**

Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ: Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ: Ուսանողը բացում է նախօրոք

պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները: Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները: Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները: Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**Ուսումնառության արդյունք 3. Փաստաթղթի պահպանում**

**Կատարման չափանիշներ**

ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,
բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,
գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

**Գնահատման միջոց**

Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ, մուտքագրի մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանի է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը: Կտրվի պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ ուսանողը պետք է կատարի փոփոխություններ: Կֆանձնարարվի է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում՝ առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալներ կատարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**Արդյունք 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում**

**Կատարման չափանիշներ**

ա. պատրաստել աղյուսակ,
բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,
ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,
զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,
է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,
թ. փոխել աղյուսակի գծերի գույնը,
ժ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

**Գնահատման միջոց**

Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի: Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ՝ պահպանելով վերջնական տարբերակը և տպագրում է: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի են նաև որոշ աննշան բացթողումներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 1 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 5. Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում**

**Կատարման չափանիշներ**

ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
գ. գծագրել կանոնավոր պատկերներ,
դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները,
ե.տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ,
զ. պատճենել,
է. պտտել,
ը. շրջել,
թ. փոխել չափերը,
ժ. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
ի. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
լ. գծագրել տեքստային բլոկներ,
խ. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
ծ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
կ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվի երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա: Կտրվի երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ, որի օրինակի վրա պետք է ցուցադրել պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ են կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 6. Փաստաթղթի տպագրում**

**Կատարման չափանիշներ**

ա. նախադիտման ռեժիմում բերթել փաստաթուղթը,
բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,
գ. տպագրել փաստաթուղթը:

**Գնահատման միջոց**

Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն: Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունն ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 7. Ինտերնետում աշխատելու իմացություն**

**Կատարման չափանիշներ**

ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,
բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
գ.իմանալ Ինտերնետային հասցե հասկացությունը,
դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
ժ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
ի. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
լ. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
խ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
ծ. ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
կ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,
հ. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

**Գնահատման միջոց**

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը, ցուցադրել History և Favorites հրամանները և բացատրել: Հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը, բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը, բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական տեղեկատվությունն այդ էջից: Կատարել տեղեկատվության որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները, բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը:

Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որն ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

# Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր   Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 01

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ հայ մանկական գրականության մասին, բացահայտել մանկական գրականության առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 74 ժամ
Դասախոսություն ՝ 50 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 24 ժամ

**Մուտքային պահանջներ՝** Հանրակրթական գիտելիքներ:

**Ուսումնառության արդյունքները՝** Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. Կարողանա ներկայացնել մանկական գրականության նշանակությունը բառապաշարի հարստացման և կրտսեր սերնդի դաստիարակության գործում;
2. Կարողանա ներկայացնել հայ գրականության վերածնության շրջանը, մեսրոպյան առաջին դպրոցների ստեղծումն ու դպրոցական գործը:
3. Կարողանա ներկայացնել հայ մանկագիրներին և նրանց ստեղծագործությունները:
4. Իմանա ռուս և արտասահմանյան մանկական գրող-դասականներին:
5. Կարողանա ներկայացնել թարգմանական գրականության ազդեցությունը հայ մանկական գրականության վրա:

**Գնահատման կարգը**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.** Կարողանա ներկայացնել մանկական գրականության նշանակությունը բառապաշարի հարստացման և կրտսեր սերնդի դաստիարակության գործում:

**Կատարման չափանիշներ**

ա. կարողանում է պատմել մանկական որևէ ստեղծագործություն՝ օգտագործելով տեսական նյութի ընթացքում յուրացրած նոր բառերն ու դարձվածքները,
բ. կարողանում է ներկայացնել մանկական գրականության նշանակությունը երեխաների մտավոր , բարոյական և գեղագիտական դաստիարակության գործում,
գ. կարողանում է ներկայացնել մեսրոպյան առաջին դպրոցների և դպրոցական գործի ընդարձակման կարևորությունը,

դ. կարողանում է ներկայացնել Շնորհալու հանելուկները և «Խրատ ուսումնական մանկանցը» ստեղծագործությունը,
ե. կարողանում է ներկայացնել Մ.Գոշի առակները և Վ. Այգեկցու առակները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է մանկական գրականության նշանակությունը երեխաների մտավոր , բարոյական և գեղագիտական դաստիարակության գործում, Շնորհալու հանելուկները և «Խրատ ուսումնական մանկանցը» ստեղծագործությունը, պատմում է մանկական որևէ ստեղծագործություն՝ օգտագործելով տեսական նյութի ընթացքում յուրացրած նոր բառերն ու դարձվածքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Ս. Գ. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Երևան 1973թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `  6 ժամ
Գործնական պարապմունքներ `  2 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Կարողանա ներկայացնել հայ գրականության վերածնության շրջանը, մեսրոպյան առաջին դպրոցների ստեղծումն ու դպրոցական գործը:

**Կատարման չափանիշներ**

ա. կարողանում է ներկայացնել մեսրոպյան առաջին դպրոցների և դպրոցական գործի ընդարձակման կարևորությունը:
բ.կարողանում է ներկայացնել դպրոցական գործի ծավալումը Բագրատունյաց թագավորության շրջանում / 10-11դարերում/,
գ.կարողանում է ներկայացնել 12-13 դդ. հայ գրողների ստեղծագործությունները՝ իբրև մանկական ընթերցանության նյութ:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է մեսրոպյան առաջին դպրոցների և դպրոցական գործի ընդարձակման կարևորությունը, դպրոցական գործի ծավալումը Բագրատունյաց թագավորության շրջանում / 10-11դարերում/ և 12-13 դդ. հայ գրողների ստեղծագործությունները՝ իբրև մանկական ընթերցանության նյութ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Ս. Գ. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Երևան 1973թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝  8 ժամ
Գործնական աշխատանք՝  2 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Կարողանա ներկայացնել հայ մանկագիրներին և նրանց ստեղծագործությունները:

**Կատարման չափանիշներ**

ա. կարողանում է ներկայացնել հայ մանկագիրներին,նրանց կյանքն ու ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը,

բ. կարողանում է արտահայտիչ ընթերցել ցանկացած մանկական ստեղածագործություն,
գ. վերլուծում է առաջադրված մանկական ստեղծագործությունները, նշում դաստիարակչական, գեղագիտական արժեքը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է հայ մանկագիրներին, նրանց կյանքն ու ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, արտահայտիչ ընթերցում ցանկացած մանկական ստեղածագործություն, վերլուծում առաջադրված մանկական ստեղծագործությունները, նշում դաստիարակչական, գեղագիտական արժեքը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Ս. Գ. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Երևան 1973թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 22 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Իմանա ռուս և արտասահմանյան մանկական գրող-դասականներին:

**Կատարման չափանիշներ**

ա. կարողանում է ներկայացնել ռուս և արտասահմանյան մանկական գրականության դասական ներկայացուցիչներին,
բ. ներկայացնում է ռուս և արտասահմանյան հայտնի մանկագիրների կյանքը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և կարևորությունը հայ մանկական գրականության զարգացման գործում,
գ. վերլուծում է նշանավոր մանկագիրների ստեղծագործությունները, նշում է գեղարվեստական և դաստիարակչական արժանիքները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է ռուս և արտասահմանյան հայտնի մանկագիրների կյանքը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և կարևորությունը հայ մանկական գրականության զարգացման գործում, նշում է գեղարվեստական և դաստիարակչական արժանիքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Ս. Գ. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Երևան 1973թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Կարողանա ներկայացնել թարգմանական գրականության ազդեցությունը հայ մանկական գրականության վրա:

**Կատարման չափանիշներ**

ա.կարողանում է ներկայացնել նշանավոր մանկագիրների թարգմանությունները,
բ.կարողանում է նշել առաջադրված թարգմանությունների լեզվական և ժանրային առանձնահատկությունները,

գ.կարողանում է ներկայացնել ռուս և արտասահմանյան մանկագիրների թարգմանությունների արդյունքում հայ մանկագրության մեջ նոր հերոսների, արտահայտչամիջոցների փոփոխությունն ու հարստացումը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է նշանավոր մանկագիրների թարգմանությունները, ռուս և արտասահմանյան մանկագիրների թարգմանությունների արդյունքում հայ մանկագրության մեջ նոր հերոսների, արտահայտչամիջոցների փոփոխությունն ու հարստացումը, նշում է առաջադրված թարգմանությունների լեզվական և ժանրային առանձնահատկությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Ս. Գ. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Երևան 1973թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՏԻԿ և ՎԵՐԱԾՆՆԴԻ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝**

ՀԼԴ 04 09 02

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ արտասահմանյան գրականության մասին, բացահայտել արտասահմանյան գրականության զարգացման օրինաչափությունները, առանձնահատկությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 74 ժամ
Դասախոսություն ՝ 54 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 20 ժամ

**Մուտքային պահանջներ՝** Հանրակրթական գիտելիքներ:

**Ուսումնառության արդյունքները՝** Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. Կարողանա ներկայացնել անտիկ գրականության պատմական և գեղարվեստական նշանակությունը:
2. Կարողանա ներկայացնել հելլենական շրջանի քնարերգությունը:
3. Կարողանա ներկայացնել Հոմերոսի պոեմների բովանդակությունը:
4. Կարողանա ներկայացնել անտիկ շրջանի առակագրությունը և դրամատուրգիան:
5. Կարողանա բնութագրել Վերածննդի շրջանի գրականությունը:

**Գնահատման կարգը**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում:

**Ուսումնառության արդյունք 1** Կարողանա ներկայացնել անտիկ գրականության պատմական և գեղարվեստական նշանակությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է անտիկ գրականության ակունքները:
բ.կարողանում է ներկայացնել անտիկ գրականության գեղարվեստական նշանակությունը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է անտիկ գրականության ակունքները, անտիկ գրականության գեղարվեստական նշանակությունը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Տրոնսկի, «Անտիկ գրականության պատմություն», Երևան 1949թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                    4 ժամ
Գործնական պարապմունքներ `      2 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Կարողանա ներկայացնել հելլենական շրջանի քնարերգությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. բնութագրում է հելլենական շրջանի քնարերգությունը,
բ. արտասանում է որոշ հատվածներ այդ ստեղծագործություններից:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը բնութագրում է հելլենական շրջանի քնարերգությունը և արտասանում է որոշ հատվածներ այդ ստեղծագործություններից:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Տրոնսկի, «Անտիկ գրականության պատմություն», Երևան 1949թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                    4 ժամ
Գործնական պարապմունքներ `      2 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Կարողանա ներկայացնել Հոմերոսի պոեմների բովանդակությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. կարողանում է ներկայացնել «Իլիական» և «Ոդիսական» պոեմների բովանդակությունը և գեղարվեստական արժանիքները :
բ. կարողանում է ներկայացնել վերոհիշյալ ստեղծագործությունների բովանդակային հիմքերը, ժողովրդայնությունն ու ազգային նշանակությունը:
գ. կարողանում է վերլուծել պոեմները:
դ. պարզաբանում է առաջադրված հատվածները
ե. կարողանում է օգտվել դիցաբանական բառարանից:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը վերարտադրում է «Իլիական» և «Ոդիսական» պոեմների սյուժեն, ներկայացնում է այդ ստեղծագործությունների բովանդակային հիմքերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Տրոնսկի, «Անտիկ գրականության պատմություն», Երևան 1949թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `  8 ժամ
Գործնական պարապմունքներ `  4 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Կարողանա ներկայացնել անտիկ շրջանի առակագրությունը և դրամատուրգիան:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է առակագիրներին և նրանց լեզվամտածողության նշանակությունը աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման վրա:
բ. բնութագրում է անտիկ շրջանի դրամատուրգիայի առանձնահատկությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է առակագիրներին և բնութագրում է անտիկ շրջանի դրամատուրգիայի առանձնահատկությունները (Էսքիլես, Սոֆոկլե, Եվրիպիդես):

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն` Տրոնսկի, «Անտիկ գրականության պատմություն», Երևան 1949թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `  12 ժամ
Գործնական պարապմունքներ `  4 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Կարողանա բնութագրել Վերածննդի շրջանի գրականությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի իտալացի նշանավոր գրողների ստեղծագործությունները,
բ. ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի անգլիացի և ֆրանսիացի նշանավոր գրողների ստեղծագործությունները:
գ. ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի գերմանացի նշանավոր գրողների ստեղծագործությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի իտալացի, անգլիացի, ֆրանսիացի և գերմանացի նշանավոր գրողների ստեղծագործությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն` Երևանի պետական համալսարան, «Արտասահմանյան գրականության պատմություն», Երևան 1982թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `  26 ժամ
Գործնական պարապմունքներ `  8 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը`** ՀԼԴ 04 09 03

**Մոդուլի նպատակը`**

Մոդուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ արտասահմանյան գրականության մասին, բացահայտել արտասահմանյան գրականության զարգացման օրինաչափությունները, առանձնահատկությունները:

**Մոդուլի տևողությունը`** 74 ժամ
Դասախոսություն ` 54 ժամ
Գործնական պարապմունքներ ` 20 ժամ

**Մուտքային պահանջներ`** Հանրակրթական գիտելիքներ:

**Ուսումնառության արդյունքները`** Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը`

1. Կարողանա բնութագրել 8-րդ դարի արտասահմանյան գրականությունը:
2. Ներկայացնել դասական գրողների ստեղծագործությունները:
3. Կարողանա ներկայացնել 19-րդ դարում ռոմանտիզմի արտահայտությունը արտասահմանյան գրականության մեջ:
4. Կարողանա բնութագրել ռոմանտիզմից անցումը ռեալիզմին:
5. Կարողանա ներկայացնել 20-րդ դարի դասական գործիչներին և նրանց ստեղծագործությունները:

Գնահատման կարգը

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.** Կարողանա բնութագրել 8-րդ դարի արտասահմանյան գրականությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է ականավոր ստեղծագործողներին, թվարկում նրանց առավել հայտնի ստեղծագործությունները,
բ. առաջարկվող ստեղծագործության մեջ կարողանում է բնութագրել գրական հերոսներին, թվարկում գեղարվեստական արժանիքները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում ականավոր ստեղծագործողներին, վերլուծում է նրանաց առավել հայտնի ստեղծագործությունները, բնութագրում է գրական հերոսներին, թվարկում գեղարվեստական արժանիքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն` Արտամոնով, «17-18-րդ դդ. արտասահմանյան գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 12 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Ներկայացնել դասական գրողների ստեղծագործությունները:

**Կատարման չափանիշներ**

ա.կարողանում է ներկայացնել դասական գրողների ստեղծագործությունները,
բ.ճիշտ է բացահայտում առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները,
գ.կարողանում է բնութագրել առաջադրված կերպարները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում դասական գրողների ստեղծագործությունները, բացահայտում առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները, վերլուծում այդ երկերը և բնութագրում առաջադրված կերպարները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ Արտամոնով, «17-18-րդ դդ. արտասահմանյան գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 12 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Կարողանա ներկայացնել 19-րդ դարում ռոմանտիզմի արտահայտությունը արտասահմանյան գրականության մեջ:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է ռոմանտիզմի հետևորդ ստեղծագործողներին,
բ. կարողանում է բացահայտել նրանց ստեղծագործությունների կարևորագույն գծերը /կյանքը իդեալին համապատասխան փոխելու ձգտումը/:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է ռոմանտիզմի հետևորդ ստեղծագործողներին, բացահայտում նրանց ստեղծագործությունների կարևորագույն գծերը /կյանքը իդեալին համապատասխան փոխելու ձգտումը/:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ ԵՊՀ հրատարակություն, «Արտասահմանյան գրականության պատմություն, ետհոկտեմբերյան», Երևան 1985թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 10 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Կարողանա բնութագրել ռոմանտիզմից անցումը ռեալիզմին:

**Կատարման չափանիշներ**

ա.կարողանում է ճիշտ ներկայացնել ռեալիզմի մուտքը արտասահմանյան գրականության մեջ,
բ. բնութագրում է ռեալիստ ստեղծագործողների երկերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնումէ ռեալիզմի մուտքը արտասահմանյան գրականությունում և բնութագրում ռեալիստ ստեղծագործողների երկերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:

Անհրաժեշտ գրականություն՝ ԵՊՀ հրատարակություն, «Արտասահմանյան գրականության պատմություն, ետհոկտեմբերյան», Երևան 1985թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 10 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Կարողանա ներկայացնել 20-րդ դարի դասական գործիչներին և նրանց ստեղծագործությունները:

**Կատարման չափանիշներ**

ա. բնութագրում է 20-րդ դարի արտասահմանյան գրականությունը
բ.նշում է պատմական ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների ազդեցությունը գրականության վրա,
գ. վերլուծում է առաջադրված երկերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնումէ ռեալիզմի մուտքը արտասահմանյան գրականությունում և բնութագրում ռեալիստ ստեղծագործողների երկերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն՝ ԵՊՀ հրատարակություն, «Արտասահմանյան գրականության պատմություն, ետհոկտեմբերյան», Երևան 1985թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 10 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ »

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 04

**Մոդուլի նպատակը՝**

Ուսանողներին գիտելիքներ տալ ռուս գրականության զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ
Դասախոսություն ` 26 ժամ
Գործնական պարապմունքներ ` 10 ժամ

**Մուտքային պահանջներ՝** Հանրակրթությունից ստացած գիտելիքները ռուս գրականության մասին :

**Ուսումնառության արդյունքները՝** Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. Ընկալի ռուս ժողովրդական բանահյուսությունը որպես ազգային-հոգևոր մշակույթի մաս,
2. Իմանա ռուս գրականության զարգացման փուլերը՝ հին ռուսական գրականություն և 8-րդ դարի գրականություն,
3. Կարողանա ներկայացնել 19-րդ դարի ռուս գրականությունը,
4. Իմանա 20-րդ դարի ռուս գրականության դասականների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը,
5. Իմանա ժամանակակից ռուս գրականության նոր ուղղությունները:

Գնահատման կարգը

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում:

**Ուսումնառության արդյունք 1.** Ընկալի ռուս ժողովրդական բանահյուսությունը որպես ազգային-հոգևոր մշակույթի մաս:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է ռուս ժողովրդական բանահյուսության տեսակները,
բ.կարողանում է բնութագրել հերոսներին,վերլուծել ստեղծագործությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է ռուս ժողովրդական բանահյուսության տեսակները, բնութագրում հերոսներին, վերլուծում ստեղծագործությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն` Ոսկերչյան, «Ռուս գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 2 ժամ
Գործնական պարապմունքներ ` 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Իմանա ռուս գրականության զարգացման փուլերը` հին ռուսական գրականություն և 8-րդ դարի գրականություն:

**Կատարման չափանիշներ**

ա.Իմանա ռուս գրականության զարգացման փուլերը` հին ռուսական գրականություն և 8-րդ դարի գրականություն,
բ. կարողանա բնութագրել յուրաքանչյուր փուլը` նշելով ականավոր գրողներին և նրանց ստեղծագործությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է ռեֆերատի միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն Ոսկերչյան, «Ռուս գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 4 ժամ
Գործնական պարապմունքներ ` 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 3** Կարողանա ներկայացնել 19-րդ դարի ռուս գրականությունը:

**Կատարման չափանիշներ**

ա.ճիշտ է բացահայտում ռուս գրականությունը 19-20-րդ դարերի սահմանագծում,
բ.ներկայացնում է 19-20-րդ դարերի ռուս դասականների ստեղածագործությունները,
գ. վերլուծում է առաջադրված ստեսծագործությունները, բնութագրում կերպարները,
դ. նշում է առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է ռուս գրականությունը 19-20-րդ դարերի սահմանագծում, վերլուծում է առաջադրված ստեսծագործությունները, բնութագրում կերպարները և նշում առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն Ոսկերչյան, «Ռուս գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 8 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Իմանա 20-րդ դարի ռուս գրականության դասականների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է ներկայացնում 20-րդ դարի ռուս գրականության ընդհանուր բնութագիրը,
բ. ներկայացնում է պատերազմական և հետպատերազմյան շրջանի ռուս գրականությունը,
գ.վերարտադրում է ռուս մեծագույն գրողների ստեղծագործությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է 20-րդ դարի ռուս գրականության ընդհանուր բնութագիրը (պատերազմական և հետպատերազմյան շրջանի) և վերլուծում այդ շրջանի ռուս մեծագույն գրողների ստեղծագործությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն Ոսկերչյան, «Ռուս գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 6 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 2 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Իմանա ժամանակակից ռուս գրականության նոր ուղղությունները:

**Կատարման չափանիշներ**

ա. ներկայացնում է 21-րդ դարի ռուս գրականության զարգացման ուղիները,
բ. վերլուծում է առաջադրված ստեղծագործությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ներկայացնում է 21-րդ դարի ռուս գրականության զարգացման ուղիները, վերլուծում առաջադրված ստեղծագործությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասախոսություն, գործնական աշխատանք:
Անհրաժեշտ գրականություն Ոսկերչյան, «Ռուս գրականության պատմություն»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 6 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 2 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

**Մոդուլի դասիչը** ՝ ՀԼԴ 04 09 05

**Մոդուլի նպատակը**

Այս մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցական երեխաների անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հիգիենայի տարրական կանոնները ուսուցանելու միջոցով ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին՝ երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:

**Մոդուլի տևողությունը ՝ 108 ժամ**

Դասախոսություն ՝ 64 ժամ
Գործնական պարապմունքներ՝ 44 ժամ

**Մուտքային պահանջներ**

Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները:
2. Իմանա երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:
3. Իմանա երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
4. Իմանա մանկական տարածված հիվանդությունները և դրանք ծնող պատճառները:
5. Իմանա երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանա կիրառել դրանք:

**Մոդուլի գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Իմանալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները:

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները,
բ. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները,
գ. օգտվում է երեխաների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, որի միջոցով նա պետք է ներկայացնի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման առանձնահատկությունները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է գործնական աշխատանքի միջոցով՝ տիպօրինակի միջոցով ներկայացնելով սեփական աճի ու զարգացման առանձնահատկությունները :

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը օգտվելով երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակից կատարում է ճիշտ մեկնաբանություններ: Թույլատրվում են աննշան շեղումներ ճիշտ պատասխանից:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, ցուցապաստառներ, նկարներ, համապատասխան գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

| | |
|---|---|
| Դասախոսություն ՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ ՝ | 2 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Իմանալ երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:

**Կատարման չափանիշները**

ա.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս կմախքի, մկանների տեղն ու կառուցվածքը և գիտի հենաշարժիչ համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
բ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս սիրտ-անոթային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի սիրտ-անոթային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
գ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս շնչառական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի շնչառական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
դ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մարսողական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի մարսողական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
ե.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս միզազատական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի միզազատական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
զ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս ներզատիչ գեղձերի տեղը և գիտի նրանց կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
է. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս աղջիկների և տղաների սեռական օրգանների տեղն ու կառուցվածքը և սեռական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
ը. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս նյարդային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի նյարդային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
թ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս վերլուծիչների տեղն ու կառուցվածքը
ժ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մաշկի կառուցվածքը և մաշկի կառուցվածքի տարիքային առանձնահատկու
թյունները:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կպահանջվի մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ցույց տալ կատարման չափանիշներով սահմանված օրգանների և դրանց համակարգերի տեղն ու կառուցվածքային առանձնահատկությունները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է ցույց տալիս տվյալ օրգանի տեղ ցուցապաստառի կամ մուլյաժի վրա և ճիշտ է բացատրում նրանց կառուցվածքային առանձնահատկությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի ներքին օրգանների մուլյաժ, ցուցապաստառներ, համապատասխան գրականություն: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի ներքին օրգանների էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն ՝ | 20 ժամ |

Գործնական պարապմունքներ `          16 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Իմանալ երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները

**Կատարման չափանիշները**

ա. ճիշտ է ներկայացնում կմախքի և մկանների ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
բ. ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
գ. ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
դ. ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
ե. ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
զ. ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
է. ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական օրգանների սեռական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
ը. ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
թ. ճիշտ է ներկայացնում վերլուծիչների ֆիզիոլոգիան,
ժ. ճիշտ է ներկայացնում մաշկի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները,
ի. ճիշտ է բացատրում նյութերի և էներգիայի փոխանակության տարիքային առանձնահատկությունները,
լ. ճիշտ է բացատրում բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմը երեխաների մոտ:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի օրգանների ֆիզիոլոգիային վերաբերող էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `          20 ժամ
Գործնական պարապմունքներ `          10 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.**

Իմանալ մանկական տարածված հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները:

**Կատարման չափանիշները**

Ուսանողը`
ա. գիտի մանկական տարածված հիվանդությունների անվանումները և ճիշտ է ներկայացնում այդ հիվանդությունների հիմնական ախտանիշները,
բ. գիտի հիվանդությունների առաջացման, տարածման և կանխման ընդհանուր մեխանիզմը:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կհանձնարարվի կատարել գործնական աշխատանք: Նրան կտրվեն մանկական տարածված հիվանդությունների հիմնական ախտանիշները, որոնց միջոցով ուսանողը պետք է անվանի այդ հիվանությունը:
Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին և լիարժեք գիտի մանկական տարածված հիվանդություններն ըստ նրանց ախտանիշների:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, նկարներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, համակարգչային տեխնիկա: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել հիվանդությունների ախտանիշներին, դրանց կանխարգելմանը նպատակաուղղված միջոցառումներին վերաբերող տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 6 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.**

Իմանալ երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանալ կիրառել դրանք:

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝
ա.ճիշտ է բացատրում հիգիենայի՝ որպես առողջության պահպանման և ամրապնդման գիտության նպատակը,
բ.ճիշտ է ներկայացնում երեխայի առողջությունը ամրապնդող և թուլացնող գործոնները,
գ.գիտի հենաշարժիչ համակարգի դեֆորմացիայի պատճառները և ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ձևերը,
դ.ճիշտ է ներկայացնում հիգիենիկ ռեժիմի կազմակերպումը վարակիչ հիվանդությունների ժամանակ,
ե.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի և սննդի ռեժիմի նկատմամբ հիգիենիկ պահանջները,
զ.ճիշտ է կիրառում աշխատանքի և հանգստի հերթագայումը ուսուցման գործընթացում,
է. ճիշտ է հաշվում երեխայի պուլսը, շնչառության հաճախականությունը,
թ. արյան ճնշումը չափելու գործիքով ճիշտ է չափում երեխայի արյան ճնշումը,
ժ. ճիշտ է ներկայացնում երեխայի հագուստին և կոշիկին ներկայացվող հիգիենիկ պահանջները,
ի. ճիշտ է ներկայացնում մաշկի,մազերի և եղունգների խնամքի հիգիենայի կանոնները,
լ. ճիշտ է ներկայացնում ուսումնական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների 1, 2. 4, 5, 9, 10, 11 կետերի և կհանձնարարվեն գործնական աշխատանքներ ըստ կատարման չափանիշների 3, 6, 7, 8 կետերի:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին, ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ձևերը, ճիշտ է կազմում աշխատանքի և հանգստի հերթագայման պլանը, ճիշտ է հաշվում պուլսը, շնչառության հաճախականությունը, ճիշտ է շահագործում արյան ճնշումը չափելու գործիքը և ճիշտ է չափում արյան ճնշումը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, վարկյանաչափ, արյան ճնշումը չափիլու գործիք: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ, ցուցադրել տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 14 ժամ
Գործնական պարապմունքներ ` 12 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 06

**Մոդուլի նպատակը**

Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցանման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Դասախոսություն ՝ 18 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 18 ժամ

**Մուտքային պահանջներ**

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունները:
2. Իմանա էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները:
3. իմանա էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը,
4. դրսևորի էկոլոգիական վարքագիծ ամենօրյա գործունեության մեջ:

**Մոդուլի գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվելու է սահմանված յուրաքանչյուր արդյունքի համար չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում:

**Ուսումնառության արդյունք 1.**

Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները

**Կատարման չափանիշները**

ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիան որպես բնագիտական, սոցիալական գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ,
բ. ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա,
գ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական հիմնական հասկացությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է սահմանում էկոլոգիան որպես գիտություն, գիտի նրա կապն այլ գիտությունների հետ, կարողանում է բացատրել էկոլոգիական տարբեր գործոնների փոխազդեցության մեխանիզմը, տարբերակում է էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                4 ժամ
Գործնական պարապմունքներ `      4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.**

Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները,
բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդիրի էությունը,
գ. գիտի ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ՀՀ «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը,
դ. գիտի անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր Երկրագնդի հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց ծնող պատճառների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է թվարկում ժամանակակից հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, գիտի «Կարմիր գրքի» նշանակության ու անձի էկոլոգիական իրավունքների ու պարտականությունների մասին:
Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով:
Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, մասնավորապես ՀՀ «Կարմիր գիրքը», անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                6 ժամ
Գործնական պարապմունքներ `      4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը,
բ. գիտի էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ,
գ. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական դաստիարակության նպատակի, բովանդակության ու նշանակության մասին: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, սահմանում է էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, կարողանում է ընկալել էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, կարևորում է էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ:
Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների, ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 8 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.**

Դրսևորել էկոլոգիական վարքագիծ ամենօրյա գործունեության մեջ:

**Կատարման չափանիշները՝**

Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կհանձնարարվեն իրավիճակային խնդիրներ, որոնց նա պետք է տա համապատասխան լուծումներ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է դերային խաղի կամ ուսուցման այլ ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը իրավիճակային խնդիրը ճիշտ է լուծում կամ տալիս է անհրաժեշտ հիմնավորում իր ենթադրյալ գործողությունների իրականացման համար:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գրենական պիտույքներ, պինդվանդ, ֆլիպչարթ, պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր: Հնարավորության դեպքում ուսումնական գործընթացը ցանկալի է կազմակերպել լսարանից դուրս՝ բնության գրկում, արտադրական կազմակերպությունում, այլուր:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Գործնական պարապմունքներ ՝ 6 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 07

**Մոդուլի նպատակը**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեկանի զարգացման ընդհանուր օրինաչափությունների, գործընթացների, որակների և վիճակների մասին, ինչպես նաև ձևավորել դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

Դասախոսություն ՝ 84 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 24 ժամ

**Մուտքային պահանջներ**

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները,
2. Իմանալ անձը և ճանաչել նրա գործունեության ձևերը,
3. Իմանալ անձի ճանաչողական (իմացական) գործընթացները,
4. Իմանալ անձի գործունեության հուզակամային ոլորտը,
5. Իմանալ աձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները,
6. Իմանալ մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ:

**Մոդուլի գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները:

**Կատարման չափանիշները**

ա. ճիշտ է բացատրում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման հիմնական փուլերը,
բ. ճիշտ է բացատրում հոգեբանության ուսումնասիրության մեթոդները անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ,
գ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, ֆունկցիաները և հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը,
դ. ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:
Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված կամ եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով: Ուսանողը պետք է լիարժեք ներկայացնի հոգեբանության ուսումնասիրության մեթոդները, կիրառի դրանք երեխայի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 14 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.**

Իմանալ անձը և ճանաչել նրա գործունեության ձևերը:

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն և մարդ հասկացությունները և ճանաչում է անձին որպես օբյեկտ և սուբյեկտ,
բ. ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում
գ. ճիշտ է ներկայացնում տարիքին բնորոշ գործունության առաջատար ձևը (խաղ, աշխատանք, ուսումնառություն),
դ.ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և բավարար ներկայացված են անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում, տարիքին բնորոշ գործունության առաջատար ձևը, անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 14 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Իմանալ անձի ճանաչողական (իմացական) գործընթացները.

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, նրա տեսակները, հիմնական որակները, դպրոցականի ուշադրությունը, որպես ճանաչողաիմացական գործընթաց:
բ. ճիշտ է ներկայացնում զգայությունը, նրա առանձնահատկությունները,տեսակները դպրոցականի զգայությունները,
գ. ճիշտ է ներկայացնում ընկալումները, նրա տեսակները, առանձնահատկությունները և նրանց իմացական դերը,
դ. ճիշտ է ներկայացնում հիշողությունը, նրա տեսակները,հիմնական գործընթացները և դպրոցականի հիշողությունը,որպես ճանաչողաիմացական գործընթաց,
ե. ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացներից երևակայությունը, նրա տեսակները, դպրոցականի տարիքի երեխաների երևակայական զարգացումը,
զ. ճիշտ է ներկայացնում խոսքը որպես հաղորդակցման միջոց, նրա տեսակները և զարգացնել դպրոցական տարիքի երեխաների խոսքը,
է. ճիշտ է բացատրում մտածողությունը, նրա հիմնական գործընթացները և դպրոցականի մտածողությունը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի ուշադրությունը, ընկալումները, ուշադրությունը, զգայությունը, նրանց տեսակները, հիմնական որակները, կրտսեր դպրոցականի ճանաչողաիմացական գործընթացը, նրա առանձնահատկությունները, տեսակները, կրտսեր դպրոցականի զգայությունները, խոսքը որպես հաղորդակցման միջոց:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 14 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.**

Իմանալ անձի գործունեության հուզակամային ոլորտը:

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզակամային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները,
բ. ճիշտ է բացատրում հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները,
գ. ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական ֆունկցիաները.
դ. ճիշտ է ներկայացնում հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով:
Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի հուզակամային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները, հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները, կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական ֆունկցիաները, հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                              14 ժամ
Գործնական պարապմունքներ `           4 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.**

Իմանալ աձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները:

**Կատարման չափանիշները՝**

ա.ճիշտ է ներկայացնում հոգեկան որակներից խառնվածքը,դրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխան տիպերը,
բ.ճիշտ է բացատրում բնավորությունը, դրա դրսևորումները, գծերը և դպրոցականի տարիքի երեխաների բնավորությունը,
գ.ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, դրանց դրսևորման պայմանները, տեսակները և դպրոցականի ընդունակությունները,
դ.ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների կառուցվածքը, ֆունկցիաները և տեսակները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով:
Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, և անհատական կամ խմբային նախագծերի ներկայացման ժամանակ լիարժեք ներկայացված են խառնվածքը նրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխան տիպերը, բնավորությունը, նրա դրսևորումները, գծերը, ընդունակությունները, նրանց դրսևորման պայմանները, տեսակները, դիրքորոշումների կառուցվածքը, ֆունկցիաները և տեսակները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն `                              14 ժամ
Գործնական պարապմունքներ `           4 ժամ

**Ուսումնառության արդյունք 6.**

Իմանալ մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ:

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է բացատրում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, դրա մեթոդներն ու սկզբունքները,
բ. ճիշտ է բացատրում տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները,
գ. ճիշտ է ներկայացնում ուսուցչի մանկավարժական ընդունակությունները, կարողությունները և հմտությունները,
դ. ճիշտ է ներկայացնում ուսուցչի անձի ազդեցությունը դպրոցականների անձի ձևավորման վրա:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, նրա մեթոդներն ու սկզբունքները, տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 14 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 08

**Մոդուլի նպատակը**

Այս մոդուլը նախատեսված է «Հայոց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ մանկավարժության առարկայի, խնդիրների, հիմնական գործառույթների և հասկացությունների, ինչպես նաև մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապի մասին:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Դասախոսություն ՝ 24 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 12 ժամ

**Մուտքային պահանջներ**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է դպրոցում լիարժեք տիրապետի «Աշխարհագրություն» և «Պատմություն» առարկաները՝ միջնակարգ դպրոցի ծրագրերի ծավալներով:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Գիտի Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին,
2. Գիտի Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին,
3. Գիտի մեր երկրի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց անուններ, կարդացած լինի նրանց հայտնի ստեղծագործություններից մի քանիսը:

Մոդուլի գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին:

**Կատարման չափանիշները**

ա. քարտեզի վրա ճիշտ է ցույց տալիս Հայաստանը,
բ. ճիշտ է նկարագրում երկրի բնակլիմայական պայմանները,
գ. ճիշտ է մեկնաբանում երկրի պատմական դեպքերը,
դ. ճիշտ է ներկայացնում երկրի մշակույթը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով, որի ընթացքում ուսանողը պետք է ճիշտ ցույց տա Հայաստանը, նկարագրի երկրի բնակլիմայական պայմանները, մեկնաբանի Հայաստան երկրի պատմական դեպքերը, ներկայացի երկրի մշակույթը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկ, քարտեզ, ինչպես նաև օգտվել պատմական գրականությունից:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 8 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին:

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է ներկայացնում մեր երկրի մշակութային կապերը,
բ. ճիշտ է պատկերացնում երկրի կրթական համակարգը,
գ. կարողանում է ներկայացնել Հայաստանի քաղաքական և տնտեսական կապերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով՝ համապատասխան աշխարհագրական քարտեզների պարտադիր օգտագործմամբ՝ համեմատական զուգահեռներ անցկացնելով իր երկրի հետ: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է մեր երկրի մշակութային կապերը, մանրամասներ է ներկայացնում երկրի կրթական համակարգի վերաբերյալ, ներկայացնում է Հայաստանի քաղաքական և տնտեսական կապերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական գրականություն, ինչպես նաև համապատասխան քարտեզների կիրառություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ` 8 ժամ
Գործնական պարապմունքներ ` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի մեր երկրի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց անուններ, կարդացած լինի նրանց հայտնի ստեղծագործություններից մի քանիսը:

**Կատարման չափանիշները՝**

ա. ճիշտ է թվարկում պատմական վայրերի անունները,
բ. կարողանում է թվարկել նշանավոր մարդկանց անունները,
գ. ճիշտ է թվարկում աշխարհահռչակ գրողների անուններն ու ստեղծագործությունները,
դ. ճիշտ է մեկնաբանում նրանց ստեղծագործությունները,
ե. օբյեկտիվորեն քննադատում, գնահատում է նրանց գաղափարները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցման միջոցով, ուսանողին կտրվեն հարցեր՝ թվարկել Հայաստանի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց, աշխարհահռչակ գրողների անունները, մեկնաբանել և օբյեկտիվորեն քննադատել ու գնահատել վերջիններիս ստեղծագործությունները: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական գրականություն: Ուսուցման ընթացքում բերվում են իրական, գործող կրթական համակարգի առանձնահատկությունների օրինակներ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Դասախոսություն ՝ 8 ժամ
Գործնական պարապմունքներ ՝ 4 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 09

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսված է «Հայոց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի աշխարհագրական դիրքի, պատմության, մշակույթի, երկրի քաղաքական և տնտեսական կապերի կարևորության, տվյալ երկրի պատմական վայրերի և նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ
Տեսական աշխատանք՝ 42 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է դպրոցում լիարժեք տիրապետի «Աշխարհագրություն» և «Պատմություն» առարկաները՝ միջնակարգ դպրոցի ծրագրերի ծավալներով:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Գիտի Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին,
2. Գիտի Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին,
3. Գիտի մեր երկրի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց անուններ, կարդացած լինի նրանց հայտնի ստեղծագործություններից մի քանիսը:

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին:

**Կատարման չափանիշներ**

ա. քարտեզի վրա ճիշտ է ցույց տալիս Հայաստանը,
բ. ճիշտ է նկարագրում երկրի բնակլիմայական պայմանները,
գ. ճիշտ է մեկնաբանում երկրի պատմական դեպքերը,
դ. ճիշտ է ներկայացնում երկրի մշակույթը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով, որոնց ընթացքում տրվում են հարցեր Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմաների, պատմական դեպքերի և մշակույթի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե սովորողը գիտի անհրաժեշտ նյութը, կարողանում է կատարել համապատասխան համեմատություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկ, քարտեզ, ինչպես նաև օգտվել պատմական գրականությունից:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում` 14 ժամ
Գործնական աշխատանք` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է ներկայացնում մեր երկրի մշակութային կապերը,
բ. ճիշտ է պատկերացնում երկրի կրթական համակարգը,
գ. կարողանում է ներկայացնել Հայաստանի քաղաքական և տնտեսական կապերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով` ուսանողը ներկայացնում է Հայաստանի կրթական համակարգը, մշակութային, քաղաքական և տնտեսական կապերը: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական գրականություն, ինչպես նաև համապատասխան քարտեզների կիրառություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում` 14 ժամ
Գործնական աշխատանք` 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Ներկայացնել ուսումնասիրվող օտար լեզվի երկրի կրթական համակարգը` համեմատելով իր երկրի հետ:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է թվարկում պատմական վայրերի անունները,
բ. կարողանում է թվարկել նշանավոր մարդկանց անունները,
գ. ճիշտ է թվարկում աշխարհահռչակ գրողների անուններն ու ստեղծագործությունները,
դ. ճիշտ է մեկնաբանում նրանց ստեղծագործությունները,

ե. օբյեկտիվորեն քննադատում, գնահատում է նրանց գաղափարները:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցման միջոցով, ուսանողը պետք է թվարկի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց, աշխարհահռչակ գրողների անունները, ինչպես նաև ճիշտ է մեկնաբանում նրանց ստեղծագործությունները՝ քննադատում և ներկայացնում է սեփական գաղափարները դրանց վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 14 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 10

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսված է «Հայոց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակության, տեսակների և մեթոդների, գնահատման գործող համակարգի հիմնախնդիրների մասին, ձևավորելով ընթացիկ՝ ուսուցանող, պարտադիր գրանցման միավորային, ամփոփիչ գնահատման և կիսամյակային ու տարեկան գնահատականներ ձևավորելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 76 ժամ

Տեսական աշխատանք՝ 22 ժամ
Գործնական աշխատանք՝ 54 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Մուտքային պահանջներ չկան:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Գիտի առարկայի պետական չափորոշչի պահանջները:
2. Գիտի ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակությունը:
3. Գիտի գնահատման սկզբունքները, տեսակները, գործառույթները:
4. Կատարել ընթացիկ, ամփոփիչ գնահատում, ձևավորել կիսամյակային ու տարեկան գնահատականներ:
5. Իմանալ ՀՀ գնահատման չափորոշիչների և ծրագրերի պահանջները:
6. Գիտի գնահատման արդյունքների սանդղակավորման նպատակի հայեցակարգը:

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի առարկայի պետական չափորոշչի պահանջները:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է մեկնաբանում պետական չափորոշիչների պահանջները ուսումնառության արդյունքների ստուգման համար,
բ. ճիշտ է բացատրում ուսումնառության արդյունքների՝ ըստ ստուգման միավորային սանդղակի,
գ. ճիշտ է կիրառում առարկայական ծրագրում ներկայացված գնահատման ժամանակակից ձևերը:

**Գնահատման միջոց**

Գրավոր ներկայացնել թեստավորման, չափման, գնահատման և արժևորման ընթացակարգերը և նշել դրանց տարբերությունները:
Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետի անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվի՝ կիրառելով ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդուն մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը ունկնդրի ուսումնառությունն է: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկել նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակությունը:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է բացատրում վերահսկողության տեսակները, բովանդակությունը, մեթոդները և մանկավարժական պահանջները,
բ. ճիշտ է ձևակերպում, չափում, գնահատում և արժևորում հասկացությունները,
գ. ճիշտ է ներկայացնում լեզվի գնահատման առանձնահատկությունները՝ ըստ խոսքային գործունեության տեսակների:

**Գնահատման միջոց**

Ուսանողին կտրվի բազմակի ընտրությամբ հարցաշար, որտեղ կպահանջվի տրված ուսումնառության պատակներին համապատասխանեցնել գնահատման միջոցները: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվեն՝ կիրառելու ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդուն մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը հանդիսանում է ունկնդրի ուսումնառությունը: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկելու նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի թեմաները դասավանդելու համար առաջարկվող մեթոդներ կարող են լինել մտքերի տարափը, ԽԻԿ, փոքր խմբերով աշխատանքը, դերային խաղը, բաց բանավեճը, դեպքի ուսումնասիրությունը, դասախոսությունը և այլն: Առանձին սովորողների ցանկության դեպքում կխրախուսվի ուսումնական թղթապանակի օգտագործումը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման

աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի գնահատման սկզբունքները, տեսակները, գործառույթները:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է ներկայացնում գնահատման սկզբունքները /օբյեկտիվություն, արդարություն, հուսալիություն, անկողմնակալություն, հավաստիություն, հիմնավորվածություն, թափանցիկություն…/,
բ. ճիշտ է բացատրում հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատում տեսակները,
գ. ճիշտ է բացատրում գնահատման գործառույթները,
դ. ճիշտ է գիտակցում գնահատման նոր համակարգի կարևորությունը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցման միջոցով, արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գնահատման սկզբունքները /օբյեկտիվություն, արդարություն, հուսալիություն, անկողմնակալություն, հավաստիություն, հիմնավորվածություն, թափանցիկություն…/, բացատրում է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատման տեսակները, գնահատման գործառույթները, գնահատման նոր համակարգի կարևորությունը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվեն՝ կիրառելով ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդում մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը հանդիսանում է ունկնդրի ուսումնառությունը: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկել նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի թեմաները դասավանդելու համար առաջարկվող մեթոդներ կարող են լինել մտքերի տարափը, ԽԻԿ, փոքր խմբերով աշխատանքը, դերային խաղը, բաց բանավեճը, դեպքի ուսումնասիրությունը, դասախոսությունը և այլն: Առանձին սովորողների ցանկության դեպքում կխրախուսվի ուսումնական թղթապանակի օգտագործումը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.**

Կատարել ընթացիկ, ամփոփիչ գնահատում, ձևավորել կիսամյակային ու տարեկան գնահատականներ:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է գնահատում աշակերտներին բալային համակարգով,
բ. ճիշտ է հասկանում գնահատման սկզբունքները և առանձնահատկությունները ըստ առաջադրանքների բարդության աստիճանների,
գ. նպատակային և ճիշտ է կատարում ընթացիկ գնահատումը,
դ. նպատակային և ճիշտ է կատարում ամփոփիչ գնահատում,
ե. ճիշտ է որոշում կիսամյակային ու տարեկան գնահատականները:

**Գնահատման միջոց**

Գործնական աշխատանք դեպքի ուսումնասիրության միջոցով: Կատարել հետևյալ ընթացակարգերը կատարողականը բարելավելու համար՝

- բացահայտել սխալները
- ուղղել սխալները
- հետադարձ կապի ապահովման ընթացքը/ռազմավարությունները
- ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը

Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն: Գործնական աշխատանքների համար մշակված անկետաների, հարցաթերթիկների և պրակտիկայում կիրառվող այլ միջոցների նմուշօրինակներ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.**

Իմանալ ՅՅ գնահատման չափորոշիչների և ծրագրերի պահանջները:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է բացատրում ուսումնառության արդյունքների ստուգման միավորային սանդղակով գնահատման համակարգը,
բ. ճիշտ է կիրառում առարկայական չափորոշիչները ուսումնառության արդյունքների ստուգման համար,
գ. ճիշտ է կիրառում առարկայական ծրագրում ներկայացված գնահատման ժամանակակից ձևերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գնահատման սանդղակի միջոցով նախագծերի պաշտպանությունից հետո:
Ուսուցման ընթացքում ուսանողին հանձնարարվում է 3 հետազոտական նախագիծ՝

- ներկայացնել գնահատման արդյունքների սանդղակավորումը և առաջադիմության վիճակագրության պատկերագրումը.
- ներկայացել գնահատման նոր մոտեցումները. գնահատման սանդղակը (ռուբրիկ), ուսումնական թղթապանակ
- ներկայացնել Եվրոպական լեզվական թղթապանակի (ԵԼԹ) բովանդակությունը և կառուցվածքը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասավանդողը պետք է կարողանա գնահատման եղանակները համապատասխանեցնել իր կողմից օգտագործվող ուսուցման/ուսումնառության մեթոդներին, կարողանա մշակել գնահատման մեթոդներ և հիմնավորել ստացված արդյունքները, կարողանա դրսևորել անհատական մոտեցում գնահատման ժամանակ, օգտագործի սովորողի ինքնագնահատման և համակուրսեցու գնահատման մեթոդներ, կիսվի սովորողի առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությունը սովորողի, մանկավարժական կոլեկտիվի, ծնողների հետ:
Սովորողները պետք է հասկանան որ իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար և գնահատումը իրենց առաջընթացի մասին տեղեկատվություն է, որը կարող են օգտագործել այն բարելավելու համար:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Ուսումնառության արդյունք 6.**

Գիտի գնահատման արդյունքների սանդղակավորման նպատակի հայեցակարգը:

**Կատարման չափանիշներ**

ա. ճիշտ է ներկայացնում կիսամյակային և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորումը,
բ. ճիշտ է ներկայացնում գնահատման արդյունքների սանդղակավորումը և առաջադիմության վիճակագրության պատկերագրումը,
գ. ճիշտ է կատարում գնահատումների և գնահատականների գրանցումը և հաշվառումը,
դ. ճիշտ է կիրառում գնահատման նոր մոտեցումները. գնահատման սանդղակը (ռուբրիկ), ուսումնական թղթապանակը,
ե. ճիշտ է ներկայացնում Եվրոպական լեզվական թղթապանակի բովանդակությունը և կառուցվածքը,
զ. ճիշտ է կիրառում ԵԼԹ-ն Եվրախորհրդի լեզվաքաղաքականության և լեզվակրթության համատեքստում:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է կիսամյակային և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորման, գնահատման արդյունքների սանդղակավորման և առաջադիմության վիճակագրության պատկերագրման, գնահատումների և գնահատականների գրանցման և հաշվառման, գնահատման նոր մոտեցումների ճիշտ կիրառման պարագայում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Դասավանդողը պետք է կարողանա գնահատման եղանակները համապատասխանեցնել իր կողմից օգտագործվող ուսուցման/ուսումնառության մեթոդներին, մշակել գնահատման մեթոդներ և հիմնավորել ստացված արդյունքները, կարողանա դրսևորել անհատական մոտեցում գնահատման ժամանակ, օգտագործի ուսանողի ինքնագնահատման և համակուրսեցու գնահատման մեթոդները:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

# ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09 01

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլը մշակվել է հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոնները տիրապետելու, ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կարողություններ և հմտությունները ուսուցանելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 94 ժամ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ
Սեմինար՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 80 ժամ

**Մուտքային պահանջները՝**

այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա հայերենի հնչյունական համակարգի մասին, իմանա նրա առանձնահատկությունները, հետագա փոփոխությունները:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Գիտի հայերենի ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության կանոնները:
2. Գիտի հայերենի երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները:
3. Գիտի բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության կանոնները:

**Գնահատման կարգը՝**

մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի հայերենի ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության կանոնները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է կատարել է-ե ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, կազմել և վերլուծել բառակազմական պատկեր,
բ. կարողանում է կատարել օ-ո ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ,
գ. կարողանում է կատարել ը ձայնավորի ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ,
դ. կարողանում է անսխալ գրել ձայնավորների ուղղագրության վերաբերյալ թելադրություններ, թեստային աշխատանքներ, կազմել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ լրացնել բաց թողնված ուղղագրական արժեք ներկայացնող ձայնավոր հնչյունները:
Արդյունքը համարվում է դրական՝ կատարման չափանիշները հիմնականում բավարարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի հայերենի երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է հայերենի երկհնչյունները և երկձայնավորները,
բ. կարողանում է կատարել *յա-յե-յո* երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, ճիշտ գրել և արտասանել անձնանունները ու տեղանունները,
գ.կարողանում է կատարել *յ* ձայնանակապի ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ,
դ.կարողանում է կազմել տրված բառերի բառակազմական պատկերը, անսխալ գրել թելադրություններ՝ երկհնչյունների ու ձայնակապի ուղղագրության վերաբերյալ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ լրացնել բաց թողնված երկհնչյունները և երկբարբառներն ու եռաբարբառները, կստուգվի երկհնչյունների արտաբերումը՝ նախօրոք մշակված տեքստի ընթերցանության միջոցով: Արդյունքը համարվում է դրական՝ կատարման չափանիշները հիմնականում բավարարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 20 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության կանոնները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է կատարել եռաշարք բաղաձայնների ***(բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ջ-ճ-չ, ձ-ծ-ց)*** ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ,

բ. կարողանում է կատարել երկշարք բաղաձայնների ***(զ-ս, ժ-շ, վ-ֆ, ղ-խ, ն-մ, ր-ռ)*** ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ,

գ. կարողանում է կատարել ***եվ (և)*** ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ,

դ. կարողանում է կատարել կրկնակ բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ,

ե. կարողանում է անսխալ գրել բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ թելադրություններ, կազմել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ կազմել հայերենի երկշարք և եռաշարք բաղաձայնների գծապատկերը, լրացնել տեքստում առկա ուղղագրական արժեք ներկայացնող բաց թողնված բաղաձայն հնչյունները, նյութի ընթերցման միջոցով ստուգել բաղաձայնների ճիշտ արտասանությունը: Արդյունքը համարվում է դրական՝ կատարման չափանիշները հիմնականում բավարարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 50 ժամ: |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09 02

**Մոդուլի նպատակը՝**

մոդուլը մշակվել է հնչյունաբանության թեմայով գիտելիքները խորացնելու միջոցով գործնական կարողությունները կատարելագործելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 94 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 22 ժամ |
| Սեմինար՝ | 12 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 60 ժամ |

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՀԼԴ - 04 09 01 մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Իմանա հայոց լեզվի ծագումն ու զարգացման փուլերը (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ արևելահայ եվ արևմտահայ), բարբառների հիմնական առանձնահատկությունները:
2. Կարողանա դասակարգել ձայնավոր եվ բաղաձայն հնչյունները, կատարել հնչյունաբանական վերլուծություն:
3. Կարողանա վանկատել տրված բառերը:
4. Իմանա հնչյունափոխության տեսակները, հայերենի շեշտադրության կանոնները եվ շեշտից կախված հնչյունափոխության օրինաչափությունները:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Իմանա հայոց լեզվի ծագումն ու զարգացման փուլերը (գրաբար,միջին հայերեն, աշխարհաբար՝ արևելահայ եվ արևմտահայ), բարբառների հիմնական առանձնահատկությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել հայերենի ցեղակից և ոչ ցեղակից լեզուները,
բ. կարողանում է զանազանել գրաբարի եվ արևելահայերենի և արևմտահայերենի, միջին հայերենի հնչյունական հիմնական տարբերությունները,
գ. կարողանում է թվարկել բարբառների հիմնական խմբերը, նշել հիմնական առանձնահատկությունները,

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ տրված լեզուներից նշել հայերենին ցեղակից լեզուները, նշված լեզվաբաններից ո՞վ է հիմնավորել հայերենի ինքնուրույնությունը հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Քանի՞ շրջան է անցել գրական հայերենը, նշել շրջանաբաժանման ընդունված դարաշրջանները, տրվածներից, որ երկրներում են խոսում արևելահայերենով:

Ինչպե՞ս է դասակարգել Հր. Աճառյանը հայերենի բարբառները, տալ դասակարգման ելակետը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Կարողանա դասակարգել ձայնավոր եվ բաղաձայն հնչյունները, կատարել հնչյունաբանական վերլուծություն:

**Կատարման չափանիշները**

ա. կարողանում է դասակարգել ձայնավորները՝ ըստ լեզվի բարձրացման դիրքի եվ ըստ շարքի
բ. կարողանում է դասակարգել բաղաձայնները՝ ըստ ձայնի եվ աղմուկի պարունակության, ըստ արտաբերման տեղի, ըստ արտաբերման եղանակի, ըստ կազմության
գ. կարողանում է կատարել հնչյունաբանական վերլուծություն:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ կազմել հայերենի երկշարք և եռաշարք բաղաձայնների գծապատկերը, տրված օրինակներից նշել ձայնեղ, խուլ բաղաձայնները: Բերված օրինակներից նշել՝ պայթական, շրթնատամնային, բարդ բաղաձայնները: Որևէ բառ ենթարկել հնչյունաբանական վերլուծության, նշել առաջնալեզվային բաղաձայնները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 16 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Կարողանա վանկատել տրված բառերը.

**Կատարման չափանիշները.**

ա. կարողանում է հնարավոր բոլոր ձևերով վանկատել բառերը,
բ. կարողանում է անսխալ տողադարձել ցանկացած բառ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ վանկատել տրված բառերը, նշել բաց և փակ վանկերը, գաղտնավանկի *ը* հնչյունը: Արդյունքը համարվում է դրական՝ կատարման չափանիշները հիմնականում բավարարելու դեպքում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական տրված առաջադրանքը հիմնականում կատարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 14 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Իմանա հնչյունափոխության տեսակները, հայերենի շեշտադրության կանոնները եվ շեշտից կախված հնչյունափոխության օրինաչափությունները.

**Կատարման չափանիշները.**

ա.կարողանում է տարբերակելբառային եվ տրամաբանական շեշտերը՝ բերելով նաև բառերի օրինակներ, որոնցում շեշտը չի դրվում վերջին վանկի վրա,

բ.տարբերակում է արմատի և ածանցի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ մատնանշելով *է/ե/,ի,ու* ձայնավորների, *յա,յու,ույ* երկհնչյունների հնչյունափոխությունը,

գ.տարբերակում է փոխազդեցական հնչյունափոխության տեսակները,

դ.կարողանում է անսխալ կարդալ գրաբարյան տեքստեր՝ ելնելով պատմական հնչյունափոխության վերաբերյալ տեսական գիտելիքներից:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ շեշտադրել տրված բառերը, ընդգծել այն բառերը, որոնց շեշտը դրվում է առաջին վանկի վրա (*մի՛թե,մի՛գուցե, գո՛նե, գրե՛թե, նո՛ւյնիսկ, մա՛նավանդ* և այլն) և շեշտադրել օտար բառերի ուղիղ և թեք ձևերը (*Իտա՛լիա-Իտալիայի՛, օ՛պերա-օպերայի՛ց, Ա՛նգլիա-անգլիացի՛* և այլն): *եջ, էգ, էշ, կես, մեջ, սեր* և այլ բառերից կազմել նոր բառեր՝ նշելով շեշտափոխական հնչյունափոխությունը: Նոր բառեր կազմելու միջոցով ներկայացնել *ի, ու* ձայնավորների և *յա, յու, ույ* երկհնչյունների հնչյունափոխությունը: Տրված բառերից ընդգծել նրանք, որոնք բնորոշ են գրաբարյան շրջանի հայերենին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 20 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04- 09-003

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլը մշակվել է հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու, ճիշտ գրելու, հնչյունափոխված արմատը գտնելու կարողություններ և հմտություններ զարգացնելու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 72 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 12 ժամ |
| Սեմինար՝ | 18 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 42 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀԼԴ - 04 09 01, ՀԼԴ - 04 09 02 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Գիտի ձայնավորների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը:
2. Գիտի *յա, յու, ույ* երկհնչյունների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը:

3. Գիտի փոխազդեցական հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոնները:
4. Գիտի պատմական հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի ձայնավորների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. ըմբռնում է շեշտից կախված հնչյունափոխության ուղղախոսական արժեքը:
բ. կարողանում է գտնել բառի (արմատի) հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ նշելով հնչյունափոխությունը,
գ. տրված բառերով կազմում է նոր բառեր,որոնցում *է, ու, ի* ձայնավորը հնչյունափոխվի,
դ. գաղտնավանկ ունեցող տրված բառերով կազմում է բառ կամ բառաձև այնպես, որ *ը* ձայնավորը սղվի,
ե. կարողանում է տրված տեքստից դուրս գրել այն բառերը,որոնցում կա հնչյունափոխություն կամ սղում՝ նշելով հնչյունափոխությունը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ շեշտափոխական հնչյունափոխության միջոցով կազմել նոր բառեր ***է(ե)>ի*** և ***ի>ը*** բառասկզբում, բառամիջում, ***ի>յ*** բառավերջում, ***ու, ը*** ձայնավորների օրինակներով: Տրված բառերից ընդգծել հնչյունափոխված արմատ ունեցող բառերը: Արդյունքը համարվում է դրական՝ կատարման չափանիշները հիմնականում բավարարելու դեպքում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի *յա, յու,ույ* երկհնչյունների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. վերականգնում է տրված բառերի հնչյունափոխված հիմքերի անհնչյունափոխ ձևերը՝ նշելով հնչյունափոխությունները,
բ. կազմում է այնպիսի բառեր, որոնցում տրված բառերը և արմատները մի դեպքում չենթարկվեն, մյուսում ենթարկվեն հնչյունափոխության (լույս-լուսավոր-վերջալույս),
գ. կարողանում է գտնելարմատի և ածանցի հնչյունափոխությունը, բառում կատարված մեկից ավելի հնչյունափոխությունները,
դ. տրված բառաշարքերում գտնում է այն բառերը, որոնցում երկհնչյունների սղում կա,
ե. կատարում է երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, անսխալ գրել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած թելադրություններ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ կատարել երկհնչյունների հնչյունափոխության աշխատանք. հնարավորության դեպքում կազմել նոր բառեր, տրված բառերում ընդգծել, մի դեպքում արմատի, մյուս դեպքում՝ ածանցի հնչյունափոխությունը, նշված օրինակներում նշել սղված երկհնչյունը, լրացնել բաց թողնված երկհնչյունները և այլն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի փոխազդեցական հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոնները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել փոխազդեցական հնչյունափոխության տեսակները և օրինակներ բերել,
բ. տրված տեքստում կարողանում է գտնել հնչյունի անկում կամ հավելում ունեցող բառերը, վերականգնել սկզբնաբառը, համեմատել գրական ձևերի հետ,
գ. կարողանում է բերել դրափոխության օրինակներ, համեմատել նախնական ձևերը գրական ձևերի հետ,
դ. կարողանում է բերել առնմանության և տարնմանության օրինակներ, համեմատել նախնական ձևերը գրական ձևերի հետ՝բացատրելով հնչյունների փոխազդեցությունը,
ե. կարողանում է բերել հնչյունների պարզեցման և բարդացման օրինակներ՝ բացատրելով բառի ուղղագրությունը և ուղղախոսությունը ***(վաքսուն>վացուն) (ք+ս=ց) սեպուհ + ական > սեպհական > սեփական (պ+հ=փ)*** և այլն***),***
զ. կարողանում է բերել հնչյունների ամփոփման և կրճատման, համաբանական հնչյունափոխության օրինակներ՝բացատրելով վանկերից կամ հնչյունակապակցություններից մեկի դուրսմղման հետևանքով առաջացած ուղղագրությունը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ գրել օրինակներ, որոնցում առկա է հնչյունի անկում ***(սկեսուր-կեսուր, կնքավոր-քավոր*** և այլն***)***, հնչյունի հավելում (***աճար-հաճար, ցած-ցածր*** և այլն), առնմանություն (***ջրցան-ցրցան, դգալ-գդալ*** և այլն), տարանմանություն (***սառսուռ-սարսուռ, կարծկած>կածկած>կասկած*** և այլն) ամփոփման (***հասարակակարգ-հասարակարգ*** և այլն), կրճատում (***Գրիգոր-Գրքոր*** և այլն), հնչյունի պարզացում և բարդեցում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար | 4 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի պատմական հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է բերել օրինակներ, որոնցում գրաբարյան բառասկզբի յ հնչյունը կարդացվում է հ, իսկ բառավերջի յ-ն ընկել է:

բ. կարողանում է բերել օրինակներ, որոնցում ընկել են բառավերջի ի և ն վերջնահնչյունները, բացատրում է արդի հայերենում դրանց վերականգնելու հետևանքով առաջացած ուղղագրությունը:

գ.կարողանում է բերել օրինակներ, որոնցում գրաբարյան պատճառական -ուցան ածանցը արդի հայերենում դարձել է -ց, -ցն:

դ. կարողանում է բացատրել հնչյունների միացման և պարզեցման հետևանքով առաջացած հնչյունափոխությունը, բերել օրինակներ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ գրել մեկ օրինակ, որտեղ առկա է գրաբարյան բառասկզբի և բառավերջի յ հնչյունը, նույնը գրել նաև գրական հայերենով: Կատարել համեմատություններ գրաբարյան պատճառական *-ուցան* ածանցի և արդի հայերենի *–ց*, *-ցն* ածանցների միջև:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 6 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09 04

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլը մշակվել է բառագիտությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, դրանք կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 22 ժամ |
| Սեմինար՝ | 16 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 70 ժամ |

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի ՀԼԴ - 04 09 01, ՀԼԴ - 04 09 02, ՀԼԴ - 04 09 03 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

1. Կարողանա բնորոշել բառը, բառապաշարը, լեզվի բառային կազմը:
2. Կարողանա բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները,առանձնացնել բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության:
3. Կարողանա տարբերակել բառը և դարձվածքը:
4. Իմանա բառերի տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր և կարողանա կատարել բառակազմական վերլուծություն:

**Գնահատման կարգը՝**
Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.** Կարողանա բնորոշել բառը, բառապաշարը, լեզվի բառային կազմը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել բառապաշարի տարբեր շերտերը՝ համագործածական, գրքային, խոսակցական.
բ. ճիշտ է դասակարգում բառապաշարը՝ գործառական և գործածական, ծագումնաբանական,
գ. կարողանում է տարբերել բառապաշարի հարստացման միջոցները՝ բառակազմություն, փոխառություն, պատճենում՝ մատնանշելով փոխառյալ և բնիկ բառերի համարժեքությունը,
դ. ճիշտ է ընկալում հնաբանությունների ոճական արժեքը և նորաբանությունների գործառական դերը,
ե. բնագրում առանձնացնում է բարբառային կազմությունները, օտարաբանությունները,
զ. ելնելով հաղորդակցման նպատակներից՝ գործածում է տերմինային բառեր ու կապակցություններ:
է. իր խոսքում կարողանում է ճիշտ օգտագործել տարբեր ոճական կիրառություն ունեցող բառեր:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ տրված օրինակներից ընդգծել մի դեպքում գրքային, մյուս դեպքում՝ համագործածական բառերը: Գրել պատճենման և փոխառության օրինակներ, տրված օրինակներից նշել օտարաբանությունները, տրված բառերը գրել բառակապակցությունների միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Կարողանա բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները, առանձնացնել բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (հոմանիշներ,հականիշներ համանուններ,հարանուններ),
բ. կարողանում է գտնել տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, հոմանիշների շարքից ընտրել տրված բառի հետ կապակցվող միավորը, ճիշտ կիրառել հոմանիշների իմաստային նրբերանգները,

գ. հանձնարարված տեքստում կարողանում է գտնել հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները,

դ. կարողանում է տարբերակել բառային և քերականական, տարարմատ և նույնարմատ համանունները,կազմել նախադասություններ,

ե. կարողանում է տարբերակել հարանունները և բառային տարբերակները՝ ընտրելով տվյալ նախադասությանը համապատասխանող բառը,

զ. տարբերում է մենիմաստ և բազմիմաստ բառերը, կարողանում է բառարանով ստուգել և գտնել բառի գլխավոր ու երկրորդական իմաստները:

է. կարողանում է կազմել նախադասություններ բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:

ը. կատարում է տեքստային աշխատանք(գտնել բազմիմաստ բառերը, բացատրել նրանց իմաստները, գտնել հոմանիշներն ու հականիշները, բառերը փոխարինել հարմար հոմանիշներով և այլն):

**Գնահատման միջոց.**

Ոꞏսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ գրել տրված բառերի հոմանիշները, հականիշները, տրված արմատից կազմել հոմանիշներ, գրել դրանց հականիշները: Տրված բառերից ընդգծել բազմիմաստ բառերը, գրել դրանց գլխավոր և երկրորդական իմասները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ոꞏսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 6 ժամ |
| Գործնական՝ | 20 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Կարողանա տարբերակել բառը և դարձվածքը:

**Կատարման չափանիշներ.**

ա. ընկալում է բառերի և դարձվածքների փոխաբերական իմաստները և դրանց ոճական արժեքը պատկերավոր խոսք կազմելիս, տարբերակում է դարձվածքներն այլ բառակապակցություններից,

բ. կարողանում է դարձվածքներից և բառերից կազմել հոմանշային շարքեր և նախադասություններ՝ տրված բառակապակցությունների ուղիղ և դարձվածքային իմաստներով,

գ.տարբերակում է դարձվածքների և թևավոր խոսքերի ընդհանրություններն ու տարբերությունները, կարողանում է նշել տրված դարձվածքների սկզբնաղբյուրները:

դ.իր խոսքում օգտվում է հայերենի դարձվածքների հարստությունից, կիրառում է ասացվածքներ, թևավոր խոսքեր,

ե.կատարում է ստեղծագործական աշխատանք (տրված բառերով և դարձվածքներով կազմել նախադասություններ, գրել շարադրություն և այլն):

**Գնահատման միջոց.**

Ոꞏսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ տրված օրինակներից նշել դարձվածային միավորները և գրել իմաստը: Բերված բառերն օգտագործել բառակապակցության և դարձվածային միավորի կազմում:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա.

Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ., Գ. Գարեգինյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ., Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Չեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 18 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Իմանա բառերի տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր և կարողանա կատարել բառակազմական վերլուծություն:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է կատարել ձևույթաբանական վերլուծություն՝ տարբերակելով հիմնական և երկրորդական ձևույթները՝ իրենց ենթատեսակներով,

բ. տարբերակում է գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և բայակերտ ածանցները, կարողանում է բառեր կազմել տրված ածանցներով,

գ. տարբերակում է բարդությունների տեսակները՝ համադրական, հարադրական, կրկնավոր, անսխալ գրում է բաղադրյալ բառերը և հնչյունափոխված արմատները,

դ. տարբերակում է հապավական բարդությունների տեսակները, արտահայտում բառակապակցություններով,

ե. կարողանում է կատարել բառակազմական վերլուծություն (գտնել բառի բաղադրիչները՝ արմատներ, ածանցներ, հոդակապ, նշել արմատի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները և այլն), բառակազմական վարժություն (գտնել նույն արմատով և ածանցով բառեր, տրված նմուշով կազմել բաղադրյալ բառեր և այլն),

զ. կարողանում է համառոտագրել տրված բառերը:

**Գնահատման միջոց.**

ՈՒսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ քանի՞ ձևույթ կա տրված օրինակներում, նշել հիմնական ձևույթները: Տրված ածանցներից, որոնք են գոյականակերտ և ածականակերտ: Տրված բառերի միջոցով կազմել հարադրական բարդ բառեր: Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Չեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը`** ՀԼԴ - 04 09 -05

**Մոդուլի նպատակը.**
Մոդուլը մշակվել է բառակազմության հետ կապված ուղղագրու
թյան և ուղղախոսության կանոններին տիրապետելու և դրանք գործնականում կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը`** 76 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում` | 12 ժամ |
| Սեմինար` | 10 ժամ |
| Գործնական պարապմունք` | 54 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՀԼԴ - 04 09 01, ՀԼԴ - 04 09 02, ՀԼԴ - 04 09 03, ՀԼԴ - 04 09 04 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Գիտի նախածանցավոր, վերջածանցավոր, համածանցավոր բառերի ուղղագրությունն ու ուղղախոսությունը:
2. Գիտի բարդ բառերի բաղադրիչների միացման տարբեր ձևերը, դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը:
3. Գիտի հապավումների գրության ձևերը և դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը:
4. Գիտի համառոտագրությունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը:
5. Գիտի մեծատառերի ուղղագրությունը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի նախածանցավոր,վերջածանցավոր,համածանցավոր բառերի ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է վերականգնել հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերը, ավելացնելով ածանցներ`կազմում է նոր բառեր, բացատրում դրանց ուղղագրությունը,

բ. կարողանում է գտնել հնչյունափոխված ածանցը` վերականգնելով անհնչյունափոխ ձևը, բացատրում հնչյունափոխված ածանցի ուղղագրությունը,

գ. բառակազմորեն վերլուծում է տրված բառերը, ընդգծում ածանցները, բացատրում ուղղախոսությունը,

դ. կարողանում է տարբերակել ածանցի` հոդակապով և առանց հոդակապի միացումը արմատներին, ճիշտ գրել այն բառերը, որոնցում ե-ով վերջացող բաղադրիչի վրա ավելացել է ածանց (ոսկեորել, ուղեոր):

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք` լրացնել ուղղագրական արժեք ներկայացնող բաց թողնված տառերը (հիմնականում երկհնչյուններ և *եվ-և* ուղղագրական արժեք ունեցող բառեր): Տրված բառերից ընդգծել այն բառերը, որոնք դիրքային կամ շեշտի ազդեցությամբ կարող են հնչյունափոխվել:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի բարդ բառերի բաղադրիչների միացման տարբեր ձևերը, դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել բարդություններն ըստ գրության ձևի՝ համադրական (տեսակները՝ իսկական, կցական, հաստատական) և հապավական,
բ. կարողանում է կազմել իսկական բարդություններ՝ հոդակապով և առանց հոդակապի, բացատրել հնչյունափոխված արմատի կամ ածանցի ուղղագրությունը,
գ. կարողանում է ճիշտ գտնել կցական բարդություններ՝ խուսափելով զուգաձևություններից,
դ. կարողանում է տարբերակել հարադրական (վերլուծական) բարդության տեսակները, կատարել առաջադրանքներ միության գծիկով և առանց գծիկի գրվող հարադրական բարդությունների վերաբերյալ,
ե. կարողանում է կատարել բարդությունների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ տարբեր բնույթի առաջադրանքներ, թեստային աշխատանքներ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ տրված շարքերից նշել այն շարքը, որտեղ բոլոր բառերը մի դեպքում կցական բարդություններ են, մյուս դեպքում՝ բաղհյուսական:

Հոդակապի միջոցով տրված պարզ բառերից կազմել իսկական բարդություններ: Երկբաղադրիչ բառերից կազմված շարքերից նշել այն շարքը, որի բոլոր բաղադրիչները գրվում են գծիկով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի հապավումների գրության ձևերը և դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է հապավումների տեսակները(տառային, վանկային, խառը), կարողանում է ճիշտ գրել և կարդալ տառային հապավումները (ԿԳՆ՝ կըգընը, ՀՄԸՄ՝ հոմենըքմեն և այլն):
բ. կարողանում է ճիշտ կարդալ օտար լեզուներից վերցված տառային հապավումները՝ ճիշտ հնչյունադարձելով և գրադարձելով (Սիէնէն, ԲիԲիՍի, կամ ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ):

գ. կարողանում է կազմել վանկային հապավումներ՝ ճիշտ կիրառելով մեծատառերի և փոքրատառերի գրության վերաբերյալ կանոնները:
դ. կարողանում է ճիշտ կազմել և գրել խառը տիպի հապավումները, տրված հապավումներն արտահայտում է համապատասխան բառակապակցություններով՝ բացատրելով դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝բացել տրված հապավումները, տրված բազմաբաղադրիչ անվանումներից կազմել վանկատառային և վանկաբառային հապավումներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի համառոտագրությունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ճիշտ համառոտագրել՝ գրելով բառի սկզբնատառը (Ա.Բակունց) կամ առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով (Հովհ. Թումանյան),
բ. կարողանում է ճիշտ համառոտագրել՝ գրելով միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը (հմմտ., պրն),
գ. կարողանում է ճիշտ համառոտագրել չափ ու կշռի միավորները (կգ, դմ, մբ),
դ. կարողանում է ճիշտ համառոտագրել եզակի և հոգնակի թվերը (ընկ. ընկ. կամ դդ., թթ.),
ե. կարողանում է ճիշտ կարդալ համառոտագրված բառերը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ համառոտագրել տրված հեղինակների անուն ազգանունները, հնարավորինս համառոտագրել տեքստը, այդ թվում տեքստում առկա չափ ու կշռի միավորները, եզակի և հոգնակի թվերով արտահայտված բառերը: Բացել տրված համառոտ գրությունները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում տրված աշխատանքը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 5.**

Գիտի մեծատառերի ուղղագրությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ճիշտ գրել հարադրավոր հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով,
բ. կարողանում է ճիշտ գրել հարադրավոր բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով,
գ. կարողանում է ճիշտ գրել գրական ստեղծագործությունների, գիտական գործերի, թերթերի, ամսագրերի, պատմական նշանավոր անցքերի, պետական տոների, շքանշանների, համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների անունները,
դ. կատարում է տարբեր բնույթի առաջադրանքներ մեծատառերի գործածության վերաբերյալ, անսխալ գրում թելադրություններ, թեստային աշխատանքներ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ հարադիր հատուկ անուններից բաղկացած շարքերից նշել այն շարքը, որի բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով, միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով: Լրացնել տեքստի ողղագրական արժեք ներկայացնող բաց թողնված տառերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Ա, Երևան 2009, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Սուքիասյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1999թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 14 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09 06

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 28 ժամ |
| Սեմինար՝ | 12 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 68 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Պատկերացում ունենա լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին:
2. Գիտի նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, գոյական անունը:

3. Գիտի նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, ածական և թվական անուններ:
4. Գիտի, թե ինչ է դերանունը, նրա կիրառությունը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Պատկերացում ունենա լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է քերականական իմաստ և ձև հասկացությունները:
բ. տարբերակում է քերականական կարգերը,
գ. համադրում է կցական և թեքական, համադրական և վերլուծական ձևերի տեսակարար կշիռը հայերենի քերականական համակարգում,
դ. տարբերակում է խոսքի մասերը որպես բառապաշարի իմաստաքերականական խմբեր,
ե. տարբերակում է խոսքի մասերը ըստ նրանց արտահայտած ընդհանուր իմաստի,
զ. կարողանում է որոշել նյութական, սպասարկու և վերաբերմունքային խոսքի մասերի դերը խոսքի կառուցման մեջ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք` գրել հիմնական խոսքի մասերը, գոյականին բնորոշ քերականական կարգերը, ընդգծել չթեքվող խոսքի մասերը: Տրված նախադասություններում ինչ պաշտոնով է հանդես եկել` գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Պրակ Ա, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն` | 4 ժամ |
| Սեմինար` | 2 ժամ |
| Գործնական` | 14 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, գոյական անունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է գոյականի տեսակները (անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ, նյութական և վերացական և այլն), կարողանում է ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները,
բ. կարողանում է ճիշտ կազմել գոյականի հոգնակի թիվը և խոսքում ճիշտ կիրառել, տարբերակում է անհոգնական, անեզական, հավաքական գոյականները,
գ. տարբերակում է գոյականի հոլովները` ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական,
դ. տարբերակում է արտաքին և ներքին հոլովումները, կարողանում է անսխալ հոլովել տրված բառերը և գործածել նախադասությունների մեջ,

ե. տարբերակում է որոշյալ և անորոշ առումները, հայերենի հոդերի ցուցական, ստացական և դիմորոշ ֆունկցիաները,
զ. կարողանում է գտնել գոյականի քերականական կարգերը, բնագրից դուրս գրել գոյականները, կատարել ձևաբանական վերլուծություն:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք տրված օրինակներից նշել՝

- հատուկ գոյականները,
- նյութային իմաստ պարունակող գոյականները,
- վերացական գոյականները:

Յնարավորության դեպքում կազմել տրված գոյականների հոգնակի ձևերը (օրինակներում տալ նաև անհոգնական և հավաքական գոյականներ), հոլովել տրված գոյականները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Յայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Յայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Պրակ Ա, Երևան 1973թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Յեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 20 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, ածական և թվական անուններ:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է ածականի տեսակները՝ որակական և հարաբերական,
բ. տարբերակում է ածականի համեմատության աստիճանները՝ դրական, բաղդատական, գերադրական,
գ. կատարում է աշխատանք բնագրի վրա՝ ածականի մակդիրային կիրառության վերաբերյալ,
դ. տարբերակում է թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական,
ե. կարողանում է ճիշտ գործածել թվականի գրավոր արտահայտության ձևերը,
զ. կարողանում է հոլովել ածական և թվական անունները և փոխանվանաբար գործածել նախադասությունների մեջ,
է. կատարում է ձևաբանական վերլուծություն, զանազան բնույթի վարժություններ, թեստային աշխատանքներ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք տրված օրինակներից նշել՝

- որակական ածականները,
- որակական այն ածականները, որոնք չունեն համեմատության աստիճան,
- գրել տրված ածականի հոմանիշներ (3-4 ածական):

Տրված թվականներից նշել՝

- քանակական թվականները,
- պարզ թվականները,
- գրել տրված թվերի բառային արժեքը,
- գրել տրված տառերի թվային արժեքը (օր՝ ՄԻԴ - 224 կամ 1300 ՌՅ ևն):

Տրված ածականները և թվականները որպես ենթակա կիրառել նախադասություններում (փոխանվանաբար):

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Պրակ Բ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 20 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի, թե ինչ է դերանունը, նրա կիրառությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է դերանվան տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական:
բ. տարբերակում է դերանվանական հոլովումն անվանականից, ճիշտ է հոլովում տրված դերանունները,
գ. կարողանում է խոսքում ճիշտ կիրառել դերանունների հոգնակի թվի կազմության և հոլովման առանձնահատկությունները,
դ. գիտակցում է դերանունների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ՝ որպես անձնանիշ և իրանիշ գոյականներին փոխարինող բառեր, ածականին, թվականին, մակբային փոխարինող բառեր,
ե. կարողանում է կատարել թեստային աշխատանքներ և վարժություններ՝ կապված քերականական ձևերի ճիշտ ընտրության և անսխալ գործածության հետ:

**Գնահատման միջոց.**

Ունկնդրին կտրվի անհատական քարտային առաջադրանք տրված օրինակներից նշել՝

- ցուցական դերանունները,
- հարցական, հարաբերական դերանունները,
- որոշյալ դերանունները:

Տրված օրինակներից ընդգծել դերանվանական հոլովման պատկանող դերանունները: Տրված օրինակներից կազմել հոգնակի ձևեր:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Պրակ Բ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 14 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՅ. ՆՐԱ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09-07

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու, բայի իմաստային, ձևաբանական, բառակազմական, շարահյուսական առանձնահատկությունները տարբերակելու, մակբայի տեսակներն ու առանձնահատկությունները տարբերակելու կարողություններ ու հմտություններ զարգացնելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

Տեսական ուսուցում՝ 28 ժամ
Սեմինար՝ 12 ժամ
Գործնական պարապմունք՝ 68 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՅԼԴ - 04 09 04, ՅԼԴ - 04 09 05 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Իմանալ բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ, անդեմ բայերի/դերբայների/ տեսակները և հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ:
2. Իմանալ բայի կազմությունը, սեռը:
3. Իմանալ բայի խոնարհումը. դեմք, թիվ, եղանակ, ժամանակ: Օժանդակ բայի ուղղագրությունը:
4. Իմանալ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունը, ժխտական ձևերի կազմությունը և ուղղագրությունը: Անկանոն և պակասավոր բայեր:
5. Իմանա մակբայի տեսակները և առանձնահատկությունները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Իմանալ բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ, անդեմ բայերի/դերբայների/ տեսակները և հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ,
բ. տարբերակում է դերբայներն ու ձևաբայերը, կազմում է տրված բայերի դերբայական ձևերը,
գ. կարողանում է հոլովել դերբայները և որոշել նրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները,
դ. գեղարվեստական գրականությունից դուրս է գրում օրինակներ՝ դերբայների տարբեր հոլովածներով և շարահյուսական կիրառություններով,
ե. ընկալում է դերբայների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ և հարակատար դերբայի երկակի բնույթը,
զ. կազմում է դերբայական դարձվածներով նախադասություններ և կետադրում:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ տրված բայերից կազմել հարակատար դերբայ, բանաստեղծական օրինակից դուրս բերել կախյալ դերբայները (ձևաբայերը) և որոշել նրանց ձևաբանական և գործառական առանձնահատկությունները: Տրված բայով կազմել սահմանական եղանակի ժամանակային ձևերը: Նախադասության մեջ անորոշ դերբայը կիառել որպես՝

- ենթակա,
- հատկացուցիչ,
- որոշիչ,
- ստորոգելի,
- նպատակի պարագա,
- պատճառի պարագա,
- ժամանակի պարագա:

Նախադասության մեջ հարակատար դերբայը կիրառել որպես՝

- որոշիչ,
- ձևի պարագա,
- փոխանվանաբար:

Կետադրե՛լ տրված համր տեքստը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Բ, Երևան 1973թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Իմանալ բայի կազմությունը, սեռը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է ածանցավոր բայերի տեսակները՝ սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական և կրավորական,

բ. կարողանում է տարբերակել բարդ (վերլուծական, հարադրական բայերի) տեսակները՝ հարադիր և զուգադրական,

գ. գտնում է անորոշի, անցյալ կատարյալի, դերբայական հիմքերից կազմվող ձևերը, զանազանում է անցյալ կատարյալի հիմքերի տիպերը՝ ցոյական, ըեական, պարզ կամ արմատական:

դ. առանձնացնում է տրված բայերի հիմքերը և դրանցով կազմում բայանուն գոյականներ, տրված տեքստից առանձնացնում է բայերը, գտնում նրանց անորոշի և անցյալ կատարյալի հիմքերը,

ե. կարողանում է խմբավորել տրված բայերն ըստ սեռի՝ ներգործական, կրավորական, չեզոք,

զ. առանձնացնում է կրկնասեռ և կրավորաձև չեզոք բայերը,

է. ներգործական կառուցվածքի նախադասությունները փոխակերպում է կրավորական կառուցվածքի նախադասությունների:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք տրված բայերից նշել՝

- բազմապատկական բայերը,
- միակատար բայերը,
- բազմակատար բայերը,
- ներգործական սեռի բայերը,
- չեզոք սեռի բայերը:

Կատարել նախադասությունների փոխակերպումներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Բ, Երևան 1973թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 14 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Իմանալ բայի խոնարհումը. դեմք, թիվ, եղանակ, ժամանակ: Օժանդակ բայի ուղղագրությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է բայի դեմքի, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերը, կարողանում է ձևաբանական վերլուծության ենթարկել տրված բայերը,
բ. տարբերակում է բայի եղանակները (սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական և հարկադրական),
գ. կարողանում է տրված բայը խոնարհել սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով և գործածել նախադասության մեջ,
դ. կարողանում է տրված բայը խոնարհել հրամայական եղանակով և գործածել նախադասության մեջ,
ե. կարողանում է տրված բայը խոնարհել ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ժամանակներով և գործածել նախադասությունների մեջ,
զ. կարողանում է կատարել բնագրի վերլուծություն՝ առանձնացնելով բայի հարացուցային ձևերը և բնութագրելով դրանք:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ գրել նախադասություն՝ հոգնակի թվով, երկրորդ դեմքով, կատարելիի կերպով և համանման այլ կաղապարներով: Տրված օրինակները խոնարհել՝

- սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով և գործածել նախադասության մեջ,
- ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ժամանակներով և գործածել նախադասությունների մեջ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Բ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Իմանալ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունը, ժխտական ձևերի կազմությունը և ուղղագրությունը: Անկանոն և պակասավոր բայեր:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը (լինել օժանդակ բայով),
բ. կարողանում է խոնարհել տրված բայերը շարունակական, վիճակային, մտադրական ժամանակաձևերով,
գ. կարողանում է խոսքում ճիշտ կիրառել ժխտական ձևերի կազմության և ուղղագրության հետ կապված առանձնահատկությունները,
դ. կարողանում է տեքստից դուրս գրել անկանոն բայերը և բացատրել, թե դիմավոր և անդեմ ո՞ր ձևերում են դրանք անկանոնություն դրսևորում,
ե. կարողանում է տեքստից դուրս գրել անկանոն բայերը և բացատրել,թե որտե՞ղ է դրսևորվում նրանց պակասավորությունը,

գ. կարողանում է կատարել տարբեր բնույթի առաջադրանքներ, վարժություններ, թեստային աշխատանքներ բայի կազմության, ուղղագրության, քերականական կարգերի, շարահյուսական կիրառության վերաբերյալ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք կազմել նախադասություն` երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը (լինել օժանդակ բայով), կազմել տրված բայերի ժխտական ձևերը և դրանք կիրառել նախադասություններում, տեքստից դուրս գրել անկանոն բայերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Բ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն` | 4 ժամ |
| Սեմինար` | 2 ժամ |
| Գործնական` | 14 ժամ |

**Ուսումնառության արդյունք 5.**

Իմանա մակբայի տեսակները և առանձնահատկությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է մակբայի տեսակները (տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, ընդհանրական),
բ. կարողանում է ճիշտ կիրառել մակբայների իմաստային, ձևաբանական, շարահյուսական, բառակազմական առանձնահատկությունները,
գ. կարողանում է մակբայներ կազմել տրված գոյականներից ու ածականներից,
դ. տրված բայերի հետ կարողանում է գործածել մակբայներ և դրանք խմբավորել ըստ տեսակների,
ե. կարողանում է մակբայների փոխարեն գործածել համապատասխան դերանուններ, կազմում է բառակապակցություններ`մակբայները գործածելով բայանուն գոյականների և ածականների հետ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի առաջադրանք տեքստից դուրս բերել մակբայները: Տրված մակբայները խմբավորել ըստ տեսակների` տեղի, ժամանակի, ձևի, չափի: Տրված գոյականներից կազմել մակբայներ և գործածել նախադասություններում: Տրված մակբայները գործածել բայերի հետ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Գ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն` | 6 ժամ |
| Սեմինար` | 2 ժամ |
| Գործնական` | 10 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

## «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ: ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** ՅԼԴ - 04 09-08

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլը մշակվել է քերականական իմաստ ունեցող կամ սպասարկու խոսքի մասերի, ինչպես նաև վերաբերմունքային խոսքի մասերի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ զարգացնելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 72 ժամ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
Սեմինար՝ 8 ժամ
Գործնական պարապմունք՝ 48 ժամ

**Մուտքային պահանջները.**

Չկան:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Գիտի կապը՝որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը: Իմանալ բայի կազմությունը, սեռը:
2. Գիտի շաղկապը՝ որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը:
3. Գիտի վերաբերականը ՝որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում:
4. Գիտի ձայնարկությունը՝ որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի կապը՝որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է խմբավորել կապերն ըստ շարադասության (նախադրություն, հետադրություն, երկդրություն),
բ. կարողանում է խմբավորել կապերն ըստ կազմավորման աստիճանականության (իսկական, կապ, անիսկական կապ, կապական բառ):
գ. տարբերակում է կապերն ըստ նրանց արտահայտած հարաբերությունների և իմաստների:
դ. կարողանում է անիսկական կապերն ու կապական բառերը խմբավորել ըստ այն խոսքի մասերի, որոնցից առաջացել են:
ե. կարողանում է լրացնել աղյուսակը տվյալ հոլովները պահանջող կապերով: Տրված կապերի հետ գործածում է համապատասխան հոլովներով բառեր:

**Գնահատման միջոց.**

Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է խմբավորում տրված կապերն ըստ շարադասության (նախադրություն, հետադրություն, երկդրություն), ըստ կազմավորման աստիճանականության (իսկական, կապ, անիսկական կապ, կապական բառ), տրված կապերի հետ ճիշտ է գործածում համապատասխան հոլովածևով բառեր:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Գ, Երևան 1973թ.:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի շաղկապը՝ որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է համադասական և ստորադասական շաղկապները,
բ. կարողանում է խմբավորել համադասական շաղկապներն ըստ իմաստի (միավորիչ-հավելական, ներհակական, տրոհական),
գ. կարողանում է խմբավորել ստորադասական շաղկապները ըստ իմաստի (մեկնական, նպատակի, ժամանակի, պատճառի և հիմունքի և այլն),
դ. կարողանում է խմբավորել շաղկապներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, մենադիր, զուգադիր, կրկնադիր),
ե. կարողանում է ծավալել համառոտ տեքստը՝ գործածելով տարբեր շաղկապներ:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք տրված շարքերից նշել միայն ստորադասական շաղկապները, տրված շաղկապներից ընդգծել միավորիչ - հավելական նշանակություն ունեցող շաղկապները: Գրել երեքական պարզ, բարդ, զուգադիր և կրկնադիր շաղկապներ: Տրված անավարտ նախադասությունը շարունակել՝ ստեղծելով ներհակական բնույթի բարդ համադասական նախադասություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ և Գ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Գ, Երևան 1973թ., Լ.Գ.Գևրեգինյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ., Խ. Բադիկյան, Ա. Պապոյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության», Երևան 2003թ., Ս. Աբրահամյան և այլք «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1975թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 |

ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի վերաբերականը `որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է վերաբերականների տեսակները (հաստատական, ցուցական, ժխտական, երկբայական, գնահատողական, սաստկական, սահմանափակման, բաղձանքի, զիջական, կամային),
բ. խմբավորում է տրված վերաբերականներն ըստ ոճական-գործառական շերտերի,
գ. կարողանում է տարբեր վերաբերականների միջոցով սեփական վերաբերմունք արտահայտել տրված տեղեկությունների նկատմամբ,

դ. կարողանում է կետադրել բնագիրը՝ ընդգծելով վերաբերականները և որոշելով նրանց տեսակը և կազմությունը,

**Գնահատման միջոց.**

Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է խմբավորում տրված վերաբերականները (հաստատական, ցուցական, ժխտական, երկբայական, գնահատողական, սաստկական, սահմանափակման, բաղձանքի, զիջական, կամային), տարբեր վերաբերականների միջոցով սեփական վերաբերմունքն է արտահայտում տրված տեղեկությունների նկատմամբ: Ճիշտ է կետադրում բնագիրը՝ ընդգծելով վերաբերականները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Գ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի ձայնարկությունը՝ որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է ձայնարկությունների տեսակները (զգացական,կոչական, նմանաձայնական ),
բ. կարողանում է խմբավորել ձայնարկություններն ըստ կազմության՝ պարզ, բարդ (կցական, հարադրավոր),
գ. կարողանում է զգացական ձայնարկություններով կազմել նախադասություններ, որոնցում նրանք արտահայտեն զարմանք, ուրախություն, ափսոսանք, ցավ,
դ. բերում է դարձվածքների օրինակներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է,
ե. կարողանում է փոխադրել տրված հատվածի բովանդակությունը՝ գործածելով համապատասխան ձայնարկություններ և կետադրելով,

**Գնահատման միջոց.**

Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է խմբավորում տրված ձայնարկությունների տեսակները (զգացական, կոչական, նմանաձայնական), կարողանում է խմբավորել տրված ձայնարկություններն ըստ կազմության՝ պարզ, բարդ (կցական, հարադրավոր), զգացական ձայնարկություններով կազմում է նախադասություններ, որոնք արտահայտեն զարմանք, ուրախություն, ափսոսանք, ցավ, բերում է դարձվածքների օրինակներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Բ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Պրակ Գ, Երևան 1973թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |

Սեմինար՝ 2 ժամ
Գործնական՝ 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ. ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** ՅԼԴ 04 09 - 09

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է նախադասության մասին տեսական գիտելիքները գործնականում ուսուցանելու հմտություններ տալու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

Տեսական ուսուցում՝ 32 ժամ
Սեմինար՝ 16 ժամ
Գործնական պարապմունք՝ 60 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի նախորդ բոլոր մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Գիտի շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները:
2. Գիտի՝ ինչ է բառակապակցությունը, նախադասության տեսակներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման, հաստատական ու ժխտական նախադասություն:
3. Գիտի նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և կազմության:
4. Գիտի բարդ նախադասության տեսակները:
5. Գիտի նախադասության հարակից միավորներն ու մեջբերվող խոսքը, կետադրական օրինաչափությունները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել համաձայնությունը, խնդրախոսությունը և առդրությունը,
բ. կարողանում է գործնականում օգտագործել կապակցության միջոցները՝ բառաձևերը, կապերն ու շաղկապները,
գ. գիտի շարահյուսության առանձնահատկությունները, կարողանում է ճիշտ կիրառել հնչերանգը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք համաձայնությամբ և առդրությամբ կազմել բառակապակցություն: Բերված օրինակներում նշել համաձայնության սխալները: Տրված բառերից կազմել խնդրառական բնույթի բառակապակցություններ: Բերված համադասական նախադասությունը դարձնել ստորադասական:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,: Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ., Ս. Աբրահամյան և այլք, «Հայոց լեզու, շարահյուսություն», Երևան 1975թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք** 2.

Գիտի՝ ինչ է բառակապակցությունը, նախադասության տեսակներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման, հաստատական ու ժխտական նախադասություն:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է բառակապակցության տեսակները,
բ. տարբերակում է նախադասության տեսկաներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման,
գ.կարողանում է կազմել հաստատական և ժխտական նախադասություն:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ տրված օրինակներից ընդգծել կայուն բառակապակցությունները, կազմել գոյական, ածական և թվական գերադաս անդամով բառակապակցություններ, կազմել հաստատական և ժխտական բնույթի նախադասություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,: Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ., Ս. Աբրահամյան և այլք, «Հայոց լեզու, շարահյուսություն», Երևան 1975թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Ուսումնառության արդյունք** 3.

Գիտի նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և կազմության:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է կազմել երկկազմ նախադասություն,
բ. կարողանում է կազմել միակազմ նախադասություն,
գ. կարողանում է կազմել համառոտ նախադասություն,
դ. կարողանում է կազմել ընդարձակ նախադասություն:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական առաջադրանք՝ տրված օրինակներից ընդգծել՝ երկկազմ, միակազմ նախադասությունները: Տրված բառակապակցությունից կազմել պարզ համառոտ, ապա պարզ ընդարձակ նախադասություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,: Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ., Ս. Աբրահամյան և այլք, «Հայոց լեզու, շարահյուսություն», Երևան 1975թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի բարդ նախադասության տեսակները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է տարբերակել բարդ համադասական նախադասությունը, նրա տեսակները,
բ. կարողանում է տարբերակել բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ բաղադրիչների քանակի, նրանց կապակցման միջոցները,
գ. տարբերում է գլխավոր և երկրորդական նախադասությունները,
դ. տարբերակում է ստորադաս նախադասությունների բնույթն ու նրանց կապակցությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը կարողանում է գրել բարդ համադասական բնույթի՝ ներհակական, հավելական, տրոհական և հարակցական կառույցի նախադասություններ, զանազանում է բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները, կազմում է բարդ ստորադասական նախադասության գծապատկերը, ինչպես նաև տրված գծապատկերով կազմում է բարդ նախադասություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ, Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003թ.:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

**Ուսումնառության արդյունք 5.**

Գիտի նախադասության հարակից միավորներն ու մեջբերվող խոսքը, կետադրական օրինաչափությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբերակում է միջանկյալ և ներդրյալ նախադասություններ,
բ. տարբերակում է ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքը,
գ. կարողանում է կետադրել բազմակի անդամներով,տրոհվող որոշչով նախադասություն,
դ. կարողանում է կետադրել տրոհվող հատկացուցչով, բացահայտիչով և իմաստով չկապվող բառերը,
ե. կարողանում է կետադրել դերբայական դարձվածը՝ նրա տարբեր կիրառությունների դեպքում,
զ. կարողանում է կետադրել կոչականը, ուրիշի ուղղակի խոսքի և հրամայական եղանակի բայերը,
է. կարողանում է կետադրել տրոհվող բառերը, բառակապակցությունները, ձայնարկությունները,
ը. կարողանում է կետադրել բարդ համադասական,ստորադասական և միջանկյալ նախադասությունները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը կարողանում է բարդ նախադասության կազմում ավելացնել միջանկյալ միավոր, ուրիշի ուղղակի խոսքը վերածում է անուղղակի խոսքի և կետադրում է: Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք, փոխակերպել տրված բարդ նախադասությունը՝ դարձնելով դերբայական դարձվածով պարզ նախադասություն: Կետադրել համր բնագիրը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ոիսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 10 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 10

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է նախադասության գլխավոր, երկրորդական անդամների մասին տեսական գիտելիքներ տալու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 32 ժամ |
| Սեմինար՝ | 14 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 62 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀԼԴ - 04 09 09 մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Գիտի նախադասության գլխավոր անդամները:
2. Գիտի նախադասության երկրորդական անդամները:
3. Գիտի նախադասության բազմակի անդամները:
4. Գիտի պարզ նախադասության շարադասությունը:
5. Գիտի նախադասության այլ տեսակները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Ուսումնառության արդյունք 1.**

Գիտի նախադասության գլխավոր անդամները:

**Կատարման չափանիշներ.**

ա.նախադասության մեջ տարբերում է ենթական և նրա արտահայտությունները,
բ. Կարողանում է թվարկել ենթակայի տեսակները,
գ.Կարողանում է տարբերել ստորոգյալի տեսակները,
դ. կարողանում է համաձայնեցնել ենթական ու ստորոգյալը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը տրված օրինակներից դուրս է բերում ենթական և որոշում է խոսքիմասային պատկանելությունը, տրված օրինակներում ընդգծում է ստորոգյալը, (այդ թվում անվանաբայական բաղադրյալ ստորոգյալները), կազմում է ենթակայի և ստորոգյալի համաձայնությամբ նախադասություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 2.**

Գիտի նախադասության երկրորդական անդամները:

**Կատարման չափանիշներ.**
ա. տարբերակում է գոյական անդամի լրացումները,
բ.տարբերակում է բայական անդամի լրացումները /խնդիրներ, պարագաներ/
գ. տարբերակում է տրոհվող լրացումները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը տրված տեքստը հարստացնում է գոյականական անդամի լրացումներով, դուրս է բերում ենթակայի մի քանի լրացումներ և որոշում է

խոսքիմասային պատկանելությունը: Տրված տեքստից դուրս է բերում տեղի, ժամանակի, ձևի, հիմունքի, միասնության, պատճառի և նպատակի պարագաների օրինակները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 10 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 18 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Գիտի նախադասության բազմակի անդամները:

**Կատարման չափանիշներ.**

ա.նախադասության մեջ կարողանում է առանձնացնել բազմակի ենթական, բազմակի բայական ստորոգյալը, բազմակի անվանական ստորոգյալը
բ. տարբերակում է գոյականական անդամի բազմակի անդամներ,
գ. տարբերակում է բայական անդամի բազմակի անդամներ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը տրված տեքստից դուրս է բերում բազմակի ենթական, բազմակի բայական ստորոգյալը, բազմակի անվանական ստորոգյալը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Գիտի պարզ նախադասության շարադասությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա.նախադասության մեջ կարողանում է ճիշտ շարադասությամբ օգտագործել գլխավոր անդամները,
բ.նախադասության մեջ ճիշտ է կիրառում գոյականական անդամը (լրացումների շարադասությունը),
գ.նախադասության մեջ ճիշտ է կիրառում բայական անդամի լրացումները (պարագաների շարադասություն)
դ.նախադասության մեջ ճիշտ է կիրառում խնդիրների շարադասությունը:

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ տրված բառերով կազմել նախադասություն, ապա շրջել շարադասությունը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Ուսումնառության արդյունք 5.**

Գիտի նախադասության այլ տեսակները:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է տարբերակել միադեմ, բայական, անդեմ անվանական նախադասությունները,
բ.կարողանում է տարբերակել բառ-նախադասությունը (տեսակները),
գ.կարողանում է տարբերակել թերի նախադասությունը(տեսակները):

**Գնահատման միջոց.**

Ուսանողին կտրվի անհատական քարտային առաջադրանք՝ նշված օրինակներից մի դեպքում նշել բայական, մյուս դեպքում՝ անվանական անդեմ նախադասությունները: Վերականգնել թերի նախադասությունը, գրել բառ-նախադասության օրինակներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՅԼԴ 04-09-12

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլը նախատեսված է հիմնական դպրոցներում դասավանդող որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար: Մոդուլը մշակվել է հայոց լեզվի դասավանդման ընթացքում մեթոդական կարողություններ տալու, ինտերակտիվ մեթոդներով դասավանդելու հմտություններ մշակելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 62 ժամ

Տեսական ուսուցում՝ 18 ժամ
Գործնական պարապմունք՝ 44 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի նախորդ բոլոր մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ուսուցանել գրագիտություն, ձևավորել անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտություններ:
2. Կարողանա ուսուցանել հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքներ, կարողանա խթանել բառապաշարի հարստացմանը:
3. Կարողանա ձևավորել լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծություն կատարելու ունակություն:
4. Կարողանա մշակել շարադրությունների, փոխադրությունների, ռեֆերատների, համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու հմտություն:
5. Կարողանա զարգացնել աշակերտների բանավոր խոսքը կարդացածը պատմելու, քննարկելու,տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Ուսումնառության արդյունք 1.**

Կարողանա ուսուցանել գրագիտություն, ձևավորել անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտություններ:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ուսուցանել հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները,
բ. կարողանում է ուսուցանել հայերենի շեշտադրության կանոնները, շեշտից կախված հնչյունափոխությունը,
գ. կարողանում է ուսուցանել ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների ուղղագրությունը, ունենա համապատասխան առաջադրանքներ ընտրելու և հանձնարարելու հմտություններ,
դ. կարողանում է ստուգել գրավոր աշխատանքները, ուղղել ուղղագրական, կետադրական և ոճական սխալները, բացատրել և սովորեցնել ուղղագրական և ուղղախոսական նորմերը և համատեղ աշխատել դրանց կիրառության մեջ հմտանալու համար:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ցուցադրական և փորձնական դասաժամերին ճիշտ է ուսուցանում հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները, հայերենի շեշտադրության կանոնները, շեշտից

կախված հնչյունափոխությունը, ծայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների ուղղագրությունը ճիշտ է ստուգում գրավոր աշխատանքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**ՈՒսումնառության արդյունք 2.**

Կարողանա ուսուցանել հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքներ, կարողանա խթանել բառապաշարի հարստացմանը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ուսուցանել բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության(հոմանիշներ,հականիշներ,համանուններ,հարանուններ),
բ.կարողանում է ուսուցանել բառապաշարի տարբեր շերտերը՝ գրական և խոսակցական, ընդհանուր և սահմանափակ գործածության,
գ.կարողանում է ուսուցանել բառիմաստի տեսակները՝ ուղիղ և փոխաբերական, մենիմաստ և բազմիմաստ,
դ. կարողանում է ձևավորել դարձվածքներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր կիրառելու, դարձվածքները այլ բառակապակցություններից տարբերակելու, տեքստի լեզվավոճական և պատկերավորման առանձնահատկությունները ընկալելու հմտություն,
ե. կարողանում է ձևավորել բառերի տեսակներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր) դասակարգելու, բառի բաղադրիչները (արմատ, ածանց, հոդակապ, հիմք և վերջավորություն) տարբերակելու, բառակազմության հետ կապված ուղղագրությունն ու հնչյունափոխությունը ուսուցանելու կարողություններ,
զ.կարողանում է կազմել բառակազմական առաջադրանքներ՝ գրավոր և բանավոր խոսքում հոմանիշ բառերը ճիշտ կիրառելու, բառերի ճիշտ ընտրություն կատարելու և դրանք տեղին գործածելու նպատակով:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ցուցադրական և փորձնական դասաժամերին ճիշտ է ուսուցանում բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության, բառապաշարի տարբեր շերտերը բառիմաստի տեսակները, դարձվածքներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, բառերի տեսակներն ըստ կազմության:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Ուսումնառության արդյունք 3.**

Կարողանա ձևավորել լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծություն կատարելու ունակություն:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ուսուցանել նյութական բովանդակություն ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, թեքվող խոսքի մասերը(գոյական, դերանուն, բայ), մատնանշելով բանավոր խոսքի մեջ դրանց փոփոխությունները:

բ. կարողանում է ուսուցանել նյութական բովանդակությունից զուրկ կամ սպասարկու խոսքի մասերը:

գ. կարողանում է ձևավորել խոսքի մասերի քերականական հատկանիշները (գոյականի թիվը, հոլովը, առումը, դերանվան դեմքը, թիվը, հոլովը, բայի ժամանակը,եղանակը, դեմքը, թիվը, սեռը) գտնելու հմտություններ:

դ. կարողանում է մշակել ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններ, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու ունակություն:

ե. տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով կարողանում է ձևավորել գրվածքի լեզվավոճական առանձնահատկությունները բացահայտելու հմտություն:

զ.կարողանում է ուսուցանել բառակապակցությունը նախադասությունից տարբերակելու,նախադասության տեսակներն ըստ կազմության և ըստ հաղորդակցության նպատակի:

է.Կարողանում է ձևավորել շարահյուսական վերլուծություն կատարելու հմտություններ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ցուցադրական և փորձնական դասաժամերին ճիշտ է ուսուցանում նյութական բովանդակություն և նյութական բովանդակությունից զուրկ խոսքի մասերը, ճիշտ է ձևավորում խոսքի մասերի քերականական հատկանիշները գտնելու հմտություններ, մշակում է ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններ և ձևավորում շարահյուսական վերլուծություն կատարելու հմտություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Ուսումնառության արդյունք 4.**

Կարողանա մշակել շարադրությունների, փոխադրությունների, ռեֆերատների, համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու հմտություն:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է տեքստի, նրա իմաստային, կառուցվածքային ու ոճական ամբողջականության վերաբերյալ աշակերտին գիտելիքներ հաղորդել,

բ.կարողանում է ձևավորել գրավոր շարադրանքները ձևակերպելու և ներկայացնելու համար բառերը ճիշտ ընտրելու և դրանք տեղին գործածելու, հոմանիշ բառերի ոճակական նրբերանգները ճիշտ կիրառելու, գրավոր խոսքում մտքերը ճիշտ արտահայտելու, ուղղագրության և կետադրության կանոնները պահպանելու, գրական լեզվի բառակազմական, ձևաբանական, և շարահյուսական նորմերը պահպանելու հմտություններ,

գ.կարողանում է ձևավորել գրավոր խոսքում լեզվի պատկերավորման և հուզաարտահայտչական միջոցներ կիրառելու հմտություններ,

դ.կարողանում է ձևավորել ուսուցողական և ստուգողական թելադրություններ տալու և դրանք ստուգելու կարողություններ ու հմտություններ,

ե. կարողանում է ձևավորել ուսուցողական կամ ձևավորող, հայտորոշիչ և ստուգման կամ ամփոփիչ թեստեր կազմելու, հանձնարարելու և ստուգելու կարողություններ և հմտություններ:դ. Բերում է դարձվածքների օրինակներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է:

ե.Կարողանում է փոխադրել տրված հատվածի բովանդակությունը` գործածելով համապատասխան ձայնարկություններ և կետադրելով:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ցուցադրական և փորձնական դասաժամերին ճիշտ է հաղորդում գիտելիքներ տեքստի, նրա իմաստային, կառուցվածքային ու ոճական ամբողջականության վերաբերյալ: Ձևավորում գրավոր շարադրանքները ձևակերպելու և ներկայացնելու համար բառերը ճիշտ ընտրելու և դրանք տեղին գործածելու, հոմանիշ բառերի ոճակական նրբերանգները ճիշտ կիրառելու, գրավոր խոսքում մտքերը ճիշտ արտահայտելու, ուղղագրության և կետադրության կանոնները պահպանելու, գրական լեզվի բառակազմական, ձևաբանական, և շարահյուսական նորմերը պահպանելու ուսուցողական և ստուգողական թելադրություններ տալու և դրանք ստուգելու կարողություններ ու հմտություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:

Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:

Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն` | 4 ժամ |
| Գործնական` | 10 ժամ |

**ՈՒսումնառության արդյունք 5.**

Կարողանա զարգացնել աշակերտների բանավոր խոսքը կարդացածը պատմելու, քննարկելու,տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով:

**Կատարման չափանիշներ.**

ա. տարբեր բնույթի տեքստերի լեզվավոճական վերլուծության միջոցով կարողանում է ձևավորել աշակերտների լեզվական ճաշակը և խոսքի մշակույթը զարգացնելու հմտություններ:

բ. կարողանում է ուսուցանել խոսքային գործունեության տեսակները (ունկնդրում, ընթերցանություն, մտքերի գրավոր և բանավոր արտահայտում, մենախոսություն և երկխոսություն, դերային խաղ, բեմականացում, քննարկում, բանավեճ):

գ. կարողանում է ձևավորել հաղորդակցական գործունեության տեսակները (հաղորդում, հարցում, կամքի արտահայտում, ժխտում) և դրանց հետևանքով ձևավորվող խոսքի տեսակները (պատմողական,

նկարագրական, դատողական խոսք, դիմում, հրաման, հորդոր, իղձ) ուսուցանելու կարողություններ և հմտություններ:
դ. կարողանում է ձևավորել խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով հայերենի դարձվածքների հարստությունից օգտվելու,խոսքում ասացվածքներ, թևավոր խոսքեր և արտահայտություններ կիրառելու, ոճական երանգավորում ունեցող բառերն՝ ըստ անհրաժեշտության կիրառելու հմտություն:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ցուցադրական և փորձնական դասաժամերին ճիշտ է ուսուցանում խոսքային գործունեության, հաղորդակցական գործունեության տեսակները ուսուցանելու կարողություններ և հմտություններ: Ուսուցման ընթացում ձևավորում է խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով հայերենի դարձվածքների հարստությունից օգտվելու, խոսքում ասացվածքներ, թևավոր խոսքեր և արտահայտություններ կիրառելու, ոճական երանգավորում ունեցող բառերն՝ ըստ անհրաժեշտության կիրառելու հմտություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Դասախոսություն, խմբային և անհատական գործնական աշխատանք:
Ֆ. Խլղաթյան, «Ժամանակակից հայոց լեզու», Մաս Գ Երևան 2010, Լ. Եզեկյան «Հայոց լեզու», Երևան 2007թ., Արտաշես Սարգսյան, «Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց», Երևան 2007թ., Գ.Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1984թ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան 2003,:
Դ.Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Գործնական աշխատանքների ձեռնարկ», Երևան 2006, Ռ. Նազարյան, «Մայրենին բոլորի համար», Գիրք Ա:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04-09-12

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է հայ գրականության սկզբնավորման, գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի և գործունեության, 5-րդ դարի հայ մատենագության, հայ պատմիչների և նրանց ստեղծագործության մասին գաղափար տալու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 24 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 12 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի 5-րդ դարի հայ պատմիչների գործերը, Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի 5-րդ դարի հայ պատմիչների գործերը, Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը:
2. Գիտի 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագրի, հայ պատմիչների ու նրանց ստեղծագործությունների մասին:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1.

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի 5-րդ դարի հայ պատմիչների գործերը, Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը:

Կատարման չափանիշներ.

ա. կարողանում է ներկայացնել հայ գրականության սկզբնավորումը,
բ. արտահայտում, հաստատում ու պաշտպանում է իր կարծիքը նախամաշտոցյան գիր ու գրականության մասին:
գ.հիմնավորում ու պատճառաբանում է գրերի գյուտի ազգապահպան դերն ու նշանակությունը,
դ. անգիր գիտի Աստվածաշնչից թարգմանված առաջին հայերեն նախադասությունը
ե. կարողանում է պատմել Մաշտոցի հոգևոր և աշխարհիկ կյանքի, գրերի գյուտի մասին

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ռեֆերատների միջոցով հետևյալ թեմաներով՝

- Հայ գրականությունը և մշակույթը մինչև 5-րդ դ.
- Հայ գիր ու գրականության սկզբնավորումն ու զարգացումը 5-րդ դ.

Հրերի գյուտի պատմաքաղաքական և մշակութային դերը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ա. Մկրտչյան «5-րդ դ. հայ դպրություն», Երևան 1968
Մ. Մկրյան «Հայ հին գրականություն», Երևան 1976

ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

Արդյունք 2.

Գիտի 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագրի, հայ պատմիչների ու նրանց ստեղծագործությունների մասին:

Կատարման չափանիշներ.

ա. ներկայացնում է 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը,
բ. ներկայացնում է Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմություն» երկասիրության բովանդակությունը,
գ. վերլուծում է Վասակ և Մուշեղ Մամիկոնյանների կերպարները,
դ. կարողանում է արժևորել Եղիշեի «Վարդանաց պատմության» պատմական և գրական արժեքը, բնութագրել Վարդան Մամիկոնյանին, Ղևոնդ Երեցին, Վասակ Սյունեցուն, Հազկերտ II-ին և Միհրներսեհին,
ե.կարողանում է ընդհանուր գաղափար տալ Ղազար Փարպեցու«Հայոց պատմության» և «Ստախոս աբեղաների մեղադրությունը» թղթի մասին, ներկայացնել հոգևորականության շահամոլության, խարդախության, տգիտության և խավարամոլության քննադատությունն ըստ Փարպեցու «Թղթի»,
զ.կարողանում է արժևորել Խորենացու «Հայոց պատմություն» երկասիրության գրական և պատմական արժեքը, ներկայացնել առասպելների սյուժեն, բնութագրել կերպարները, ներկայացնել «Ողբը»՝ որպես ժամանակի այլանդակ բարքերի, հասարակական անարդար կարգերի մերկացում:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է հարցերի միջոցով՝ ստուգել պատմիչների աշխատությունների ընթերցվածությունը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը պատմում է առասպելների սյուժեն և բնութագրում հերոսներին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ

**Ոիսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 18 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10-12-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04-09-13

**Մոդուլի նպատակը.**

Գաղափար տալ ժամանակաշրջանի, հայկական Վերածննության սկզբնավորման, Շնորհալու, Մխիթար Գոշի ստեղծագործությունների, «Սասունցի Դավիթ» էպոսի, Գր. Նարեկացու տաղերի և «Մատյան ողբերգության պոեմի մասին:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 24 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 12 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը և հանելուկները, Մխիթար Գոշի առակները, «Սասունցի Դավիթ» էպոսը, Գր. Նարեկացու տաղերը և «Մատյան Ողբերգության» պոեմը:

**Ոիսումնառության արդյունքները.**

1. Կարողանա վերլուծել Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, իմանա հանելուկների և շարականների մասին:
2. Կարողանա ներկայացնել Մխիթար Գոշի առակները, կարողանա դասդասել ըստ թեմատիկայի, խոսել «Դատաստանագրքի» մասին:
3. Կարողանա պատմել «Սասունցի Դավիթ» էպոսի սյուժեն, վերլուծել կերպարները:
4. Կարողանա վերլուծել Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը և տաղերը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**

Կարողանա վերլուծել Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, իմանա հանելուկների և շարականների մասին:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ընդհանուր պատկերացում տալ Շնորհալու ապրած ժամանակաշրջանի մասին,
բ. կարողանում է պատմել Շնորհալու կյանքը,
գ.կարողանում է ընդհանուր գաղափար տալ նրա շարականների,գանձերի, տաղերի և հանելուկների մասին,
դ. վերլուծում է «Ողբ Եդեսիոյ» պոեմը:

**Գնահատման միջոց.**

Հանձնարարել ռեֆերատ «Հայկական վերածնության սկզբնավորումը» վերանգրով: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը վերլուծում է պոեմը և ներկայացնում դիմառնությունն

իբրև արտահայտչամիջոց, ընդհանուր գաղափար է տալիս գանձերի, շարականների և հանելուկների մասին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Մ. Աբեղյան, «Հայ հին գրականության պատմություն», Հ 2, Երևան 1946թ.
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 244-256:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 2 ժամ

**Արդյունք 2.**

Կարողանա ներկայացնել Մխիթար Գոշի առակները, կարողանա դասդասել ըստ թեմատիկայի, խոսել «Դատաստանագրքի» մասին:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել առակի ժանրը, առակագրությունը մինչև Գոշը,
բ. կարողանում է պատմել Մ. Գոշի կյանքի մասին,
գ.կարողանում է վերլուծել սոցիալական բողոք պարունակող առակները,
դ.կարողանում է վերլուծել Գոշի միապետական հայացքներն արտահայտող առակները,
ե.կարողանում է ընդհանուր պատկերացում տալ «Դատաստանագիրք հայոց» աշխատության և նրա արժեքի մասին:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է Գոշի՝ սոցիալական բողոք և միապետական հայացքներ արտահայտող առակների վերլուծությամբ և «Դատաստանագիրք հայոցի» ընդհանուր ներկայացմամբ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 266-283:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 2 ժամ

**Արդյունք 3.**

Կարողանա պատմել «Սասունցի Դավիթ» էպոսի սյուժեն, վերլուծել կերպարները:

**Կատարման չափանիշներ.**

ա. ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական էպոսի ձևավորման ժամանակաշրջանը, պատմական հիմքը և գաղափարարական բովանդակությունը,
բ.թվարկում է էպոսի ասացողներին, տարբերակները, Գարեգին Սրվանձտյանի և Մանուկ Աբեղյանի ավանդը,
գ. կարողանում է պատմել չորս ճյուղերի սյուժեն,
դ. կարողանում է բնութագրել էպոսի գլխավոր հերոսներին,
ե. կարողանում է ներկայացնել էպոսի գեղարվեստական արժեքը, պատկերավորման արտահայտչական միջոցները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը պատմում է էպոսի չորս ճյուղերի սյուժեն, բնութագրում է գլխավոր հերոսներին, ներկայացնում էպոսի գեղարվեստական արժանիքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:

«Սասունցի Դավիթ» էպոսը՝ ձևավորված Յակոբ Կոջոյանի նկարազարդումներով, Յովսեփ Օրբելու նախաբանով, Երևան 1961թ.

«Յայոց լեզու և գրականություն դպրոցում» ամսագրի 1979/1, 1982/1, 1985/2, 1986/1, 1987/1 համարները:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

**Արդյունք 4.**

Կարողանա վերլուծել Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը և տաղերը:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է պատմել Նարեկացու կյանքը և նրա շուրջ ստեղծված ավանդույթները

բ. կարողանում է վերլուծել «Մատյան ողբերգության» պոեմը՝ վերհանելով հետևյալ գաղափարները՝ապաշխարողի ինքնաձաղկումը պոեմում, մարդ և Աստված հարաբերությունը պոեմում, մարդ և սատանա հարաբերրությունը պոեմում, բանաստեղծի միստիցիզմը պոեմում, երկվությունը, կասկածը, հույսը պոեմում, դարաշրջանի գեղարվեստական լայն ընդգրկումը և

արատների քննադատությունը պոեմում, պոեմի արվեստը:

գ. կարողանում է վերլուծել «Տաղ ծննդյան», «Տաղ Վարդավառի», «Տաղ հայտնության» և «Տաղ հարության» ստեղծագործությունները, անգիր ասել հատվածներ վերոհիշյալ տաղերից,

դ. կարողանում է խոսել տաղերի գեղարվեստական արժանիքների մասին:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը վերլուծում է «Մատյան ողբերգության» պոեմը, տաղերը և անգիր արտասանում է պահանջված հատվածներ տաղերից:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:

Մ. Մկրյան, «Գրականության պատմության հարցեր», Երևան 1982թ.

Ա. Գրիգորյան «Յայոց լեզվի և գրականության դասավանդման հարցեր», Երևան 1981թ.

«Յայոց լեզու և գրականություն դպրոցում» ամսագրի 1980/1, 1980/5, 1987/6, 1990/5:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-16-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** ՅԼԴ 04 09 14

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է 13-16-րդ դարերի հայ գրականության մասին գիտելիքներ տալու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 18 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 18 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Կոստանդին Երզնկացու բանաստեղծությունները, Վարդան Այգեկցու առակները, Յովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի, Գրիգորիս Աղթամարցու, Ֆրիկի բանաստեղծությունները և Քուչակի հայրենները:

Ուսումնառության արդյունքները.

1. Կարողանա վերլուծել Կոստանտին Երզնկացու բանաստեղծությունները:
2. Կարողանա վերլուծել Վարդան Այգեկցու առակները:
3. Կարողանա վերլուծել Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծությունները:
4. Կարողանա վերլուծել Մկրտիչ Նաղաշի և Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծությունները:
5. Կարողանա վերլուծել Ֆրիկի բանստեղծությունները
6. Կարողանա վերլուծել Նահապետ Քուչակի հայրենները:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1.

Կարողանա վերլուծել Կոստանտին Երզնկացու բանաստեղծությունները:

Կատարման չափանիշներ.

ա. պատմում է Երզնկացու կյանքը,
բ. վերլուծում է Երզնկացու բարոյախրատական, գարնանը և բնությանը նվիրված բանաստեղծությունները,
գ. բացատրում է վարդի և բլբուլի այլաբանական իմաստը, ձմեռ և գարուն հակադրությունները,
դ. վերլուծում է Երզնկացու սիրային բանաստեղծությունները:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը վերլուծում է Կ. Երզնկացու սիրային, բարոյախրատական, գարնանը և բնությանը նվիրված բանաստեղծությունները, գիտի դրանցից անգիր հատվածներ, բացատրում է վարդի և բլբուլի այլաբանական իմաստը, ձմեռ և գարուն հակադրությունները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 374-384:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 2 ժամ |

Արդյունք 2.

Կարողանա վերլուծել Վարդան Այգեկցու առակները:

Կատարման չափանիշներ.

ա. կարողանում է ներկայացնել Այգեկցու կյանքը,
բ.կարողանում է վերլուծել սոցիալական բողոք պարունակող առակները,
գ.կարողանում է վերլուծել հակաեկեղեցական,հակահոգևորակա
նության տրամադրություններ արտահայտող առակները,
դ. կարողանում է վերլուծել կենցաղային թեմաներով և կյանքի զանազան հարցեր արծարծող առակները,
ե. կարողանում է ներկայացնել Այգեկցու առակավոր ճառերը:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ներկայացնում է՝ Այգեկցու կյանքը, վերլուծում է սոցիալական բողոք պարունակող, հակաեկեղեցական,հակահոգևորական տրամադրություններ արտահայտող, կենցաղային թեմաներով և կյանքի զանազան հարցեր արծարծող առակները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:

«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 283-296:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 2 ժամ

**Արդյունք 3.**

Կարողանա վերլուծել Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծությունները

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներակայացնել Թլկուրանցու կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել Թլկուրանցուն որպես սիրո երգիչ,
գ.կարողանում է մեկնաբանել կյանքի և մահվան փոխհարա բերության հարցը Թլկուրանցու ստեղծագործություններում,
դ.կարողանում է վերլուծել Թլկուրանցու խրատական բանաստեղծությունները,
ե. կարողանում է վերլուծել Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտի» լիրոէպիկական պոեմը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը պատմում է Թլկուրանցու կյանքը, ներկայացնում է նրան որպես սիրո երգիչ, մեկնաբանում է կյանքի և մահվան փոխհարաբերության հարցը Թլկուրանցու ստեղծագործություններում, վերլուծում է նրա խրատական բանաստեղծությունները և «Տաղ քաջի Լիպարիտի» լիրոէպիկական պոեմը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարապմունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 424-435:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 2 ժամ
Գործնական՝ 2 ժամ

**Արդյունք 4.**

Կարողանա վերլուծել Մկրտիչ Նաղաշի և Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է պատմել Մկրտիչ Նաղաշի և Գր. Աղթամարցու կյանքը,
բ.կարողանում է վերլուծել Նաղաշի «Վասն ազահության» բանաստեղ ծությունը,
գ.կարողանում է վերլուծել Նաղաշի«Վասն ղարիպի» բանաստեղ ծությունը,
դ.կարողանում է ներկայացնել Նաղաշի լիրիկայի սոցիալական մոտիվը,
ե. կարողանում է վերլուծել Գր. Աղթամարցու սիրո և գարնան երգերը,
զ.կարողանում է ներկայացնել Աղթամարցու խրատական բանաստեղծությունները և կաֆաները,
է. կարողանում է վերլուծել «Տաղ գեղեցիկ ի վերայ այգոյ, հոգւոյ և մարմնոյ» բանաստեղծությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացումը գնահատվում է ռեֆերատի միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարապմունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 413-424 և 455-464:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 2 ժամ
Գործնական՝ 4 ժամ

**Արդյունք 5.**
Կարողանա վերլուծել Ֆրիկի բանստեղծությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է ներկայացնել Ֆրիկի կյանքը և ապրած ժամանակաշրջանը և անձնական դրաման,
բ.կարողանում է վերլուծել «Ընդդեմ Ֆալաքին» («Բողոք Ֆրրկանն կոչեցեալ բանաստեղծի ընդդեմ բաղդին») բանաստեղծությունը,
գ. կարողանում է վերլուծել «Վասն Արղուն ղանին և Բուղային» բանստեղծությունը,
դ. կարողանում է վերլուծել «Գանգատ» («Բան ի Ֆրիկ գրքոյն») բանստեղծությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ներկայացնում է Ֆրիկի կյանքը և ապրած ժամանակաշրջանը, անձնական դրաման, վերլուծում է «Ընդդեմ Ֆալաքին», «Վասն Արղուն ղանի և Բուղայի», «Գանգատ» բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարապմունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 358-369:
«Հայոց լեզու և գրականություն դպրոցում» ամսագրի 2006/1-2:
Մ. Մկրյան, «13-18-րդ դդ. հայ աշխարհիկ գրականության պատմություն», Երևան 1938թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 4 ժամ

**Արդյունք 6.**
Կարողանա վերլուծել Նահապետ Քուչակի հայրենները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Քուչակի կյանքը և նրա հետ կապված ավանդույթները,
բ. կարողանում է ներկայացնել Քուչակին որպես սիրո երգիչ,
գ. կարողանում է վերլուծել Քուչակի խոհախրատական հայրենները,
դ. կարողանում է վերլուծել Քուչակի պանդխտությանը նվիրված հայրենները,
ե. կարող է արժևորել Քուչակի հայրենների արվեստը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ներկայացնում է Քուչակի կյանքը և նրա հետ կապված ավանդույթները, վերլուծում է սիրային, խոհախրատատական և պանդխտությանը նվիրված հայրենները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարապմունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 464-477:
Մ. Մկրյան «Գրականության պատմության հարցեր», Երևան 1982:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 4 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ՀԼԴ 04 09 15

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է Նաղաշ Հովնաթանի, Պաղդասար Դպիրի, Պետրոս Ղափանցու և Սայաթ-Նովայի ստեղծագործություններին ծանոթացնելու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 28 ժամ
Գործնական պարապմունք՝ 26 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ն. Հովնաթանի, Պ. Դպիրի, Պ. Ղափանցու և Սայաթ-Նովայի ստեղծագործությունները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա վերլուծել Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունը:
2. Կարողանա վերլուծել Պաղդասար Դպիրի և Պետրոս Ղափանցու ստեղծագործությունը:
3. Կարողանա վերլուծել Սայաթ-Նովայի ստեղծագործությունը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**
Կարողանա վերլուծել Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. պատմում է Նաղաշ Հովնաթանի կյանքը,
բ. վերլուծում է սիրո և ուրախության տաղերը,
գ. վերլուծում է երգիծական բանաստեղծությունները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը պատմում է Նաղաշ Հովնաթանի կյանքը, վերլուծում է սիրո և ուրախության տաղերը երգիծական բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 496-507:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 4 ժամ

**Արդյունք 2.**
Կարողանա վերլուծել Պաղդասար Դպիրի և Պետրոս Ղափանցու ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. պատմում է Պ. Դպիրի և Պ. Ղափանցու կյանքը,
բ. վերլուծում է Պ. Դպիրի սիրո և գարնան տաղերը,
գ. վերլուծում է Պ. Ղափանցու գարնան և բնության երգերը,
դ. կարողանում է ներկայացնել երկու բանաստեղծներին իբրև պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ և նրանց երգերի կրոնական-պահպանողական բովանդակությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը պատմում է Պաղդասար Դպրիր և Պետրոս Ղափանցու կյանքը, վերլուծում է Դպիրի սիրո և գարնան տաղերը, Ղափանցու գարնան և բնության երգերը,

ներկայացնում է երկու բանաստեղծներին իբրև պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ և նրանց երգերի կրոնական-պահպանողական բովանդակությունը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ա. Մկրտչյան «Նյութեր 10-18-րդ դդ. հայոց գրականության պատմության», պրակ Գ, Երևան 1946թ. էջ 89-94 և 104-108:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

**Արդյունք 3.**
Կարողանա վերլուծել Սայաթ-Նովայի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. պատմում է Սայաթ-Նովայի կյանքը,
բ. ներկայացնում է ժամանակաշրջանի արտացոլումը նրա պոեզիայում,
գ. ներկայացնում է Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեջաներեն բանաստեղծությունները և Մեծ գուսանի եռալեզու խաղերի հիմքը,
դ. վերլուծում է «Ամեն սազի մեջն գոված» բանաստեղծությունը,
ե. վերլուծում է «Դուն էն գլխեն իմաստուն իս» բանաստեղծությունը,
զ. վերլուծում է «Քանի վուր ջան իմ, յար…» բանաստեղծությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ներկայացնում է ժամանակաշրջանը և պատմում է Սայաթ-Նովայի կյանքը, վրացերեն և ադրբեջաներեն բանաստեղծությունները, վերլուծում է և անգիր է ասում «Ամեն սազի մեջն գոված», «Դուն էն գլխեն իմաստուն իս» «Քանի վուր ջան իմ, յար…» բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
«Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ.», ԵՊՀ, Երևան 1976թ. էջ 561-ից:
Մ.Մկրյան «Գրականության պատմության հարցեր», Երևան 1982թ.,
Ռ. Իշխանյան «Մեր ինքնության գլխավոր նշանը», Երևան 1991թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 16 ժամ |
| Գործնական՝ | 16 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 16

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է ներկայացնելու համար 19-րդ դարի առաջին կեսի հայ գրականությունը, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի,Ղևոնդ Ալիշանի և Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 34 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 20 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Հարություն Ալամդարյանի «Չափաբերականք» խորագրով ժողովածուն և բանաստեղծությունները, Մեսրոպ Թաղիադյանի չափածո երգերը,«Սոս և Սոնդիպի» լիրոէպիկական պոեմը,«Վեպ Վարսենկան» ստեղծագործությունները, «Ճանապարհորդություն ի հույս» գիրքը, Ղևոնդ Ալիշանի «Եղծ նահապետի շարքը», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, «Պարապ վախտի խաղալիք» և «Թուրքի աղջիկը» պատմվածքը:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել Ալամդարյանի ստեղծագործությունը:
2. Կարողանա ներկայացնել Մեսրոպ Թաղիադյանի ստեղծագործությունը:
3. Կարողանա ներկայացնել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը:
4. Կարողանա ներկայացնել Խաչատուր Աբովյանին՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր և վերլուծել «Վերք Հայաստանի» վեպը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**
Կարողանա ներկայացնել Ալամդարյանի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել Հ. Ալամդարյանի լիրիկան,
բ.կարողանում է ներկայացնել «Չափաբերականք» խորագրով ժողովածուն,
գ.կարողանում է ներկայացնել Հարություն Ալամդարյանի քնարերգության կրոնական և աշխարհիկ մոտիվները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքը համարվում է յուրացված եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Հարություն Ալամդարյանի լիրիկան, «Չափաբերականք» խորագրով ժողովածուն, քնարերգության կրոնական և աշխարհիկ մոտիվները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

**Արդյունք 2.**
Կարողանա ներկայացնել Մեսրոպ Թաղիադյանի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Մ. Թաղիադյանի կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել Թաղիադյանի չափածո երգերը,
գ. կարողանում է վերլուծել «Սոս և Սոնդիպի» լիրոէպիկական պոեմը,
դ. կարողանում է վերլուծել «Վեպ Վարդգեսի» և «Վեպ Վարսինկան» արձակները,
ե. կարողանում է ներկայացնել «Ճանապարհորդություն ի հույս» գիրքը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատմում Մ. Թաղիադյանի կյանքը, ներկայացնում Թաղիադյանի չափածո երգերը, վերլուծում «Սոս և Սոնդրիպի» լիրոէպիկական պոեմը, «Վեպ Վարդգեսի» և «Վեպ Վարսինկան» ստեղծագործությունները, ներկայացնում է «Ճանապարհորդություն ի Հայս գիրքը»:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Միրզաբեկյան, «Մեսրոպ Թաղիադյան»:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 12 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

Արդյունք 3.
Կարողանա ներկայացնել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Ալիշանի կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել Ալիշանի՝ հայ ժողովրդի պատմական անցյալի քնարական կերպավորումը նրա գրաբար և աշխարհաբար բանաստեղծություններում,
գ. կարողանում է ներկայացնել Ալիշանին որպես հայ ազգային շարժման գաղափարախոս և վերլուծել «Երգ Նահապետի» շարքը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքը համարվում է յուրացված եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Ղ. Ալիշանի կյանքը, հայ ժողովրդի պատմական անցյանլի քնարական կերպավորումը նրա գրաբար և աշխարհաբար բանաստեղծություններում. բնութագրել Ալիշանին՝ որպես հայ ազգային շարժման գաղափարախոս և վերլուծել «Երգ նահապետի»:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ս. Սարգսյան, «Ղևոնդ Ալիշան», Երևան 1978թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

Արդյունք 4.
Կարողանա ներկայացնել Խաչատուր Աբովյանին՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր և վերլուծել «Վերք Հայաստանի» վեպը

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Խաչատուր Աբովյանի կյանքը,
բ.կարողանում է ներկայացնել Աբովյանին որպես հայ նոր գրականության հիմնադիր,
գ. կարողանում է պատմել «Վերք Հայաստանի» վեպի սյուժեն,
դ. կարողանում է ներկայացնել վեպի թեման և գաղափարը,
ե.կարողանում է բնութագրել Աղասուն՝ որպես նոր տիպի հերոս հայ գրականության մեջ,
զ.կարողանում է ներկայացնել«Պարապ վախտի խաղալիքը» ստեղծագործությունը
է.կարողանում է ներկայացնել«Թուրքի աղջիկը»և «Առաջին սերը» պատմվածքները
ը.կարողանում է ներկայացնել «Պատմություն Միրանի» մանկավար
ժական բնույթի երկը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է պատմում Խ. Աբովյանի կյանքը, ներկայացնում Աբովյանին՝ որպես Հայ նոր գրականության հիմնադիր, վերարտադրում է «Վերք Հայաստանի» վեպի սյուժեն, ներկայացնում է վեպի թեման և գաղափարը, բնութագրում է Աղասուն՝ որպես նոր տիպի հերոս, ներկայացնում է «Պարապ վախտի խաղալիք» ստեղծագործությունը, «Թուրքի աղջիկ» և «Առաջին սեր» պատմվածքները, և «Պատմություն Միհրանի» մանկավարժական բնույթի երկը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:

Վ. Ղազարյան, «Խաչատուր Աբովյան», Երևան 1979թ., Ն. Կարապետյան, «Վերք Հայաստանի վեպի պատմական աղբյուրները»:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 12 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 17

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է, որպեսզի ուսանողները ծանոթանան Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Սմբատ Շահազիզի, Ղևոնդ Ալիշանի, Միքայել Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի և Պետրոս Դուրյանի ստեղծագործություններին, ներկայացնեն և վերլուծեն դրանք:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 28 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 26 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ղ.Ալիշանի, Մ.Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի ստեղծագործությունները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Սմբատ Շահազիզի ստեղծագործությունները:
2. Կարողանա ներկայացնել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը:
3. Կարողանա պատմել Միքայել Նալբանդյանի կյանքը, հասարակական գործունեությունը, ներկայացնել ստեղծագործությունները:
4. Կարողանա պատմել Ռաֆայել Պատկանյանի կյանքը, վերլուծել հայրենասիրական պոեզիան, ներկայացնել վիպակները:
5. Կարողանա պատմել Պետրոս Դուրյանի կյանքը, վերլուծել քնարերգությունը, ներկայացնել Դուրյանի դրամաները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**
Կարողանա ներկայացնել Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Սմբատ Շահազիզի ստեղծագործությունները

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Սմբատ Շահազիզի կյանքը,
բ. կարողանում է վերլուծել Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմը,
գ.կարողանում է ներկայացնել Պեշիկթաշլյանին՝ որպես ազատագրական պայքարի երգիչ. վերլուծել զեյթունյան շարքի բանաստեղծությունները,
դ.կարողանում է ներկայացնել Պեշիկթաշլյանին՝ իբրև դրամատուրգ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի գնահատումը իրականացվում է ռեֆերատի միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 6 ժամ

**Արդյունք 2.**
Կարողանա ներկայացնել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Ղ. Ալիշանի կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել «Մաղթունի » , «Բնունի», «Հայրունի» շարքերը,
գ. կարողանում է ներկայացնել Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական քնարը,
դ. կարողանում է ներկայացնել Ալիշանի՝ անցյալի ազատագրական պայքարի դրվագները («Պլպուլն Ավարայրի»,«Աշոտ Երկաթ և Ծավուն Սևանա» պոեմները):

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է պատմում Ղ. Ալիշանի կյանքը, ներկայացնում «Մաղթունի», «Բնունի», «Հայրունի» շարքերը, հայրենասիրական քնարը և անցյալի ազատագրական պայքարի դրվագները («Պլպուլն Ավարայրի», «Աշոտ Երկաթ ի ծովում Սևանա») պոեմները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 6 ժամ

**Արդյունք 3.**
Կարողանա պատմել Միքայել Նալբանդյանի կյանքը, հասարակական գործունեությունը, ներկայացնել ստեղծագործությունները

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Մ. Նալբանդյանի կյանքը, հեղափոխական և հյուսիսափայլյան շրջանի գործունեությունը
բ. կարողանում է ներկայացնել «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները
գ. կարողանում է ներկայացնել «Նրա ժամանակը» աշխատությունը
դ. կարողանում է ներկայացնել Նալբանդյանի իբրև քննադատ. նրա «Կրիտիկա»,«Սոս և Վարդիթեր» աշխատությունը
ե. կարողանում է վերլուծել«Ազատություն», «Մանկության օրեր» բանաստեղծությունները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Մ. Նալբանդյանի կյանքը, հեղափոխական և հյուսիսափայլյան շրջանի գործունեությունը, «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Նորա ժամանակը» աշխատությունները, վերլուծում է «Ազատություն», «Մանկության օրեր» բանաստեղծությունները» ու ներկայացնում է Նալբանդյանին՝ որպես քննադատ(«Կրիտիկա», «Սոս և Վարդիթեր»):

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Մ. Մկրյան, «Գրականության պատմության հարցեր», Երևան 1982թ, Գ. Էմին, «Մաշտոցից մինչև մեր օրերը», Երևան 1984թ., էջ 28:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 6 ժամ
Գործնական՝ 6 ժամ

Արդյունք 4.
Կարողանա պատմել Ռաֆայել Պատկանյանի կյանքը, վերլուծել հայրենասիրական պոեզիան, ներկայացնել փիպակները

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է պատմել Ռ.Պատկանյանի կյանքը և գործունեությունը
բ. կարողանում է ներկայացնել Ռ. Պատկանյանին՝ իբրև սուլթանական լծի դեմ մղվող ազատագրական պայքարի երգիչ
գ. կարողանում է վերլուծել «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը
դ. կարողանում է ներկայացնել Պատկանյանին իբրև երգիծաբան. «Նոր Նախիջևանի» քնարը
ե. կարողանում է ներկայացնել Պատկանյանին՝ իբրև արձակագրի:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Ռ. Պատկանյանի կյանքը և գործունեությունը, Պատկանյանն իբրև սուլթանական լծի դեմ մղվող ազատագրական պայքարի երգիչ, Պատկանյանին իբրև երգիծաբան («Նոր Նախիջևանի» քնար), վերլուծում է «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ռուդոլֆ Սիմոնյան, «Ռափայել Պատկանյան», Երևան 1976թ., Վ. Մկրտչյան, «Ռափայել Պատկանյան», Երևան 1966թ., Սերգեյ Սարինյան, «Հայոց գրականության երկու դարը», Երևան 1988թ.,:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

Արդյունք 5.
Կարողանա պատմել Պետրոս Դուրյանի կյանքը, վերլուծել քնարերգությունը, ներկայացնել Դուրյանի դրամաները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Դուրյանի կյանքը,
բ. կարողանում է վերլուծել Դուրյանի սիրային քնարերգությունը,
գ.կարողանում է վերլուծել Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունը,
դ. կարողանում է ներկայացնել Դուրյանին որպես հայրենիքի երգիչ,
ե. կարողանում է ներկայացնել Դուրյանին իբրև դրամատուրգ,
զ. կարողանում է վերլուծել «Լճակ բանաստեղծությունը»:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է պատմում Պ. Դուրյանի կյանքը, վերլուծում սիրային քնարերգությունը «Տրտունջք», «Լճակ» բանաստեղծությունները, ներկայացնում է Դուրյանին որպես հայրենիքի երգիչ, իբրև դրամատուրգ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ալ. Շարուրյան, «Պետրոս Դուրյան», Երևան 1972թ., «Սկյուտարի սոխակը», Երևան 1977թ., «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հուշերում», երևան 1982թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 80-90- ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ »

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 18

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է, որպեսզի ուսանողները ծանոթանան 19-րդ դարի 80-90-ական թվականների գրականությանը, վերլուծեն և ներկայացնեն Ծերենցի , Գաբրիել Սունդուկյանի, Րաֆֆու, Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 34 ժամ
Գործնական պարապմունք՝ 20 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ծերենցի, Գ.Սունդուկյանի, Րաֆֆու, Հ. Պարոնյանի գործերը:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել Ծերենցի (Հովսեփ Շիշմանյան)ստեղծագործությունը,
2. Կարողանա ներկայացնել Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը,
3. Կարողանա ներկայացնել Րաֆֆու ստեղծագործությունը,
4. Կարողանա ներկայացնել Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է

**Արդյունք 1.**
Կարողանա ներկայացնել Ծերենցի(Հովսեփ Շիշմանյան)ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Ծերենցի կյանքը,
բ. կարողանում է վերլուծել «Թորոս Լևոն » պատմավեպը,
գ. կարողանում է վերլուծել «Երկունք Թ դարու» պատմավեպը,
դ. կարողանում է վերլուծել «Թեոդորոս Ռշտունի » պատմավեպը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացման ձեռքբերումը կատարվում է ռեֆերատի միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Լ. Ասմարյան, «Գ. Սունդուկյանի կյանքը և ստեղծագործությունը», Երևան 1980թ., Ս. Հարությունյան, «Գ. Սունդուկյան», Երևան 1976թ., Ա. Բաբայան, «Գ. Սունդուկյանի ստեղծագործությունը», Երևան 1988թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 2 ժամ

**Արդյունք 2.**
Կարողանա ներկայացնել Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը,

**Կատարման չափանիշներ.**

ա. ա. կարողանում է պատմել Գ.Սունդուկյանի կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել 60-ական թվականների գործերը, վերլուծել «Գիշերվա սաբրը խեր է», «Եվ այլն կամ նոր Դիոգենես», «Օսկան Պետրովիչը էն կինիքում», «Խաթաբալա» գործերը,
գ. կարողանում է ներկայացնել 70-80-ական թվականների գործերը, վերլուծել «էլի մեկ զոհ» կատակերգությունը, «Քանդած օջախ» պիեսը,
դ. կարողանում է ներկայացնել Սունդուկյանի վերջին շրջանի՝ 1905թ. հեղափոխությունից հետո գրված գործերը, վերլուծել «Սեր և ազատությունը», «Կտակ» պատմվածքը,

ե. կարողանում է վերլուծել «Պեպոն»:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը կարողնում է ճիշտ ներկայացնել Գ. Սունդուկյանի 60-ական, 70-80-ական, և վերջին շրջանի՝ 1905թ. հեղափոխությունից հետո գրված գործերը, վերլուծում է «Գիշերվա սաբրը խեր է», «Եվ այլն կամ նոր Դիոգենես», «Օսկան Պետրովիչը էն կինիքում», «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Քանդած օջախ», «Սեր և ազատությունը», «Կտակ», «Պեպո» գործերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

Արդյունք 3.
Կարողանա ներկայացնել Րաֆֆու ստեղծագործությունը,

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Րաֆֆու կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել Րաֆֆու ստեղծագործության առաջին շրջանը և վերլուծել «Սալբի», «Յարեմ» վեպերը,
գ. կարողանում է ներկայացնել Րաֆֆու ստեղծագործության երկրորդ շրջանը, վերլուծել ծրագրային-քաղաքական գործերը «Ջալալեդդին », «Խենթը», «Կայծերը»,
դ. կարողանում է ներկայացնել Րաֆֆու ստեղծագործության երրորդ շրջանը և այդ ընթացքում գրված պատմավեպերը՝ «Դավիթ Բեկը», «Սամվելը», «Պարույր Յայկազնը»:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը կարողնում է ճիշտ ներկայացնել Րաֆֆու կյանքը,ստեղծագործության երեք շրջանները, վերլուծել՝ «Սալբի», «Յարեմ», «Ջալալեդդին», «Խենթը», «Կայծերը», «Դավիթ Բեկը», «Սամվելը», «Պարույր Յայկազնը»:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ա. Տերտերյան, «Երկեր», Երևան 1980թ., Սամվելյան, «Րաֆֆի», Երևան 1987թ., Յովսասափյան «Գրականության ուսուցման հարցեր», Երևան 1979թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 14 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

Արդյունք 4.
Կարողանա ներկայացնել Յակոբ Պարոնյանի ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմելՅակոբ Պարոնյանի կյանքը,
բ. կարողանում է ներկայացնել Պարոնյանի քաղաքական սատիրան, մտավորականության խավարամոլության քննադատությունը «Ազգային ջոջեր»-ում,
գ. կարողանում է ներկայացնել և վերլուծել «Կսմիթներ» ու «Յոսոսի ձեռատետրը»,
դ. կարողանում է ներկայացնել Պարոնյանի սոցիալական սատիրան, վերլուծել «Մեծապատիվ մուրացկանները» վեպը,
ե. կարողանում է ներկայացնել «Պաղտասար աղբարը»՝ որպես ռեալիստական դրամատուրգիայի գլուխգործոց,
զ. կարողանում է մեկնաբանել Պարոնյանի աֆորիզմները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը կարողնում է ճիշտ ներկայացնել Հ. Պարոնյանի կյանքը, մտավորականության խավարամոլությունը, քաղաքական և սոցիալական սատիրան , ինչպես նաև վերլուծել «Ազգային ջոջեր», «Կամիքներ», «Հոսսի ձեռատետրը», «Մեծապատիվ մուրացկաններ» և «Պաղդասար աղբար» ստեղծագործությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Հովի. Ղանալանյան, «Հոդվածներ և հուշեր», Երևան 1979թ., Ս. Աղաբաբյան, «Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր», Երևան 1982թ., Մ. Մկրյան, «Գրականության պատմության հարցեր», Երևան 1982թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն` | 8 ժամ |
| Գործնական` | 4 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ 20-30-ԱԿԱՆ ԹԹ.

**Մոդուլի դասիչը`** ՀԼԴ 04 09 20

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է 1940-1980-ական թվականների հայ գրականության մասին գիտելիքներ հաղորդելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը`** 108 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում` | 72 ժամ |
| Գործնական պարապմունք` | 36 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Եղիշե Չարենցի, Դեմիրճյանի, Զորյանի, Բակունցի, Համաստեղի, Թոթովենցի, Գուրգեն Մահարու և Շահան Շահնուրի ստեղծագործությունները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել Եղիշե Չարենցի կյանքը և ստեղծագործությունը:
2. Կարողանա ներկայացնել Դերենիկ Դեմերճյանի կյանքը և ստեղծագործությունը:
3. Կարողանա ներկայացնել Ստեփան Զորյանի կյանքը և ստեղծագործությունը:
4. Կարողանա ներկայացնել Ակսել Բակունցի կյանքը և ստեղծագործությունը:
5. Կարողանա ներկայացնել Համաստեղի, Թոթովերցի, Մահարու, Շահան Շահնուրի կյանքը և ստեղծագործությունները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**
Կարողանա ներկայացնել Եղիշե Չարենցի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել Չարենցի կյանքը և ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է վերլուծել «Դանթեական առասպել», «Ամբոխները խելագարված» պոեմները,
գ. կարողանում է վերլուծել «Տաղ անձնական», «Հեռացումի խոսքեր», «Մահվան տեսիլ» բանաստեղծությունները,
դ. կարողանում է վերլուծել «Երկիր Նաիրի» վեպը,
ե. կարողանում է ներկայացնել «Էպիկական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները,
զ. կարողանում է վերլուծել «Դեպի լյառը Մասիս» և «Պատմության քառուղիներով» պոեմները,

է.կարողանում է վերլուծել և արտասանել«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը կարողնում է ճիշտ ներկայացնել Ե. Չարենցի կյանքը և ստեղծագործական դիմանկարը, «էպիկական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները, վերլուծել «Ամբոխները խելագարված», «Դանթեական առասպել», «Դեպի լյառն Մասիս» և «Պատմության քառուղիներով» պոեմները ինչպես նաև «Տաղ անձնական», «Հեռացումի խոսքեր», «Մահվա տեսիլք», «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն Հր. Թամրազյան, «եղիշե Չարենց», Երևան 1981թ., «Երիտասարդ Չարենցը», Երևան 1974թ., Սուրեն Աղաբաբյան, «եղիշե Չարենց» Հ-1, Երևան 1973, Ռուբեն Զարյան, «Հուշապատում», Հ-1, 1975թ. էջ 69-106, Վաչե Պարտիզունի, «Տաղանդի ուժը», Երևան 1977թ., Դավիթ Գասպարյան, «Բանաստեղծի ոգին», Երևան 1980թ., «եղիշե Չարենց. Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը», Երևան 1996թ., «եղիշե Չարենց. նորահայտ էջեր», Երևան 1996թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն` 18 ժամ
Գործնական` 8 ժամ

**Արդյունք 2.**
Կարողանա ներկայացնել Դերենիկ Դեմերճյանի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Դեմերճյանի կյանքը և ներկայացնել նրա ստեղծագործական դիմանկարը,
բ.կարողանում է ներկայացնել Դեմիրճյանի ստեղծագործության առաջին շրջանի պատմվածքները և վերլուծել դրանք /«Ավելորդը»,«Տերտերը»,«Ժպիտը», «Խանութպանը», «Ստամոքսը»/,
գ. կարողանում է ներկայացնել Դեմիրճյանի դրամաները` «Քաջ Նազար» և «Երկիր Հայրենին»,
դ.կարողանում է ներկայացնել «Վարդանանք» պատմավեպը, բնութագրել կերպարները,
ե. կարողանում է վերլուծել «Զուբակ և սրինգ» և «Գիրք ծաղկանց» պատմվածքները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը կարողնում է ճիշտ ներկայացնել Դ. Դեմիրճյանի կյանքը, վերլուծել «Ավելորդը», «Տերտերը», «Ժպիտը», «Խանութպանը», «Ստամոքսը», «Զուբակ և սրինգ» և «Գիրք ծաղկանց» պատմվածքները, «Քաջ Նազարը», «Երկիր Հայրենին» և «Վարդանանքը»:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն` Հրաչյա Սուրադյան, «Դերենիկ Դեմիրճյան», Երևան 1961թ., Հր. Թամրազյան, «Դերենիկ Դեմիրճյան», Երևան 1976թ., Տիգրան Հախումյան, «Սովետահայ գրականության պատմություն», Հ-2, Երևան 1965թ., էջ 105-167, Վահագն Մկրտչյան, «Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը», Երևան 1977թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն` 16 ժամ
Գործնական` 8 ժամ

**Արդյունք 3.**
Կարողանա ներկայացնել Ստեփան Զորյանի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել Ստեփան Զորյանի կյանքը և ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել «Տխուր մարդիկ» շարքը, վերլուծել պատմվածքները,
գ. կարողանում է ներկայացնել «Ցանկապատ» շարքը և վերլուծել պատմվածքները,
դ. կարողանում է ներկայացնել «Խնձորի այգին» շարքը և վերլուծել պատմվածքները,

ե. կարողանում է ներկայացնել «Պատերազմ» շարքը և վերլուծել պատմվածքները,
զ. կարողանում է ներկայացնել «Պապ թագավոր» և «Հայոց բերդը» պատմավեպերը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Ստ. Զորյանի կյանքը, «Տխուր մարդիկ», «Ցանկապատ», «Խնձորի այգին», «Պատերազմ» շարքերը, վերլուծում է համանուն պատմվածքները և «Պապ թագավոր», «Հայոց բերդը» պատմավեպերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝ Խորեն Սարգսյան, «Ստեփան Զորյան», Երևան 1960թ., Սուրեն Աղաբաբյան, «Ստեփան Զորյան», Երևան 1976թ., Էդուարդ Թոփչյան, «Հայ գրականության երրորդ գիրք», Երևան 1954թ., Վերա Ամիրխանյան, «Ստեփան Զորյանի փոքրածավալ արձակը», Երևան 1985թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 14 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

**Արդյունք 4.**
Կարողանա ներկայացնել Ակսել Բակունցի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է ներկայացնել Ակսել Բակունցի կյանքը և ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել «Մթնաձոր» ժողովածուն,
գ. կարողանում է ներկայացնել «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուն,
դ.կարողանում է վերլուծել «Նամակ Ռուսաց թագավորին» պատմվածքը,
ե.կարողանում է վերլուծել «Եղբայրության ընկուզենիներ» պատմվածքը,
զ. կարողանում է վերլուծել «Խոնարհ աղջիկը», «Միրհավ» և «Մթնաձորի չարքը» պատմվածքները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Ակսել Բակունցի կյանքը և ստեղծագործական դիմանկարը, «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուները, վերլուծում է «Նամակ Ռուսաց թագավորին», «Եղբայրության ընկուզենիներ», «Խոնարհ աղջիկը», «Միրհավ» և «Մթնաձորի չարքը» պատմվածքները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Սուրեն Աղաբաբյան, «Սովետահայ գրականության պատմություն», Հ-1, Երևան 1961թ., էջ 427-498, Սուրեն Աղաբաբյան, «Ակսել Բակունց», Երևան 1971թ., Հարություն Մկրտչյան, «Ակսել Բակունց», Երևան 1958թ., Ալմաստ Զաքարյան, «Ավանդների ուժը», Երևան 1982թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 12 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

**Արդյունք 5.**
Կարողանա ներկայացնել Համաստեղի, Թոթովերցի, Մահարու, Շահան Շահնուրի կյանքը և ստեղծագործությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել Համաստեղի, Վահան Թոթովենցի, Գուրգեն Մահուրու և Շահան Շահնուրի կյանքը, ներկայացնել նրա ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել Համաստեղի «Գյուղը», «Անձրև» ժողովածուները,
գ. կարողանում է ներկայացնել Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» կենսագրական վիպակը,
դ.կարողանում է ներկայացնել Գուրգեն Մահուրու «Ծաղկած փշալարեր» և «Այրվող այգեստաններ» վեպը,

զ. կարողանում է ներկայացնել Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպը, «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքը:

**Գնահատման միջոց.**

Գնահատումը կատարվում է ռեֆերատների միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարապմունքների միջոցով:
Ս. Աղաբաբյան, «Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր», Երևան 1982թ.:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 12 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1940-1980-ԱԿԱՆ ԹԹ.»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09-19

**Մոդուլի նպատակը.**

Այս մոդուլը մշակվել է 19-րդ դարի 20-30-ական թվականների հայ գրականության մասին գիտելիքներ հաղորդելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 72 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 40 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 32 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի, Պարույր Սևակի, Հրանտ Մաթևոսյանի և տարագիր հայ գրողների ստեղծագործությունները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել Հովհաննես Շիրազի կյանքը և ստեղծագործությունը:
2. Կարողանա ներկայացնել Համո Սահյանի կյանքը և ստեղծագործությունը:
3. Կարողանա ներկայացնել Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունը:
4. Կարողանա ներկայացնել Հրանտ Մաթևոսյանի կյանքը և ստեղծագործությունը
5. Կարողանա ներկայացնել տարագիր հայ գրողների կյանքը և ստեղծագործությունները:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**

Կարողանա ներկայացնել Հովհաննես Շիրազի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Հ.Շիրազի կյանքը և տալ նրա ստեղծագործական դիմանակարը,
բ. կարողանում է ներկայացնել «Գարնանամուտ» ժողովածուն,
գ. կարողանում է ներկայացնել «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն,
դ. կարողանում է ներկայացնել «Բանաստեղծի ձայնը», «Երգերի գիրք» և «Լիրիկա» ժողովածուները,
ե. կարողանում է ներկայացնել «Բիբլիական» պոեմը,
զ. կարողանում է ներկայացնել «Քնար Հայաստանի» երկհատոր ժողովածուն,
է. կարողանում է ներկայացնել «Հայոց Դանթեական» պոեմը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Հովհաննես Շիրազի կյանքը և ստեղծագործական դիմանկարը, «Գարնանամուտ», «Հուշարձան մայրիկիս», «Բանաստեղծի ձայնը», «Երգերի գիրք», «Քնար Հայաստանի» և «Լիրիկա» ժողովածուները, վերլուծում է «Բիբլիական» և «Հայոց Դանթեականը» պոեմները, անգիր է արտասանում հանձնարարված բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ս. Սողոմոնյան, «Ժամանակակից հայ բանաստեղծություն», Հ-2, Երևան 1967թ., Ս. Աքաբեկյան, «Հովհաննես Շիրազի քնարերգությունը», Երևան 1979թ., Գ. Հովսեփյան, «Գրական դիմագծեր», Երևան 1981թ., Սուրեն Աղաբաբյան, «Սովետահայ գրականության պատմություն», Հ-2, Երևան 1965թ., էջ 290-330, Լևոն Բատիկյան, «Հովհաննես Շիրազի մայրականը», Երևան 1976թ., Հր. Թամրազյան, «Գրական դիմանկարներ հոդվածներ», Երևան 1975թ., էջ 198-224:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Արդյունք 2.**
Կարողանա ներկայացնել Համո Սահյանի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է պատմել Համո Սահյանի կյանքը և տալ ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել «Նաիրյան դալար բարդի» ժողովածուն,
գ. կարողանում է ներկայացնել «Հայաստանը երգերի մեջ» ժողովածուն,
դ. կարողանում է ներկայացնել «Մայրամուտից առաջ» ժողովածուն,
ե. կարողանում է ներկայացնել «Քարափների երգը» ժողովածուն,
զ. կարողանում է ներկայացնել «Սեզամ, բացվիր» ժողովածուն,
է. կարողանում է ներկայացնել «Իրիկնահաց» ժողովածուն,
ը. կարողանում է ներկայացնել «Ժայռից մասուր է կաթում» ժողովածուն:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Համո Սահյանի կյանքը և ստեղծագործական դիմանկարը, «Նաիրյան դալար բարդի», «Հայաստանը երգերի մեջ», «Մայրամուտից առաջ»,
«Քարափների երգը», «Սեզամ, բացվիր», «Իրիկնահաց», «Ժայռից մասուր է կաթում» ժողովածուները և անգիր է արտասանում հանձնարարված բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Աիդա Հայրապետյան, «Համո Սահյանի բանաստեղծական աշխահրը», Երևան 1977թ., Ս. Աղաբաբյան, «Դեպի աղբյուրը լույսի», Երևան 1979թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

**Արդյունք 3.**
Կարողանա ներկայացնել Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել Սևակի կյանքը և տալ նրա ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել «Անմահները հրամայում են » ժողովածուն,
գ. կարողանում է ներկայացնել «Սիրո ճանապարհ» ժողովածուն,
դ. կարողանում է վերլուծել «Անլռելի զանգակատուն» պոեմը,
ե. կարողանում է ներկայացնել «Մարդը ափի մեջ» ժողովածուն,
զ. կարողանում է ներկայացնել «Եղիցի լույս» ժողովածուն:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործություններ՝ «Անմահները հրամայում են », «Սիրո ճանապարհ», «Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս» ժողովածուները և վերլուծում է «Անլռելի զանգակատուն» պոեմը, արտասանում է հանձնարարված բանաստեղծությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Ս. Սողոմոնյան, «Ժամանակակից հայ բանաստեղծներ», Հ-2, Երևան 1967թ., Ս. Սարինյան, «Հայոց գրականության երկու դարը», Երևան 1988թ., Ալմաստ Զաքարյան, «Ավանդների ուժի», 1981թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 8 ժամ
Գործնական՝ 6 ժամ

**Արդյունք 4.**

Կարողանա ներկայացնել Հրանտ Մաթևոսյանի կյանքը և ստեղծագործությունը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Հրանտ Մաթևոսյանի կյանքը և տալ ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է ներկայացնել «Օգոստոս» ժողովածուն,
գ. ներկայացնել «Բեռնածիեր» շարքը,
դ. ներկայացնել «Ծառերը» ժողովածուն:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում Հրանտ Մաթևոսյանի կյանքը և ստեղծագործություններ՝ «Օգոստոս», «Բեռնածիեր», «Ծառերը» ժողովածուները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Հովհ. Ղազարյան, «Գրողն ու իրականությունը», Երևան 1981թ., Վ. Գրիգորյան, «Հրանտ Մաթևոսյան», Երևան 1989թ., Կիմ Աղաբեկյան, «Հրանտ Մաթևոսյան», Երևան 1988թ.:

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 8 ժամ
Գործնական՝ 4 ժամ

**Արդյունք 5.**
Կարողանա ներկայացնել տարագիր հայ գրողների կյանքը և ստեղծագործությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է պատմել Վիլյամ Սարոյանի կյանքը և ներկայացնել նրա ստեղծագործական դիմանկարը,
բ. կարողանում է պատմել Մայքլ Արլենների կյանքը և ներկայացնել «Արարատ» գիրքը,
գ. կարողանում է պատմել Վահե Քաչայի կյանքը և ներկայացնել նրա ստեղծագործությունը,
դ. կարողանում է պատմել Շարլ Ազնավուրի կյանքը և ներկայացնել նրա ստեղծագործությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի յուրացման ձեռքբերումը գնահատվում է ռեֆերատի միջոցով:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 8 ժամ

Գործնական՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09-21

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլը նախատեսված է հիմնական դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար: Մոդուլը մշակվել է գրականության դասավանդման ընթացքում մեթոդական կարողություններ տալու, ինտերակտիվ մեթոդներով դասավանդելու հմտություններ մշակելու նպատակով:

**Մոդուլի տևողությունը՝** 62 ժամ

Տեսական ուսուցում՝ 20 ժամ
Գործնական պարապմունք՝ 42 ժամ

**Մուտքային պահանջները.**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Գրականության տեսություն», «Հայ գրականություն», «Մանկական գրականություն», «Ռուս և արտասահմանյան գրականություն» մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները.**

1. Իմանա ուսումնական ծրագրի մեջ ընդգրկված հայ և արտասահմանյան հեղինակների ստեղծագործությունները: Իմանա հայ և այլ ժողովուրդների բանահյուսության հանրահայտ նմուշները և կարողանա համեմատական գնահատականներ տալ:
2. Կարողանա ուսուցանել գրականագիտական–տեսական գիտելիքներ, ձևավորել գրականության տեսության հիմնական հասկացությունների, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերության, արվեստի այլ տեսակների միջև զուգահեռներ անցկացնելու կարողություն:
3. Կարողանա մշակել գրական երկի բովանդակության ընկալման, ենթատեքստի ըմբռնման, գրական ստեղծագործությունը վերլուծելու, պատկերային համակարգի բացահայտման ունակություններ:
4. Կարողանա ուսուցանել պատկերավորման ու արտահայտչական հիմնական միջոցները, բնագրի վրա աշխատելու կարողություններ ձևավորել:
5. Կարողանա ձևավորել գրական թեմաներով շարադրանքներ, ռեֆերատներ, փոխադրություններ գրելու, զեկուցումներով և հաղորդումներով հանդես գալու, գրական-գեղարվեստական հանդեսներ, բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու և դրանք անցկացնելու կարողություններ, խրախուսել ինքնուրույն ստեղծագործական փորձերը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:

**Արդյունք 1.**

Իմանա ուսումնական ծրագրի մեջ ընդգրկված հայ և արտասահմանյան հեղինակների ստեղծագործությունները: Իմանա հայ և այլ ժողովուրդների բանահյուսության հանրահայտ նմուշները և կարողանա համեմատական գնահատականներ տալ:

**Կատարման չափանիշներ.**

ա. ա.կարողանում է ներկայացնել և ուսուցանել նշանավոր հայ և օտարազգի գրողների ստեղծագործությունները:
բ.կարողանում է ձևավորել գրական բնագրերը ընթերցելու, դրանց բովանդակությունը և հիմնական միտքը ընկալելու, ոճական և լեզվական արտահայտչամիջոցները ճանաչելու և քննելու հմտություն:
գ.կարողանում է մշակել հեղինակների մասին կենսագրական տեղեկություններ, փաստեր և այլ նյութեր հավաքելու, համակարգելու և ամփոփելու, լսարանի առջև ելույթ ունենալու հմտություն:
դ. կարողանում է ձևավորել արտադասարանական ընթերցանության նյութերը և այլ գեղարվեստական գրքեր կարդալու ցանկությունը խթանելու, կարդացածի շուրջ կարծիք, տեսակետ, քննական հակիրճ վերլուծություն գրելու կարողություններ:

ե. կարողանում է մշակել բանահյուսության հիմնական ժանրերը՝ հեքիաթ, առակ, առած, ասացվածք, հանելուկ, ավանդություն, լեգենդ, առասպել, դիցաբանական և պատմական զրույցներ, դյուցազներգություն (էպոս), տարբերակելու և յուրաքանչյուրի ժանրային բնորոշումը ընկալելու հմտություններ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ուսուցանում հայ և օտարազգի գրողների ստեղծագործությունները, ձևավորում գրական բնագրերը ընթերցելու, դրանց բովանդակությունը և հիմնական միտքը ընկալելու, ոճական և լեզվական արտահայտչամիջոցները ճանաչելու և քննելու հմտություն, մշակում է հեղինակների մասին կենսագրական տեղեկություններ, փաստեր և այլ նյութեր հավաքելու, համակարգելու և ամփոփելու, լսարանի առջև ելույթ ունենալու հմտություն, ձևավորում արտադասարանական ընթերցանության նյութերը և գեղարվեստական այլ գրքեր կարդալու ցանկությունը խթանելու, կարդացածի շուրջ կարծիք, տեսակետ, քննական հակիրճ վերլուծություն գրելու կարողություններ, մշակում բանահյուսության հիմնական ժանրերը՝ հեքիաթ, առակ, առած, ասացվածք, հանելուկ, ավանդություն, լեգենդ, առասպել, դիցաբանական և պատմական զրույցներ, դյուցազներգություն (էպոս), տարբերակելու և յուրաքանչյուրի ժանրային բնորոշումը ընկալելու հմտություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Արդյունք 2.**

Կարողանա ուսուցանել գրականագիտական –տեսական գիտելիքներ, ձևավորել գրականության տեսության հիմնական հասկացությունների, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերության, արվեստի այլ տեսակների միջև զուգահեռներ անցկացնելու կարողություն:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է ձևավորել գրական սեռերը և ժանրերը տարբերակելու կարողություն, մշակել քնարական սեռի (բանաստեղծություն, պոեմ, բալլադ), պատմողական սեռի (պատմվածք, նորավեպ, վիպակ, վեպ), թատերգության (ողբերգություն, կատակերգություն, դրամա) բնորոշ առանձնահատկությունները ընկալելու հմտություն:
բ.կարողանում է ներկայացնել գրականությունը որպես արվեստի տեսակ, նրա ծագումը, զարգացումը, յուրահատկությունները, գրականության ազգային և համամարդկային բնույթը, դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը, հայ գրականության պատմական զարգացման օրինաչափությունները և փուլերը:
գ.կարողանում է մշակել գրական ուղղությունները և հոսանքները (կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ) տարբերակելու հմտություն:
դ.կարողանում է ձևավորել գրական երկի կառուցվածքային, բովանդակային և գեղագիտական առանձնահատկությունները վերլուծելու, այս կամ այն գրական հերոսին կերպավորելով, գրական երկում ծավալվող դեպքերի, գործողությունների զարգացման սեփական վարկածը առաջադրելով՝ դերային խաղերի մասնակցելու հմտություններ:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ձևավորում գրական սեռերը և ժանրերը տարբերակելու կարողություն, մշակել քնարական սեռի (բանաստեղծություն, պոեմ, բալլադ), պատմողական սեռի (պատմվածք, նորավեպ, վիպակ, վեպ), թատերգության (ողբերգություն, կատակերգություն, դրամա) բնորոշ առանձնահատկությունները ընկալելու հմտություն, մշակում գրական ուղղությունները և հոսանքները (կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ) տարբերակելու հմտություն, ձևավորում կարողանում է ձևավորել գրական երկի կառուցվածքային, բովանդակային և գեղագիտական առանձնահատկությունները վերլուծելու, այս կամ այն գրական հերոսին կերպավորելով, գրական երկում ծավալվող դեպքերի, գործողությունների զարգացման սեփական վարկածը առաջադրելով՝ դերային խաղերի մասնակցելու հմտություններ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Արդյունք 3.**

Կարողանա մշակել գրական երկի բովանդակության ընկալման, ենթատեքստի ըմբռնման, գրական ստեղծագործությունը վերլուծելու, պատկերային համակարգի բացահայտման ունակություններ

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է վերարտադրել գրական բնագրերը ընթերցելու, ստեղծագործությունների բովանդակության իմացությունը և գործողությունների զարգացման ընթացքը, ընկալել ստեղծագործությունների հիմնական գաղափարը, կարողանում է հասկանալ, վերլուծել, կարծիք հայտնել, շարադրել, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն ձևավորել:
բ.կարողանում է ձևավորել գեղարվեստական երկերը մասերի բաժանելու, դրանք վերնագրելու, հարցեր, պլան կազմելու և մշակելու, բառային աշխատանք (անծանոթ բառերի դուրսգրում, բացատրությունների որոնում, հոմանիշային շարքերի կազմում, բառերի թեմատիկ խմբավորում, դարձվածքների և թևավոր խոսքերի առանձնացում, պատկերավոր արտահայտությունների խմբավորում) կատարելու հմտություն:
գ.կարողանում է զարգացնել գրական հերոսների հոգեբանությունը, գործողությունների շարժառիթը հասկանալու, ընկալելու և մեկնաբանելու, ընթերցման ընթացքում նրանց հետ ապրելու հմտություն:
դ.կարողանում է զարգացնել կարդացածը հակիրճ կամ մանրամասնորեն վերաշարադրելու կարողություն՝ զուգորդելով սեփական դատողություններով, եզրահանգումներով, դիտարկելով և մանրամասն վերլուծելով սյուժեի զարգացման ընթացքը, առաջարկելով նոր լուծումներ:
ե. կարողանում է համեմատել և վերլուծել տարբեր գրական երկեր, բացահայտել դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները, ինքնուրույն հետազոտական աշխատանքով բացահայտել գրական երկի կառուցվածքի բովանդակությունը, գործողությունների զարգացման յուրահատկությունները, կարողանում է ընկալել և տեսնել գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները, արժևորել և սեփական գնահատական տալ գրական հերոսին, նախաձեռնել և կազմակերպել գրական երկերի քննարկումներ, գրական բանավեճեր:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ձևավորում գեղարվեստական երկերը մասերի բաժանելու, դրանք վերնագրելու, հարցեր, պլան կազմելու և մշակելու, բառային աշխատանք (անծանոթ բառերի դուրսգրում, բացատրությունների որոնում, հոմանիշային շարքերի կազմում, բառերի թեմատիկ խմբավորում, դարձվածքների և թևավոր խոսքերի առանձնացում, պատկերավոր արտահայտությունների խմբավորում) կատարելու հմտություն, զարգացնում գրական հերոսների հոգեբանությունը, գործողությունների շարժառիթը հասկանալու, ընկալելու և մեկնաբանելու, ընթերցման ընթացքում նրանց հետ ապրելու, կարդացածը հակիրճ կամ մանրամասնորեն վերաշարադրելու կարողություն՝ զուգորդելով սեփական դատողություններով, եզրահանգումներով, դիտարկելով և մանրամասն վերլուծելով սյուժեի զարգացման ընթացքը, առաջարկելով նոր լուծումների հմտություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Արդյունք 4.**

Կարողանա ուսուցանել պատկերավորման ու արտահայտչական հիմնական միջոցները, բնագրի վրա աշխատելու կարողություններ ձևավորել:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ձևավորել գեղարվեստական խոսքի նրբերանգներն ընկալելու, դրանք գրական երկում գտնելու, իմաստային և գեղագիտական արժեքը պարզաբանելու, պատկերավոր արտահայտությունները դուրս գրելու, խմբավորելու, աղյուսակներ կազմելու հմտություն:

բ. կարողանում է ձևավորել պատկերավորման միջոցները (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափազանցություն ) տարբերակելու հմտություն:
գ. կարողանում է ձևավորել հեղինակի վարպետության, լեզվի և ոճի առանձնահատկությունները ընկալելու կարողություն:
դ. կարողանում է զարգացնել բնագրային աշխատանք կատարելու հմտություններ/չափածոյի լեզվաոճական վերլուծություն, հայրենի, քառյակի, գազելի, սոնետի, տրիոլետի տաղաչափության և պատկերային համակարգի վերլուծություն, պատկերավոր արտահայ տությունների դուրսգրում, խմբավորում, քննություն և մեկնաբանում/:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ձևավորում գեղարվեստական խոսքի նրբերանգներն ընկալելու, դրանք գրական երկում գտնելու, իմաստային և գեղագիտական արժեքը պարզաբանելու, պատկերավոր արտահայտությունները դուրս գրելու, խմբավորելու, աղյուսակներ կազմելու, պատկերավորման միջոցները (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափազանցություն) տարբերակելու, հեղինակի վարպետության, լեզվի և ոճի առանձնահատկությունները ընկալելու կարողություն և հմտություն: Զարգացնելու բնագրային աշխատանք կատարելու հմտություններ /չափածոյի լեզվաոճական վերլուծություն, հայրենի, քառյակի, գազելի, սոնետի, տրիոլետի տաղաչափության և պատկերային համակարգի վերլուծություն, պատկերավոր արտահայ տությունների դուրսգրում, խմբավորում, քննություն և մեկնաբանում/ հմտություն:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

**Արդյունք 5.**

Կարողանա ձևավորել գրական թեմաներով շարադրանքներ, ռեֆերատներ, փոխադրություններ գրելու, զեկուցումներով և հաղորդումներով հանդես գալու, գրական-գեղարվեստական հանդեսներ, բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու և դրանք անցկացնելու կարողություններ, խրախուսել ինքնուրույն ստեղծագործական փորձերը:

**Կատարման չափանիշներ.**

ա.կարողանում է զարգացնել գրական երկերի բովանդակության հակիրճ և ծավալուն, մեկնողական և դատողական շարադրանքներ գրելու հմտություն,
բ. կարողանում է զարգացնել երկի հիմնական գաղափարի, գործող անձանց մասին համեմատական, վերլուծական, ստեղծագործական հավելումներով, գրական երկի ինքնատիպ ավարտով շարադրանքներ գրելու, երկի մասին սեփական կարծիք, տեսակետ գրելու կարողություն,
գ.կարողանում է զարգացնել գրական երկի բովանդակության մեջ ստեղծագործական հավելումներ անելու,նոր սկիզբ և ավարտ գտնելու հմտություն, խոսքի գեղարվեստական արտահայտչամիջոցները սեփական շարադրանքում կիրառելու կարողություն,
դ. կարողանում է ձևավորել գրական նյութերով զրույց, բանավեճ, ասուլիս, գրական դատ կազմակերպելու և անցկացնելու հմտություն:
ե. կարողանում է զարգացնել հետազոտական աշխատանք կատարելու հմտություն (պատմողական պոեմի և պատմվածքի, քնարական պոեմի և բանաստեղծության համեմատություն և բնութագրում, պատմվածքի, նորավեպի, վիպակի համեմատական վերլուծություն):
զ. կարողանում է զարգացնել ստեղծագործական աշխատանք կատարելու հմտություններ՝ հորինել նորավեպի դիպաշարի հանգուցալուծման սեփական տարբերակ, որոշակի մանրամասներ ավելացնելով՝ նորավեպի ավարտը դարձնել կանխատեսելի:
է. ըստ առաջադրված նյութի՝ կատարել նորավեպ, պատմվածք, բանաստեղծություն գրելու փորձեր, բեմագրի ստեղծում, վիպակի բեմականացում:
ը.պետք է կազմի թեստեր, հարցարաններ, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ՝ համապատասխան հատկորոշումներով, ստուգել և գնահատել:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է զարգացնում գրական երկերի բովանդակության հակիրճ և ծավալուն, մեկնողական և դատողական շարադրանքներ գրելու հմտություն, երկի հիմնական գաղափարի, գործող անձանց մասին համեմատական, վերլուծական, ստեղծագործական

հավելումներով, գրական երկի ինքնատիպ ավարտով շարադրանքներ գրելու, երկի մասին սեփական կարծիք, տեսակետ գրելու կարողություն, գրական երկի բովանդակության մեջ ստեղծագործական հավելումներ անելու, նոր սկիզբ և ավարտ գտնելու հմտություն, խոսքի գեղարվեստական արտահայտչամիջոցները սեփական շարադրանքում կիրառելու կարողություն, ձևավորելու գրական նյութերով զրույց, բանավեճ, ասուլիս, գրական դատ կազմակերպելու և անցկացնելու հմտություն, զարգացնելու հետազոտական աշխատանք կատարելու հմտություն (պատմողական պոեմի և պատմվածքի, քնարական պոեմի և բանաստեղծության համեմատություն և բնութագրում, պատմվածքի, նորավեպի, վիպակի համեմատական վերլուծություն):

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

Դասախոսություն՝ 4 ժամ
Գործնական՝ 10 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ - 04 09 22

**Մոդուլի նպատակը.**

Մոդուլի նպատակն է ուսանողին գիտելիքներ տալ գրականության զարգացման օրինաչափությունների, նրա հասարակական նշանակության, գրական հիմնական ձևերի ու տեսակների մասին: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կիմանա գրական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների, գրական պատկերների ստեղծման ուղիների մասին, կտարբերակի գրական սեռերն ու տեսակները, կիմանա գեղարվեստական մեթոդների բնույթն ու նշանակությունը:

**Մոդուլի տևողությունը՝** 62 ժամ

Տեսական ուսուցում՝ 26 ժամ
Սեմինար՝ 12 ժամ
Գործնական պարապմունք՝ 24 ժամ

**Մուտքային պահանջները.**

Հայ գրականության նախորդ մոդուլները:

**ՈՒսումնառության արդյունքները.**

1. Կարողանա ներկայացնել գրականության ծագման ու զարգացման օրինաչափությունները:
2. Կարողանա ներկայացնել գեղագիտական հիմնական կատեգորիաները, գեղարվեստական պատկերները:
3. Կարողանա ներկայացնել տաղաչափության հիմունքները:
4. Կարողանա ներկայացնել գեղարվեստական մեթոդի բնույթն ու դրսևորման ձևերը:

**Գնահատման կարգը.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**

Կարողանա ներկայացնել գրականության ծագման ու զարգացման օրինաչափությունները:

**Կատարման չափանիշներ.**

ա.ճիշտ է ներկայացնում գրականության զարգացման օրինաչափությունները,

բ.ճիշտ է ներկայացնում գրականության տեղն արվեստի տեսակների մեջ,
գ.Կարողանում է սահմանել և տարբերել գրական ստեղծագործության կոմպոզիցիան, բովանդակությունը, սյուժեն ու նրա հիմնական մասերը,
դ. ճիշտ է ներկայացնում և կիրառում լեզվի պատկերավորման միջոցները,
ե.ճիշտ է սահմանում գրական սեռերն ու ժանրերը /տեսակները/:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում գրականության զարգացման օրինաչափությունները, գրականության տեղն արվեստի տեսակների մեջ, կիրառում է լեզվի պատկերավորման միջոցները, սահմանում գրական սեռերն ու ժանրերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների գործնական պարամունքների և սեմինարների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՌԻսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 8 ժամ |

Արդյունք 2.

Կարողանա ներկայացնել գեղագիտական հիմնական կատեգորիաները, գեղարվեստական պատկերները:

**Կատարման չափանիշներ.**

ա. գիտի գեղագիտական հիմնական կատեգորիաները,
բ.կարողանում է գրական ստեղծագործություններում տարբերակել դրանք,
գ.տրված ստեղծագործություններում /և արձակ, և չափածո/ կարողանում է որոշել պատկերները, նշել տեսակները, բնույթն ու տիպականությունը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է տարբերակում գեղագիտական հիմնական կատեգորիաները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՌԻսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 4 ժամ |

Արդյունք 3.

Կարողանա ներկայացնել տաղաչափության հիմունքները:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել տաղաչափության տեսակները,
բ. առաջադրված օրինակներում կարողանում է տարբերակել դրանք:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում տաղաչափության տեսակները, առաջադրված օրինակներում ճիշտ է տարբերակում դրանք:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

**Արդյունք 4.**

Կարողանա ներկայացնել գեղարվեստական մեթոդի բնույթն ու դրսևորման ձևերը

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է սահմանել գեղարվեստական մեթոդները,
բ.առաջադրված գրական ստեղծագործություններում տարբերակում է մեթոդները, ներկայացնում դրանց դրսևորման ձևերը:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է սահմանում դեղարվեստական մեթոդները, առաջադրված գրական ստեղծագործություններում տարբերակում է մեթոդները, ներկայացնում դրանց դրսևորման ձևերը:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 6 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀԼԴ 04 09 23

**Մոդուլի նպատակը.**

Կանոնակարգել և խորացանել հայ ժողովրդական բանահյուսության մասին գիտելիքները՝ այդ ամենը բերելով ուսուցման կարողությունների ձեռք բերման

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 32 ժամ |
| Սեմինար՝ | 12 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 64 ժամ |

**Մուտքային պահանջները.**

Հանրակրթական գիտելիքներ:

**ՈՒսումնառության արդյունքները.**

1. Իմանա հեքիաթի՝ որպես բանահյուսության հիմնական ժանրերից մեկի առանձնահատկությունները:
2. Կարողանա բնորոշել առակ,ավանդություն, առասպել, դիցաբանական զրույց, պատմական զրույց ժանրերը:
3. Կարողանա բնորոշել դյուցազներգությունը՝ էպոսը, գիտի նրա պատմական հիմքը:

4. Իմանա հայկական ժողովրդական վիպական երգերը:
5. Կարողանա դասակարգել հայ ժողովրդական երգերը ըստ կիրառության, կատարման ձևի և թեմատիկայի:

Գնահատման կարգը.

Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը

Արդյունք 1.

Իմանա հեքիաթի՝ որպես բանահյուսության հիմնական ժանրերից մեկի առանձնահատկությունները

Կատարման չափանիշներ.

ա. կարողանում է բնորոշել բանահյուսական ժանրը,
բ. տարբերակում է հեքիաթի տեսակները՝կենդանական, կախարդական կամ հրաշապատում և իրապատում հեքիաթներ,
գ. կարողանում է ստեղծագործաբար վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,
դ. տարբերակում է ժողովրդական հեքիաթը,հեքիաթի գրավոր մշակումը, հեղինակային հեքիաթը, նշում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները,
ե. կարողանում է բացատրել հեքիաթի լեզվական առանձնահատկությունները:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է բնորոշում բանահյուսական ժանրը, տարբերակում հեքիաթի տեսակները, ստեղծագործաբար վերարտադրում է հեքիաթի բովանդակությունը, տարբերակում է ժողովրդական հեքիաթը, հեքիաթի գրավոր մշակումը, հեղինակային հեքիաթը, նշում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, բացատրում է հեքիաթի լեզվական առանձնահատկությունները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների գործնական պարամունքների և սեմինարների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

Արդյունք 2.

Կարողանա բնորոշել առակ,ավանդություն, առասպել, դիցաբանական զրույց, պատմական զրույց ժանրերը:

Կատարման չափանիշներ.

ա. կարողանում է բնորոշել առակը. որևէ օրինակի հիման վրա բացատրել այլաբանությունը և բարոյախրատական կողմը,
բ. տարբերակում է արձակ և չափածո առակները,նշում է առակի լեզվական առանձնահատկությունները,
գ. կարողանում է օրինակներ բերել հայկական և հունական դիցաբանական զրույցներից,
դ. կարողանում է բացատրել առասպելի պատմական հիմքը, բերում է հայկական և հունական առասպելներից օրինակներ,
ե. կարողանում է ներկայացնել հայկական դիցարանը,
զ. կարողանում է ներկայացնել առածի և ասացվածքի ժանրային բնութագրերը՝ նշելով դրանց տարբերությունները,
է. կարողանում է տալ հանելուկների ժանրային բնութագիրը, նշելով ծագման և զարգացման փուլերը,
ը. նշում է հանելուկների հիմնական թեմատիկաները՝բերելով օրինակներ յուրաքանչյուր տեսակից:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է բնորոշում առակը, որևէ օրինակի հիման վրա բացատրում այլաբանությունը և բարոյախրատական կողմը, տարբերակում արձակ և չափածո առակները, նշում առակի լեզվական առանձնահատկությունները, օրինակներ բերում հայկական և հունական դիցաբանական զրույցներից, բացատրում առասպելի պատմական հիմքը, բերում հայկական և հունական առասպելներից օրինակներ, ներկայացնում հայկական դիցարանը, ներկայացնում առածի և ասացվածքի ժանրային բնութագրերը՝ նշելով դրանց տարբերությունները, ներկայացնում հանելուկների ժանրային բնութագիրը՝ նշելով ծագման և զարգացման փուլերը, հիմնական թեմատիկան ՝բերելով օրինակներ:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 12 ժամ |

**Արդյունք 3.**

Կարողանա բնորոշել դյուցազներգությունը՝ էպոսը, գիտի նրա պատմական հիմքը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել «Սասնա ծռեր» էպոսի գրառման և ուսումնասիրման պատմությունը, էպոսի ստեղծման պատմական ժամանակաշրջանը, տարբերակներն ու յուրաքանչյուրի առանձնահատկությունը,
բ. կարողանում է շարադրել էպոսի չորս ճյուղերի սյուժետային գիծը,
գ. կարողանում է բնութագրել էպոսի հիմնական կերպարներին,
դ. կարողանում է բերել օրինակներ էպոսի գրական մշակումներից՝ մատնանշելով գրական մշակման և համահավաք բնագրի լեզվաոճական տարբերությունները:

**Գնահատման միջոց.**

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում «Սասնա ծռեր» էպոսի գրառման և ուսումնասիրման պատմությունը, էպոսի ստեղծման պատմական ժամանակաշրջանը, տարբերակներն ու յուրաքանչյուրի առանձնահատկությունը, շարադրում էպոսի չորս ճյուղերի սյուժետային գիծը, բնութագրում էպոսի հիմնական երպարներին,
բերում օրինակներ էպոսի գրական մշակումներից՝ մատնանշելով գրական մշակման և համահավաք բնագրի լեզվաոճական տարբերությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ.**

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

**ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

**Արդյունք 4.**

Իմանա հայկական ժողովրդական վիպական երգերը:

**Կատարման չափանիշներ.**

ա. կարողանում է ներկայացնել «Մոկաց Միրզա» վիպերգը՝ նշելով գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական արժանիքները,
բ. կարողանում է ներկայացնել «Կարոս խաչ» վիպերգը, նրա վիպական և քնարական տարրերի հարաբերությունը,
գ. կարողանում է ներկայացնել «Ասլան աղա» վիպերգը, նրա գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական առանձնահատկությունները:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում «Մոկաց Միրզա» վիպերգը՝ նշելում գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական արժանիքները, ներկայացնում «Կարոս խաչ» վիպերգը, նրա վիպական և քնարական տարրերի հարաբերությունը, ներակայացնում «Ասլան աղա» վիպերգը, նրա գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական առանձնահատկությունները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Սեմինար՝ | 2 ժամ |
| Գործնական՝ | 10 ժամ |

Արդյունք 5.

Կարողանա դասակարգել հայ ժողովրդական երգերը ըստ կիրառության, կատարման ձևի և թեմատիկայի:

Կատարման չափանիշներ.

ա. կարողանում է բնութագրել պաշտամունքային և տոնական-օրացուցային երգերը,բերել օրինակներ,
բ. կարողանում է բնութագրել հարսանեական և սգո երգերը `նշելով դրանց պատմական զարգացումը, առանձնահատկությունները,
գ. կարողանում է բնութագրել աշխատանքային երգերը, աշխատավորի քնարական կերպարը,
դ. կարողանում է բնութագրել պանդխտության երգերը `նշելով տարբեր մոտիվները և գաղափարական բովանդակությունը,
ե. կարողանում է բնութագրել ռազմի երգերը՝ նշելով տարբեր տեսակները,
զ. կարողանում է բնութագրել սիրո երգերը՝ նշելով հիմնական տեսակները,մոտիվները, կատարման եղանակները,
է. կարողանում է տարբերակել գուսանական երգերի հիմնական տեսակները՝ էպիկական և քնարական,բնութագրելով դրանց տաղաչափական արվեստը և պատկերավորման միջոցները:

Գնահատման միջոց.

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական եթե ուսանողը ճիշտ է բնութագրում պաշտամունքային և տոնական-օրացուցային երգերը, բերում օրինակներ, բնութագրում հարսանեական և սգո երգերը `նշում դրանց պատմական զարգացումը, առանձնահատկությունները, բնութագրում աշխատանքային երգերը, աշխատավորի քնարական կերպարը, բնութագրում պանդխտության երգերը `նշելով տարբեր մոտիվները և գաղափարական բովանդակությունը, բնութագրում ռազմի երգերը՝ նշելով տարբեր տեսակները, բնութագրում սիրո երգերը՝ նշելով հիմնական տեսակները,մոտիվները, կատարման եղանակները, տարբերակում գուսանական երգերի հիմնական տեսակները՝ էպիկական և քնարական,բնութագրելով դրանց տաղաչափական արվեստը և պատկերավորման միջոցները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Ուսուցումը կատարվում է դասախոսությունների և սեմինար-պարամունքների միջոցով:
Անհրաժեշտ գրականություն՝

ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակ.

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 10 ժամ |
| Սեմինար՝ | 4 ժամ |
| Գործնական՝ | 20 ժամ |